



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՏԱԽԱՂԱՏՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 104 2018

ՀՀ ԳՐԱՏԱԽԱՂԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

Հանձնված է արտադրության՝ 13.04.2018թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Շաղկալը՝ 4,75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն աշխատանքային քննարկում է ունեցել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրոյի» ղեկավարության և փորձագետների հետ..... 3

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հռիփսիմե Խաչատրյան Անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանությունն ըստ կայունության հատկանիշի 5
Արայիկ Ասլանյան Կողոպուտի միջոցով գույքի հափշտակության քրեաիրավական որակման որոշ առանձնահատկություններ 11
Գուրգեն Քոթանջյան Որոշ նկատառումներ երեխային պոռնկության ներգրավելու հանցակազմի վերաբերյալ 20

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արման Ստեփանյան Սահմանադրության արդյունավետության գնահատումը որպես սահմանադրական մշտադիտարկման տեսակ 24
Карен Конджакулян, Аршак Арутюнян Правовые основы функционирования правительства в законотворческой деятельности (Сравнительный анализ) 29

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Զարինե Ազիզյան Ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի հիփոթեքի արգելքը 33
Շուշանիկ Ղուկասյան Պատասխանատվությունից ազատվելու հիմքերը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում 38

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարեն Հակոբյան «Հոգատարության սկզբունքը»՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր 44
Թամարա Գրիգորյան Հարկային վարչարարության կատարելագործման հիմնական ուղղությունները 50

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (ՀՈՒՄԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ)

Աննա Հակոբյան Պրետորական էդիկտի նշանակությունը, առանձնահատկությունները իրավակարգավորումների ոլորտում..... 56

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Գրիգոր Ներսիսյան Ֆինանսական իրավունքի արդի հիմնախնդիրները..... 61

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts 66

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները..... 76

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ Է ՈՒՆԵՅՆԵԼ ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՃԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ» ԴԵՎՎԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՐՃԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն այցելել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ: Այցի նկատակն էր



ծանոթանալ հանրապետության խոշորագույն փորձագիտական կենտրոնի տեխնիկական հագեցվածության, քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից նշանակվող փորձաքննությունների լիարժեքության և ամբողջականության ապահովմանը միտված տեխնոլոգիական և մեթոդոլոգիական զարգացման ներկայիս վիճակին և հեռանկարներին, ինչպես նաև Բյուրոյի ղեկավարության և փորձագետների հետ քննարկելու քրեական գործերով նշանակված փորձաքննությունների առավել շոշափելի արդյունքների ապահովմանը խոչընդոտող գործոնների վերացմանը վերաբերող հիմնախնդիրներն ու անելիքները:

ՀՀ գլխավոր դատախազը շրջել է Բյուրոյի ստորաբաժանումներով, տեղում հետևել հատկապես ձեռք բերված նոր սարքավորումների միջոցով իրականացվող փորձաքննությունների ընթացքին, կենտրոնի փորձագետների հետ զրուցել առանձին նեղ ոլորտային ուղղություններով փորձաքննությունների առանձնահատկություններից: Արթուր Դավթյանին հետաքրքրել է, մասնավորապես, ՀՀ դատախազության անմիջական նախաձեռնությամբ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ձեռք բերված և «Փորձաքննությունների ազգային

բյուրոյին» հանձնված՝ ծառի հատման վաղեմությունը որոշող և կոճղի հետ փայտանյութի նույնականացումն ապահովող՝ դենդրոքրոնոլոգիական փորձաքննության սարքի շահագործման արդյունավետությունը:

Բյուրոյի աշխատակիցների և փորձագետների հետ հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ դժվար է գերազնահատել փորձագետների դերակատարումը քրեական գործերով լրիվ, ամբողջական և բազմակողմանի քննության ապահովման, հանցագործությունների բացահայտման վերջնարդյունքում արդարադատության իրականացման տեսանկյունից: Դրան զուգահեռ, սակայն, Գլխավոր դատախազը շեշտել է նաև ինչպես առանձին գործերով, այնպես էլ իրենց ունեցած քրեադատավարական դերակատարության, առաքելության նկատմամբ խորը պատասխանատվության զգացումը՝ նկատի ունենալով որ շատ դեպքերում հենց փորձաքննությունների արդյունքներն են բեկումնային նշանակություն ունենում քրեական գործերի արդյունքների համար՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով:

«Ողջ քրեական հետապնդման ոլորտն անկարող է ազնիվ, օբյեկտիվ քննություն իրականացնել, եթե փորձագետներն իրենց եզրակացությունները կազմելիս չեն գտնվում բավարար չափով անաչառ և չեն մնում զուտ մասնագիտական գնահատականների սահմաններում: Հնարավոր է ապահովված լինել գերժամանակակից սարքավորումներով, սակայն դրանք որևէ արժեք չունեն, եթե փորձագետն առաջնորդվի՝ բացառապես նեղ անձնական կամ ինչինչ այլ շահերից, գործոններից ելնելով»: Հիշեցնելով կոռուպցիայի դեմ պայքարում որդեգրված մոտեցումները, որոնց գործադրումը որոշ դեպքերում հանգեցրել է նաև քրեական վարույթ իրականացնող մարմինների ներկայացուցիչների նկատմամբ քրեական հետապնդման հարուցման, ՀՀ գլխավոր դատախազը հորդորել է մնալ բացառապես փորձաքննու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

թյան օբյեկտի հետազոտման շրջանակում և հնարավոր կողմնակի ճնշումների գործադրման անգամ փորձերի դեպքում դրսևորել հաստատակամություն ու անմիջապես տեղյակ պահել պատկան մարմիններին:



Արթուր Դավթյանը կարևորել է նաև փորձագետների մասնագիտական կարողությունների և որակական հատկանիշների շարունակական, համաշխարհային տեխնոլոգիական և մեթոդաբանական միտումներին համահունչ զարգացնելու, ինչպես նաև փորձաքննության լիարժեքությունն ու ճշգրտությունն ապահովելուն միտված սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ առանձնահատուկ նախաձեռնողականություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: «Բյուրոյի կողմից ցանկացած այնպիսի նախաձեռնությանը, որն ուղղված կլինի փորձաքննությունների որակի և որոշակիության բարձրացմանը, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեն քննության անաչառության հա-

մար, նույնիսկ եթե դրանք վերաբերում են տեխնիկապես զինմանը, պատրաստ ենք աջակցելու մեր իրավասության սահմաններում», – ասել է ՀՀ գլխավոր դատախազը:

Բացի դրանից՝ Արթուր Դավթյանը շեշտել է նաև կրիմինոլոգիական հետազոտությունների իրականացումը, որն էական նշանակություն կունենա քրեական քաղաքականությունը ճիշտ և նպատակային ուղղությամբ զարգացնելու առումով:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Հովսեփյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ գլխավոր դատախազին ինչպես իրենց աշխատանքի և խնդիրների լուծման նկատմամբ դրսևորած ուշադրության, այնպես էլ որդեգրված ուղղություններով կենտրոնի կողմից իրականացվող փորձաքննությունների արդյունավետության, ճշգրտության մակարդակը բարձրացնելու հարցում դատախազության դրսևորած շահագրգռության համար:

Նա տեղեկացրել է, որ աշխատանքներ են իրականացվում համաշխարհային փորձագիտական հեղինակավոր կենտրոնների և կառույցների հետ համագործակցությունն ընդլայնելու, նրանց ներուժը Հայաստանում կիրառելու, արտերկրում կենտրոնի փորձագետների մասնագիտական կարողությունները զարգացնելու, նշանակվող փորձաքննությունների ժամանակակից գիտափորձնական մեթոդների, գիտատեխնիկական միջոցների մշակման, փորձարկման և ներդրման ուղղությամբ:



ՀՈՒՓՍԻՄԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի
և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր,
Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՅԱՎՈՐ ԽՄԲԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԸՍՏ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇԻ**

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման համար կարևոր է անչափահասների հանցավոր խմբերի մանրամասն ուսումնասիրությունը:

Այս հետազոտության շրջանակում կուսումնասիրենք անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանությունն ըստ կայունության հատկանիշի:

Հանցավոր խմբի կայունություն ասելով՝ Լ.Մ. Պրոզումենտովը հասկանում է խմբի ունակությունը՝ պահպանելու գործառության կապերի (և, հետևաբար, խմբի կողմից իրագործվող նպատակների) ստեղծված համակարգը՝ խումբը փոփոխելուն (կամ լուծարելուն) ուղղված արտաքին կամ ներքին (խմբի առանձին անդամներից բխող) ազդեցությունների պայմաններում: Հենց այս հատկանիշն է ավելի հաճախ օգտագործվում մյուս քրեաբանների կողմից որպես դասակարգման հիմք: Կայունությունը նաև խմբում ձևավորված կառուցվածքային (գործառության) կապերի հետևանք է, ինչն էլ պայմանավորված է առաջին հերթին նրա ինտեգրման և դիֆերենցիացիայի կառուցվածքով, և երկրորդ՝ նրա անդամների անհատական նշանակությամբ, այսինքն՝ անհատապես ներկայանալու, գործելու միջոցով: Ըստ նրա՝ կայունությունը հանցավոր խմբի արտաքին բնութագիրն է, որը փոփոխվում է խմբում ընթացող փոփոխությունների հետ:

- Կայունության օբյեկտիվ ցուցանիշներն են՝
- ժամանակահատվածը, որի ընթացքում խումբը կատարել է հանցագործություններ,

- հանցագործությունների (ինչպես հանցավոր խմբի առանձին անդամների, այնպես էլ խմբի կողմից կատարված) կատարման ինտենսիվությունը («քրեական ակտիվություն»)
- հանցավոր խմբերի հարաբերականորեն կայուն կազմը¹:

Այստեղ մենք համակարծիք չենք Լ.Մ. Պրոզումենտովի տեսակետին, որ կայունությունը խմբի արտաքին բնութագիրն է: Մեր կարծիքով՝ կայունությունը ձևավորվում է խմբի անդամների միջանձնային հարաբերությունների արդյունքով, հետևաբար՝ դա ներքին բնութագիր է:

Խմբի կայունության բնութագիրը իր որոշումներից մեկում տվել է ՀՀ վճռաբեկ դատարանը. «Կազմակերպված խմբի կայունությունը դրսևորվում է խմբի ամրությամբ, անդամների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությամբ, խմբի անդամների ջանքերի համաձայնեցվածությամբ, խմբի մեկ կամ մի քանի անդամի կողմից մյուսներին ղեկավարելով, հատուկ՝ խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմային նորմերի առկայությամբ»²:

Սակայն մենք կարծում ենք, որ կայուն խումբն ավելի լայն հասկացություն է, քան կազմակերպված խումբը: Ելնելով վերոգրյալից՝ մենք անչափահասների հանցավոր խմբերն ըստ կայունության հատկանիշի կդասակարգենք երեք տիպի՝ անկայուն, կայուն և կազմակերպված:

Առաջին տիպը՝ անչափահասների **անկայուն** հանցավոր խմբերն են: Անչափահասների այս տիպի հանցավոր խմբերի անկայուն բնույթը ցույց է տալիս նրանց կենսագործունեության

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Տե՛ս Прокументов Л.М. Групповая преступность несовершеннолетних и ее предупреждение: дис. ... докт. юрид. наук: 12.00.08.– Томск, 2001, էջ 139:
² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը 2011թ. մայիսի 11-ի ԼԴ/0136/01/10 գործի վերաբերյալ:

ոչ նշանակալից ժամանակահատվածը և այս խմբերի մասնակիցների կողմից կատարված հանցագործությունների հարաբերականորեն ոչ մեծ քանակը: Դրա հետ մեկտեղ՝ անչափահասների այս տիպի խմբերի կողմից կատարված հանցագործությունների ճնշող մեծամասնությունը այն հանցագործություններն են, որոնք հիմնականում ունեն իրավիճակային բնույթ: Դրանք հիմնականում ըստ բնակավայրի տարերայնորեն, ինքնըստինքյան ձևավորված ոչ ֆորմալ խմբեր են, որոնց բնութագրական են աննպատակ ժամանցը, իրավիճակային հակահասարակական վարքագիծը, համակարգչային և մոլեխաղերը, հարբեցողությունը: Նման խմբերի հիմնական գործունեությունը շփումն է, որի հիմքում ընկած է անբովանդակ ժամանցը: Հետազոտման արդյունքները թույլ են տալիս խոսել այս խմբերի հանցավոր գործունեության կազմակերպման ցածր մակարդակի մասին: Այսինքն՝ այս խմբերին բնութագրական են հանցավոր գործունեության կարճ ժամանակահատվածը, նրանց կողմից կատարված հանցագործությունների ոչ մեծ քանակը, փոքր խմբերի մեծ տեսակարար կշիռը:

Անչափահասների հանցավոր խմբերի երկրորդ տիպը **կայուն** խմբերն են, որոնք ստեղծվել են նախապես պլանավորած հանցագործություններ կատարելու համար: Ի տարբերություն նախորդի՝ ունեն զարգացման ավելի բարձր մակարդակ, և այս տիպը նախորդից տարբերվում է ոչ միայն քանակական (մասնակիցների համեմատաբար մեծ քանակ, գոյատևման և հանցավոր գործունեության առավել երկար ժամանակահատված), այլև որակական առանձնահատկություններով (համեմատաբար հանցագործությունների ավելի շատ կատարում, դրանց բնույթի փոփոխություն, անչափահասների վրա առավել ուժեղ ներգործություն և այլն):

Անչափահասների կայուն հանցավոր խմբերի զարգացումը տեղի է ունենում որոշակի փուլերով, աստիճանաբար փոխարինվող հարաբերություններով, հասարակ շփումներից մինչև հանցագործությունների կատարում: Այսինքն՝ աստիճանաբար շփումը ձեռք է բերում այլ

բնույթ, խումբը որոշում է իր ներքին կառուցվածքը, համաձայնեցնում է գործողությունները, ձևավորվում են խմբային նորմերը, որոնք ընդհանրական հայացքների և հետաքրքրությունների շնորհիվ խումբը դարձնում են կայուն՝ պրոֆիլակտիկ ներգործության հանդեպ³:

Կայուն խմբերին բնութագրական են հանցավոր գործունեության հարաբերականորեն երկար ժամանակահատվածը՝ մի քանի ամսից մինչև տարի և երբեմն էլ ավելի, նրանց կողմից կատարված հանցագործությունների համեմատաբար մեծ քանակը՝ նախորդ տիպի հետ համեմատած:

Անչափահասների հանցավոր խմբերի երրորդ տիպը **կազմակերպված** հանցավոր խմբերն են:

Նախ՝ կանգ առնենք հանցավոր կազմակերպված խմբի տարբերակիչ հիմնական հատկանիշների վրա, որոնք պետք է դիտարկել որպես ընդհանուր կազմակերպված հանցավորության սկզբնական փուլ: Իրավաբանական գրականության մեջ մշակվել են կազմակերպված հանցավոր խմբի որոշակի հատկանիշներ.

1. Խմբի անդամների կայունությունը.

2. Խմբում սեփական հայացքների, վարքագծի նորմերի և արժեքային կողմնորոշումների մշակումը, որոնք պահպանվում են խմբի բոլոր անդամների կողմից.

3. Հստակ ձևավորված հիերարխիկ կառուցվածքը, այսինքն՝ խմբի ներսում ընդգծվում են խմբի լիդերի անձը, կազմակերպիչների կամ ղեկավարների խումբը, որոնց հարում են խմբի առավել ակտիվ անդամները («հեղինակությունները»), որոնց էլ հետևում են շարքային անդամները.

4. Խմբում գործառության կառուցվածքի առկայությունը, որը հիմնված է հանցավոր խմբերի անդամների տարբերակված դերերի վրա՝ կապված կազմակերպված հանցագործության կատարման հետ, այսինքն՝ կազմակերպված հանցավոր խմբում հստակ բաշխված են դերերը. խմբի անդամների մի մասը մասնակցում է հանցագործությունների նախապատրաստմանը, մյուսներն անմիջականորեն կատարում են հանցագործությունը, երրորդ-

³ Ст'у Терехова О.Н. Групповая преступность несовершеннолетних и ее предупреждение подразделениями по делам несовершеннолетних органов внутренних дел: дис. ... канд. юрид. наук: 12.00.08.– Красноярск, 2005, էջ 36:

ներն ապահովում են գողոնի պահպանումը, փոխադրումը և սպառումը.

5. Հանցավոր եկամուտների տիրապետման տարբերակված կարգը: Այստեղ եկամուտները յուրացվում են՝ խմբի կառուցվածքում անդամների գրաված դիրքից կախված, այսինքն՝ լիդերը վերցնում է առյուծի բաժինը, նրան մոտ գտնվողները ստանում են ավելին, քան խմբի շարքային անդամները.

6. Խմբում հատուկ դրամական ֆոնդի՝ «բյուջեի» առկայությունը, որին տիրապետում է լիդերը: Այս ֆոնդի գումարներն օգտագործվում են պաշտոնատար անձանց կաշառելու, ազատագրկման վայրերում գտնվողների և նրանց ընտանիքի անդամների համար.

7. Բացահայտվելուց և մեղավորներին պատասխանատվության ենթարկելուց պաշտպանությանը նպատակաուղղված միջոցների ձեռնարկումը⁴:

Ըստ Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիայի⁵ 2-րդ հոդվածի (ա) կետի՝ «կազմակերպված հանցավոր խումբ» նշանակում է երեք և ավելի անձանցից կազմված կառուցվածքայնորեն ձևավորված խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և համաձայնեցված գործում է մեկ կամ մի քանի լուրջ հանցագործություններ կամ այնպիսի հանցագործություններ կատարելու նպատակով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան՝ այն հաշվով, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանա ֆինանսական կամ այլ նյութական շահ:

Ըստ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի՝ կազմակերպված հանցավոր խումբը բնորոշվում է որպես հանցավոր կազմակերպություն: Նախագծի համաձայն՝ հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանք կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից:

Հանցանքը համարվում է հանցավոր կազ-

մակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

Կազմակերպված խմբին բնորոշ հիմնական առանձնահատկություններն առանձնացրել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանն իր վերոնշյալ որոշման մեջ՝ մեկնաբանելով գործող ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածը, որի համաձայն՝ դրանք են.

1. հանցանքի կատարմանը երկու կամ ավելի անձի մասնակցությունը,

2. մասնակից անձանց միջև առկա ամուր սուբյեկտիվ կապը, հանցանքը համատեղ կատարելու վերաբերյալ նախապես ձեռք բերված համաձայնությունը,

3. հանցանքի կատարումը խմբի մեկ կամ մի քանի անդամի կողմից՝ այն պայմաններում, երբ խմբի մյուս անդամները կազմակերպել, դրդել կամ օժանդակել են հանցանքի կատարումը,

4. հանցանքը համատեղ, միասնական ջանքերով կատարելը,

5. յուրաքանչյուր անձի՝ հանցանքը համատեղ կատարելուն ուղղված դիտավորությունը,

6. յուրաքանչյուրի գործողության համաձայնեցվածությունը մյուսի գործողության հետ, ինչն արտացոլում է հանցանքի կատարման վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի տեղեկացվածությունը⁶:

Մեր իրականացրած հետազոտության ընթացքում անչափահասների հանցավոր խմբերը կազմակերպված հանցավոր խմբերի տիպին դասելու համար որպես չափանիշ առանձնացրել ենք 3 և ավելի անձանց համատեղ հանցավոր գործունեությունը, որի դեպքում հստակ երևում են խմբի կառուցվածքը, լիդերի առկայությունը, խմբի զինվածությունը, հանցավոր գործունեության հարաբերականորեն երկար ժամանակահատվածը, կատարած հանցագործությունների ծանրության աստիճանը:

⁴ St' u Organizovannaya prestupnost' / Pod red. A.I. Dolgovoy, S.B. Dyakova. M. 1989. C. 8-11; Быков В. Что же такое организованная преступная группа // Российская юстиция. 1995. №19, էջ 41-42:

⁵ Կոնվենցիան ընդունվել է 1957թ. դեկտեմբերի 13-ին, ՀՀ-ն համար ուժի մեջ է մտել 2003թ. սեպտեմբերի 29-ին// <http://www.arlis.am>, վերջին այցելություն 20.02.2018թ.

⁶ St' u ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. մայիսի 11-ի LԴ/0136/01/10 գործի վերաբերյալ:

Մենք վերլուծությունը կիրականացնենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 24.06.2016 թվականին ստացված ՀՀ դատական դեպարտամենտի Ե-4102 գրությամբ տրամադրված 2010-2015 թվականների քրեական գործերի ցանկի հիման վրա www.datalex.am կայքից վերցրած փորձառնական նյութերի ուսումնասիրությամբ:

Քրեական գործերի վերլուծության համաձայն՝ նշված ժամանակահատվածում անչափահասների հանցավոր այդ խմբերն ըստ այս տիպաբանության ունեն հետևյալ պատկերը (տես աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Տարիներ	2010	2011	2012	2013	2014	2015
Անչ. հանցավոր խմբերի քանակ	38	54	24	39	41	31
անկայուն խմբերի տեսակարար կշիռ	71,1%	87,0%	70,8%	82,1%	70,7%	74,1%
կայուն խմբերի տեսակարար կշիռ	26,3%	11,1%	33,3%	17,9%	29,3%	22,6%
կազմակերպված խմբերի տեսակարար կշիռ	2,6%	1,9%	0%	0%	0%	0%

Այսպես, ինչպես տեսնում ենք՝ 2010-2015 թվականների ընթացքում ՀՀ անչափահասների հանցավոր խմբերի կազմում գերակշռում են անկայուն հանցավոր խմբերը, որոնք միջին հաշվարկով կազմում են 76,0%: Կայուն խմբերի տեսակարար կշիռը միջին հաշվարկով կազմում է 23,4%: Դիտարկվում է անչափահասների հանցավոր կայուն խմբերի նվազման միտում: Ինչ վերաբերում է անչափահասների

կազմակերպված հանցավոր խմբերին՝ նշված ժամանակահատվածում բացահայտվել է ընդամենը երկու խումբ, որը միջին հաշվարկով կազմում է 0,8 %:

Անչափահասների հանցավոր խմբերի անկայուն տիպն ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 2).

Աղյուսակ 2

Տարի	Անչ. հանց. անկայուն խմբերի քանակ	անկայուն հանց. խմբերում փոքր խմբերի տեսակարար կշիռ	անկայուն հանց. խմբ. մեծ խմբերի տեսակարար կշիռ	անկայուն հանց. խմբերում խառը խմբերի տեսակարար կշիռ	անկայուն հանց. խմբերում միայն անչափահասներից բաղկացած խմբերի տեսակարար կշիռ
2010	26	88,5%	11,5%	76,9%	23,1%
2011	47	83,0%	17,0%	59,6%	40,4%
2012	17	82,4%	17,6%	76,5%	23,5%
2013	32	84,4%	15,6%	62,5%	37,5%
2014	29	96,6%	3,4%	65,5%	34,5%
2015	23	87,0%	13,0%	52,2%	47,8%

Մեր իրականացրած վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ անչափահասների հանցավոր անկայուն տիպի խմբի կազմում առավել տարածված են փոքր խմբերը, որոնք միջին հաշվարկով նշված ժամանակահատվածում կազմել են 87,0%, իսկ անչափահասների հանցավոր խառը խմբերի տեսակարար կշիռը՝ 65,5%: Այս տիպի խմբերում մեկ հանցագործություն կատարած խմբերը կազմում են 74,1%, երկու հանցագործություն՝ 15,5%, իսկ երեք և ավելի՝ 10,3%: Անկայուն խմբերի հանցավոր

գործունեության մեջ գողությունների տեսակարար կշիռը կազմում է 66,1%, խուլիգանություններինը՝ 10,3%, ավազակություններինը՝ 6,3%, կողոպուտներինը՝ 3,4%, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ (ՀՀ ՔՕ 266, 268 հոդվածներ) հանցագործություններինը՝ 3,4%, մարդուն առևանգելը (ամուսնության նպատակով աղջիկ փախցնելը)՝ 2,3%, իսկ մնացած հանցագործություններին՝ 0,6-12%: Այս խմբերը գոյատևել են մի քանի օրից մինչև առավելագույնը երկու ամիս ժամանակահատված, հիմ-

նականում ձևավորվել են բնակության և ուսման վայրում:

Այսպիսով՝ վերլուծության արդյունքով կարող ենք եզրահանգել, որ անչափահասների հանցավոր անկայուն տիպի խմբերի հանցավոր գործունեությանը բնորոշ է կազմակերպվածության ցածր մակարդակը, 1-2 հանցագործության կատարումը և, որպես կանոն՝ հան-

ցակցության պարզ ձևը, այսինքն՝ անչափահասները հանցանք կատարելիս հիմնականում հանդես են գալիս որպես համակատարողներ:

Անչափահասների հանցավոր խմբերի կայուն տիպն ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Տարի	Անչ. հանց. կայուն խմբերի քանակ	կայուն հանց. խմբերում փոքր խմբերի տեսակարար կշիռ	կայուն հանց. խմբ. մեծ խմբերի տեսակարար կշիռ	կայուն հանց. խմբերում խառը խմբերի տեսակարար կշիռ	կայուն հանց. խմբերում միայն անչափահասներից բաղկացած խմբերի տեսակարար կշիռ
2010	11	72,7%	27,3%	54,5%	45,5%
2011	6	50,0%	50,0%	33,3%	66,7%
2012	7	42,9%	57,1%	57,1%	42,9%
2013	7	57,1%	42,9%	71,4%	28,6%
2014	12	33,3%	66,7%	83,3%	16,7%
2015	8	62,5%	37,5%	87,5%	12,5%

Մեր իրականացրած վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ անչափահասների հանցավոր կայուն խմբերի կազմում անչափահասների հանցավոր փոքր և մեծ խմբերի տարածվածությունը խիստ անհամաչափ է, քանի որ մի տարի փոքր խմբերն են գերակշռում, իսկ մյուս տարին՝ մեծ: Փոքր խմբերի տեսակարար կշիռը նշված ժամանակահատվածում միջին հաշվարկով կազմել է 61,6%, իսկ մեծ խմբերինը՝ 46,9%:

Անչափահասների կայուն հանցավոր խմբերի մեջ առավել տարածված են խառը խմբերը, որոնց տեսակարար կշիռը միջին հաշվարկով կազմել է 64,5%, իսկ միայն անչափահասներից բաղկացած հանցավոր խմբերի տեսակարար կշիռը՝ 35,5%: Վերջին տարիներին նկատվում է միայն անչափահասներից բաղկացած հանցավոր կայուն խմբերի նվազման միտում և, դրան

զուգահեռ՝ խառը խմբերի կայունացման միտում: Ինչ վերաբերում է կայուն խմբերի հանցավոր գործունեությանը՝ նրանց կողմից կատարված հանցագործությունների քանակը հաճախ տասնյակից անցնում է: Հանցագործությունների մեջ մեծ է գողությունների տեսակարար կշիռը, որը կազմում է 82,3%, իսկ մյուս հանցագործություններինը բավականին քիչ է, մասնավորապես՝ ավազակություններինը՝ 9,8%, կողոպուտներինը՝ 3,9%: Այս խմբերը գոյատևել են մի քանի ամսից մինչև տարի և ավելի ժամանակահատված: Հիմնականում կազմված են եղել 3-4 հոգուց, որոնք կազմում են կայուն խմբերի 52,9%:

Անչափահասների հանցավոր խմբերի կազմակերպված տիպն ունի հետևյալ պատկերը (տես աղյուսակ 4).

Աղյուսակ 4

Տարի	խմբերի քանակ	փոքր խմբերի տեսակարար կշիռ	մեծ խմբերի տեսակարար կշիռ	խառը խմբերի տեսակարար կշիռ	միայն անչափահասներից բաղկացած խմբերի տեսակարար կշիռ
2010	1	100%	0	100%	0
2011	1	0	100%	100%	0
2012 – 2015	0	0	0	0	0

Նշված ժամանակահատվածում ՀՀ-ում մեր իրակացրած հետազոտության ընթացքում անչափահասների հանցավոր խմբերի մեջ առանձնացրել ենք անչափահասների կազմակերպված հանցավոր երկու խումբ: Երկուսն էլ խառը խումբ են, մեկը՝ 3 հոգուց բաղկացած, իսկ մյուսը՝ 4: Երկու խումբն էլ իրականացրել են մի շարք ավազակություններ, իսկ մեկը՝ նաև զենքի ապօրինի շրջանառություն: Մի խումբը գործել է մոտ երեք ամիս, իսկ մյուսը՝ երկու:

Մեր առանձնացրած յուրաքանչյուր խումբ բնութագրվում է հասարակական վտանգավորության որոշակի աստիճանով: Պարզ է, որ անկայուն տիպի անչափահասների խմբերի հասարակական վտանգավորության աստիճանը ավելի ցածր է՝ կայուն և կազմակերպված տիպի խմբերի հետ համեմատած, իսկ կայուն տիպի խումբը ցածր՝ կազմակերպված տիպի հետ համեմատած: Այսպես՝ անչափահասների կայուն տիպի հանցավոր խմբերի հասարակական վտանգավորության առավել բարձր աստիճանը անկայուն տիպի խմբերի հետ համեմատած, այն է, նախ՝ որ նրա անդամները կատարում են, որպես կանոն, առավել ծանր հանցագործությունները, երկրորդ՝ դրանք իրենց գոյությամբ բացասաբար են ազդում անչափահասների սոցիալականացման ոչ ֆորմալ միջավայրի վրա: Այսինքն, օգտվելով անչափահասների՝ հասակակիցների հետ շփվելու պահանջմունքից և հասարակական դաստիարակության ինստիտուտների գործունեության բացթողումներից, հանցավոր խմբերն անչափահասին ինքնահաստատման և անհատականության զարգացման համար առաջարկում են «այլընտրանք»՝ ընդգրկվել հակահասարակական ուղղվածությամբ ոչ ֆորմալ խմբերում:

Տվյալ ձևավորումները փաստացի փոխարինում են սոցիալապես անհրաժեշտ և հասարակության կողմից ընդունված անչափահասների ոչ ֆորմալ միավորումներին: Հանցավոր խմբերում ընդունված գերիշխող նորմերի և արժեքների համակարգը, հանցավոր ենթակուլտուրան, խմբում հանցավոր գործունեության նշանակալից ազդեցությունն անչափահասի ցանկացած այլ գործունեության վրա ստեղծում են բացասական, քրեածին միջավայր: Իհարկե, առավել բարձր հասարակական վտանգավորություն ունեն կազմակերպված տիպի անչափահասների հանցավոր խմբերը: Դա, առաջին հերթին՝ պայմանավորված է այն հանգամանքով, որ նման ձևավորումներում հանցավոր գործունեությունը դարձել է դեռահաս-երիտասարդական կայուն հանցավոր խմբերի մասնակիցների կենսակերպի անքակտելի տարրը, որոնց մեջ ամբողջովին ձևավորվում է հանցագործությունների կատարման որոշակի ուղղվածություն:

Այսպիսով՝ անչափահասների խմբային հանցավորության մանրամասն ուսումնասիրության արդյունքով ձևավորված իրական պատկերացում կազմելու համար կարևորում ենք անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանության վերաբերյալ: Վերլուծության արդյունքները կարող են օգտագործվել անչափահասների հանցավոր խմբի անդամի անձի քրեաբանական բնութագիրն ուսումնասիրելիս, անչափահասների խմբային և, առհասարակ՝ անչափահասների, հանցավորության կանխարգելման մարտավարությունը մշակելիս, ինչը կհանգեցնի անչափահասների հանցավորության կանխարգելման ընթացքում օգտագործվող ռեսուրսների արդյունավետ բաշխման:



ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

ԿՈՂՈՊՈՒՄԻ ՄԻՋՈՑՈՎ զՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողոպուտի օբյեկտը և առարկան համապատասխանում են ցանկացած հափշտակության օբյեկտին և առարկային: Կողոպուտը, որը զուգորդվում է տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով, համարժեք ձևով ոտնձգում է նաև երկրորդ ոչ պարտադիր օբյեկտի՝ մարդու կյանքի կամ առողջության դեմ:

Կողոպուտի օբյեկտիվ կողմը բնութագրվում է ուրիշի գույքի բացահայտ հափշտակմամբ: Դա այն հիմնական հատկանիշն է, որի միջոցով կողոպուտը տարբերվում է գողությունից: Առկա տեսակետներից մեկի համաձայն՝ հափշտակությունը, նույնիսկ այս կամ այն եղանակով կատարված լինելու դեպքում, երբ հնարավոր չէ դրանք միմյանցից հստակ սահմանազատել, մեկնաբանվում է հոգուտ հանցավորի՝ համարելով որպես գաղտնի կերպով կատարված¹:

Բարձրագույն դատական աստիճանները, ընդհանրապես, սահմանափակում են կողոպուտին վերաբերող հոդվածների կիրառությունը, դրան հակառակ՝ ավելի տարածված դարձնելով գողությանը վերաբերող նորմերի կիրառությունն այն դեպքերում, երբ հափշտակությունը կատարվում է հանցավորի այն մտերիմների, հարազատների կամ աշխատանքի վայրի ընկերների ներկայությամբ, ովքեր ոչ միայն անտարբեր են, այլև կարեկցանքով են վերաբերվում կատարվածին և չեն խոչընդոտում՝ ո՛չ ֆիզի-

կական և ո՛չ էլ, այսպես կոչված, «բարոյական» առումներով: Իսկ այն դեպքերում, երբ նշված անձանց կողմից արդեն միջոցներ են ձեռնարկվում ուրիշին պատկանող գույքի հափշտակությունը կանխելու նպատակով (օրինակ՝ պահանջ է ներկայացվում դադարեցնելու կատարվող հակաօրինական գործողությունը), հանցավորի գործողությունները պետք է որակվեն որպես կողոպուտ²: Այսինքն՝ եթե հանցանք կատարած անձը հափշտակությունը կատարում է շրջակա անձանց լռակյաց համաձայնության ներքո, ապա ստացվում է, որ չկա այն՝ «բարոյական» արգելքը, որը նա պետք է հաղթահարեր կատարվածի վերաբերյալ բացասական վերաբերմունք ցուցաբերած ականատեսների նկատմամբ: Այդ իսկ պատճառով՝ եթե հափշտակության ականատեսները ձգտում են կանխել հանցագործությունը՝ թեկուզ և հանցավոր արարք կատարող անձից իր գործողությունները դադարեցնելուն ուղղված հստակ պահանջով, իսկ վերջինս, միևնույն է, շարունակում է հակաօրինական ձևով վերցնել ուրիշի գույքը, ապա կատարվածը համարվում է գույքի բացահայտ հափշտակություն՝ կողոպուտ³:

Պետք է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է, որ լռակյաց համաձայնության վիճակում գտնվող անձինք՝ չբարձրաձայնելով կատարվածի վերաբերյալ, համաձայն են լինում հանցավորի կատարված գործողություններին: Նշված իրավիճակում, եթե հանցավորը գիտակցում է, որ նրա գործողություններին լռակյաց հետևող

¹ Տե՛ս Гаухман Л.Д., Максимов С.В. Ответственность за преступления против собственности, М., 2001 г., с. 48:
² Տե՛ս Гладких В.И., Федотов П.В., Шумов Р.Н. Уголовное право, Общая и Особенная части, курс лекций, М. (Эксмо), 2010 г., с. 293:
³ Տե՛ս Яни П.С. Мошенничество и иные преступления против собственности, уголовная ответственность, М., ЗАО (Бизнес-школа, Интел-Синтез), 2002 г., с. 28-34:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

խցիկների հսկողական տեսադաշտում, նկատելիորեն բացահայտ են, և այդ պատճառով նա կարող է ցանկացած պահի բռնվել կամ հանդիպել իր գործողությունները կանխող որևէ խոչընդոտի, վերջինիս արարքը պետք է որակվի՝ որպես կողոպուտ: Իսկ այն իրավիճակում, երբ հանցավորը չի նկատում համապատասխան տեսադիտման սարքերի առկայությունը, կամ նկատում է, սակայն հստակ գիտակցում, որ դրանք անսարք են, իսկ իր կատարած գործողությունները՝ շրջակա միջավայրի համար աննկատ, հանցավորի կատարած գործողությունները ենթակա են որակման՝ որպես գողություն:

Կողոպուտը համարվում է ծանրացուցիչ հանգամանքներում կատարված, եթե զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այդպիսի բռնություն ասելով՝ հասկացվում է ծեծը կամ այլ բռնի գործողությունները, որոնք ֆիզիկական ցավ են պատճառում և չեն առաջացնում առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, ինչպես նաև այնպիսի բռնի գործողությունները, որոնք կապված են ոչ միայն տուժողին ֆիզիկական ցավ պատճառելու, այլև՝ ազատությունը սահմանափակելու հետ: Տվյալ դեպքում՝ բռնության գործադրումը պետք է հանդես գա՝ որպես գույքին տիրանալու կամ գույքն իր մոտ պահելուն ուղղված միջոց: Եթե ուրիշի գույքի հափշտակությունը հանցավորի կատարած գործողություններում արտահայտվել է՝ տուժողի ազատությունը բռնի կերպով սահմանափակելով, ապա կատարվածի մեջ ավազակության կամ կողոպուտի հանցակազմի առկայության փաստի հիմնավորումը պետք է որոշվի այն հանգամանքով, թե այդ գործողությունները, իրենց բնույթով և վտանգավորության աստիճանով, ինչպիսի սպառնալիք են ստեղծել մարդու կյանքի կամ առողջության համար, ինչպիսի հետևանքներ են ունեցել, կամ՝

ինչպիսի հետևանքներ կարող էին հետագայում առաջացնել (օրինակ՝ տուժողին կապկռված վիճակում սառը շինության մեջ թողնելը՝ զրկելով նրան օգնություն դիմելու հնարավորությունից)⁹:

Այն դեպքերում, երբ գույքի հափշտակության պրոցեսում անմիջականորեն կիրառվում է բռնություն՝ անկախ այն հանգամանքից, թե գույքն անցել է հանցավորի տիրապետմանը, թե ոչ, կատարվածը պետք է որակվի իբրև բռնի հափշտակություն, այն է՝ բռնությամբ զուգորդված կողոպուտ, կամ՝ ավազակություն:

Հեղինակներից Ա.Ի. Բոյցովը կարծում է, թե բացահայտ հափշտակությունը կարող է դիտվել բռնությամբ զուգորդված կողոպուտ միայն այն դեպքերում, երբ՝ ա) գործադրված բռնությունը վտանգ չի ստեղծել տուժողի կյանքի կամ առողջության համար, և բ) եղել է գույքը հափշտակելու, կամ՝ հենց նոր վերցված գույքն իր մոտ պահելու միջոց¹⁰:

Որպես գողություն պետք է որակվեն հափշտակության այն դեպքերը, երբ բռնությունը տուժողի նկատմամբ կիրառվում է ոչ թե գույքը վերցնելու, այլ՝ անձի ուշադրությունը շեղելու նպատակով, ընդ որում՝ այն անձի նկատմամբ, ում ղեկավարմանը կամ պահպանությանը հանձնված է տվյալ գույքը: Որպես տուժողի ուշադրությունը շեղելու միջոց՝ կարող են հանդիսանալ, օրինակ, «կռվի» տեսարանները: Սակայն նման բնույթի բռնությունը չի կարող դիտվել որպես ավազակային հարձակում, քանի որ տվյալ դեպքում բռնությունը որևէ նշանակություն չի ունեցել մինչ այդ կամ դրա ընթացքում կատարված հափշտակության համար և չի հանդիսացել գույքը՝ որպես տուժողի տիրապետումից վերցնելու միջոց¹¹:

Եթե բռնի գործողությունները կատարվել են գողությունն ավարտվելուց հետո, թաքնվելու կամ բռնվելուց խուսափելու նպատակով, ապա դրանք չեն կարող դիտվել որպես կողոպուտ կամ ավազակություն և ենթակա են ինքնուրույն որակման քր. օր.-ի համապատաս-

⁹ Стів Гладких В.И., Федотов П.В., Шумов Р.Н. Уголовное право, Общая и Особенная части, курс лекций, М. (Эксмо), 2010 г., с. 305:

¹⁰ Стів Бойцов А.И. Преступления против собственности, теория и практика уголовного права и уголовного процесса, Санкт-Петербург, Юридический центр Пресс, 2002 г., с. 459:

¹¹ Стів Чинхоев Ш.И. Квалификация хищений государственного и общественного имущества в особо крупных размерах, издательство НАУКА, Казахской ССР, Алма-Ата, 1983 г., с. 55-56:

խան հողվածներով՝ կատարված գործողությունների բնույթից և վրա հասած հետևանքների ծանրության աստիճանից կախված¹²:

Կողոպուտի այն տեսակը, որն առնչվում է անձի նկատմամբ բռնություն գործադրելու հետ, մի շարք քրեագետների կողմից, նույնիսկ միասնական գնահատականի չի արժանացել¹³:

«Բռնություն» հասկացության վերաբերյալ, հեղինակներից Լ.Դ. Գաուխմանը և Ս.Վ. Մակսիմովը, օրինակ, նշում են. «Բռնությունը մեկ ուրիշի օրգանիզմի նկատմամբ անօրինական գործողությունների կատարում է՝ նրա կամքին հակառակ: Այդ ֆիզիկական ներգործությունն արտահայտվում է կամ տուժողին ծեծի ենթարկելով, կամ նրա նկատմամբ այնպիսի բռնի գործողություններ կատարելով, որոնք առաջ են բերել ինչպես ֆիզիկական ցավ, այնպես էլ ազատության սահմանափակում՝ արտահայտված կապելու, ձեռքերը ոլորելու, բերանը փակելու, իսկ փախչելու փորձ կատարելու դեպքում՝ պահելու կամ հասնելու և բռնելու միջոցով, և այլն»: Դրա հետ մեկտեղ՝ հնարավոր են դեպքեր, երբ տուժողին կարող է որևէ վնաս չպատճառվի, սակայն բռնություն գործադրելու պահին նրա կյանքի կամ առողջության համար ստեղծվի իրական վտանգ: Ուստի բռնության գործադրման ինտենսիվությունը գնահատելիս պարտադիր չէ, որ հիմք ընդունվեն միայն առաջ եկած հետևանքները (փաստացի վնասի պատճառում): Նույնքան կարևոր է նաև հանցավորի իրականացրած գործողությունների կատարման եղանակը: Բռնության ինտենսիվությունը գնահատելիս՝ ըստ գործողությունների կատարման եղանակի, հաշվի են առնում ինչպես հանցագործության կոնկրետ հանգամանքները, այնպես էլ մարմնի պաշտպանված կամ անպաշտպան մասերին հարվածներ հասցնելու, ձեռքերով կամ ոտքերով հարվածելու և այլ հանգամանքները¹⁴: Այլ կերպ ասած՝ հանցավորի կողմից ֆիզիկական բռնությունը միշտ

կիրառվում է տուժողին՝ դիմադրություն ցուցադրելու հնարավոր ցանկությունից, հնարավորությունից կամ ունակությունից զրկելու նպատակով¹⁵:

Այսպիսով՝ անձի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության սպառնալիքը տուժողին ահաբեկելու (վախեցնելու), ծեծելու, ֆիզիկական ցավ պատճառելու կամ ազատությունը սահմանափակելու մեջ է: Կողոպուտի հանցակազմում սպառնալիքը՝ օբյեկտիվ կողմից, պետք է լինի իրական և ներառի բռնությունն անմիջականորեն իրագործելու իրական հնարավորություն: Իրական սպառնալիքն առկա է այն դեպքում, երբ տուժողի կողմից գիտակցաբար ընդունվում է այնպես, ինչպես ցանկանում է հանցավորը: Կողոպուտի դեպքում արտահայտված սպառնալիքը բնութագրվում է այն հանգամանքով, որ արտահայտվում է տուժողին անմիջական և անհապաղ ահաբեկելու, այլ ոչ թե հետագայում (ապագայում) կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր ֆիզիկական բռնություն գործադրելու մեջ: Այդպիսի բռնության գործադրումը կամ որպես այդպիսին արտահայտված սպառնալիքը պետք է հանդես գա՝ իբրև ուրիշի գույքը վերցնելու և հանցավորի կամ այլ անձանց օգտին դարձնելու միջոց: Այլ կերպ ասած՝ կողոպուտը որակվում է բռնությամբ զուգորդված միայն այն դեպքերում, երբ բռնությունը կամ բռնություն գործադրելու սպառնալիքը միջոց է գույքը վերցնելու կամ, վերցնելուց հետո՝ հանցավորի կողմից իր մոտ պահելու համար: Այդ իսկ պատճառով՝ այն բռնությունը, որը հանցավորի կողմից կիրառվում է գողությունն ավարտվելուց հետո՝ բռնվելուց խուսափելու նպատակով, չի կարող վերաճել կողոպուտի¹⁶:

Սպառնալիքը կարող է արտահայտվել նաև՝ բառերով, ժեստերով, միմիկայով, ինչ-որ առարկաներ ցուցադրելով: Այն դեպքում, երբ ի-

¹² Сѣн Судебная практика по уголовным делам, сборник постановлений Пленумов Верховных Судов СССР, РСФСР и Российской Федерации, ЭКЗАМЕН, М., 2001 г., с. 331-338, Комментарии к Уголовному кодексу Российской Федерации, 6-е издание, под редакцией заслуженного деятеля науки РФ, док. юрид. наук, профессора В.Т. Томина, канд. юрид. наук, доцента В.В. Сверчкова, ЮРАЙТ, М., 2010 г., с. 523:

¹³ Сѣн Ераксин В.В. Ответственность за грабеж, Юрид. Лит., М., 1972 г., с. 17-18:

¹⁴ Сѣн Гаухман Л.Д., Максимов С.В. Ответственность за преступления против собственности, М., 2001 г., с. 93-94:

¹⁵ Сѣн Ераксин В.В. Ответственность за грабеж, Юрид. Лит., М., 1972 г., с. 42:

¹⁶ Сѣн նույն տեղը:

րադրությունն այնպիսին է, որ սպառնալիքն իրագործելու իրական լինելը տուժողին հիմք է տալիս ենթադրելու, թե նրա նկատմամբ կարող է կիրառվել կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն, արարքը պետք է որակվի՝ որպես ավազակություն և պետք է որոշվի՝ ելնելով հանցավորի ունեցած դիտավորության ուղղվածությունից և տուժողի կողմից սպառնալիքի էությունն ընկալելու բնույթից¹⁷: Տուժողը պետք է գիտակցի՝ եթե չկատարի հանցավորի պահանջը, ապա սպառնալիքն անմիջապես կիրագործվի:

Հնարավոր է նաև, որ բռնությամբ զուգորդված կողոպուտի դեպքում օգտագործվի մարդու կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր համարվող զենք (օրինակ՝ կյանքի և առողջության համար վտանգ չներկայացնող և որոշակի հավատարմագրման ենթարկված քաղաքացիական ինքնապաշտպանական բնույթի գազային կամ աերոզոլային փոշեցրիչներ և այլն)¹⁸:

Այն դեպքում, երբ գույքը վերցնելիս տուժողի նկատմամբ գործադրված բռնության պատճառով, վերջինիս անզուգուրությամբ պատճառվում են հետևանքներ (քերծվածքներ, կապտուկներ, ցավ և այլն), արարքը պետք է որակվի որպես հասարակ կողոպուտ (օրինակ՝ ոսկյա շղթան պոկումով հափշտակելու դեպքում, երբ դրա հետևանքով տուժողը պարանոցի շրջանում ստանում է քերծվածքներ): Իսկ այն դեպքերում, երբ հանցավորի գործողությունների պատճառով տուժողին անզուգուրությամբ պատճառվում է մարմնական վնասվածք (օրինակ՝ ձեռքի պայուսակը պոկումով հափշտակելու դեպքում, երբ տուժողը վայր է ընկնում և ստանում մարմնական վնասվածք), կամ գործադրվող բռնությունը կամ սպառնալիքն իրականացվում է ոչ թե գույքը վերցնելու կամ իր մոտ պահելու, այլ՝ սեփականատիրոջից կամ այլ անձանցից ազատվելու (փախչելու) նպատակով, արարքը պետք է որակվի հանցագործությունների համակցությամբ:

Կողոպուտի դեպքում բռնությունը (բռնության սպառնալիքը) կարող է կիրառվել ոչ միայն գույքի սեփականատիրոջ կամ գույքը տիրապետող այլ անձի նկատմամբ, այլ նաև այն անձանց նկատմամբ, ովքեր իրականում (կամ՝ հանցավորի կարծիքով) կարող են խոչընդոտել գույքի հափշտակումը¹⁹:

Ընդհանուր առմամբ՝ պետք է նշել, որ դատաքննչական պրակտիկայում մշտապես կարևորվել են կողոպուտի և ավազակության՝ որպես հափշտակության ինքնուրույն եղանակների, սահմանազատման և քրեաիրավական որակման հետ կապված հարցերը: Ելնելով նշված խնդրի կարևորությունից և անհրաժեշտությունից՝ ՀՀ վճռաբեկ դատարանը՝ 2013 թվականի փետրվարի 15-ին Ժ.Ղուկասյանի և այլոց վերաբերյալ թիվ ԵԷԴ/0091/01/11 քրեական գործով կայացված որոշմամբ, մեկնաբանել է կողոպուտի հանցակազմը՝ համատեքստում քննարկելով օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի առանձնահատկություններին վերաբերող հարցերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը Ժ.Ղուկասյանի և այլոց գործով որոշման 25-րդ կետում իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, ըստ որի՝

«(...) ավազակությունը, ինչպես նաև կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտը երկօբյեկտ հանցակազմեր են. հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, իսկ լրացուցիչ օբյեկտը մարդու կյանքն է կամ առողջությունը: Սուբյեկտիվ կողմից վերոնշյալ հանցակազմերը բնութագրվում են շահադիտական դրդման առկայությամբ, որը զուգորդվում է բռնության հետ»:

Բռնության բովանդակության հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձ է կատարել նաև Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով որոշմանը, որտեղ նշում է՝

«(...) բռնությունը՝ որպես քրեորեն հետա-

¹⁷ Стѹ Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, расширенный уголовно-правовой анализ с материалами судебно-следственной практики, ЭКЗАМЕН, М., 2002 г., с. 332:

¹⁸ Стѹ Комментарий к уголовному кодексу Российской Федерации (постатейный), 2-е издание, Том 1, Российская академия правосудия, под. ред. док. юрид. наук, проф., заслуженного юриста РФ А.В. Бриллиантова, М. 2017 г., с. 610:

¹⁹ Стѹ Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, издание одиннадцатое, переработанное и дополненное, ответ. ред. док. юрид. наук, проф., заслуженный деятель науки РФ А.И. Парог, М. 2017 г., с. 356:

պընդելի արարք, դիտավորությամբ, անձի կամ քին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի պատճառով անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք» (*Կրեն Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետը*): Մեջբերված դիրքորոշման լույսի ներքո գնահատելով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ և 176-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ավազակության հասարակ և որակյալ տեսակների դեպքում օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող բռնությունը կամ դրա սպառնալիքը կարող են լինել բացառապես կյանքի կամ առողջության համար վտանգավոր, իսկ կողոպուտի որակյալ տեսակի դեպքում բռնությունը կամ դրա սպառնալիքը պետք է լինեն կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր: Հետևաբար՝ յուրաքանչյուր դեպքում անձի արարքը որպես ավազակություն կամ ծանրացնող հանգամանքներում կատարված կողոպուտ որակելիս պետք է գործի բավարար փաստական տվյալներով հիմնավորել, թե ինչն է արտահայտվել բռնության կամ դրա սպառնալիքի բովանդակությունը, և արդյոք դրանք կյանքի կամ առողջության համար վտանգավոր են եղել, թե՛ ոչ...»:

Բռնության բովանդակության բացահայտման հետ կապված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել նաև մանրամասնել ոչ միայն բռնության էությունը, այլև այն, թե՛ որ բռնությունն է համարվում կյանքի կամ առողջության համար վտանգավոր, որը՝ ոչ: Այս կապակցությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բռնության՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու հիմնական չափանիշն առողջությանը պատճառված վնասի վերաբերյալ բժշկական ցուցանիշներն են, որոնցից կախված են արարքի, այդ թվում՝ ավազակության իրավաբանական գնահատման առանձնահատկությունները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է,

որ բռնության տարբեր դրսևորումների՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր լինելը որոշվում է՝ ելնելով.

ա) կյանքի կամ առողջությանը պատճառված վնասի ծանրության աստիճանից,

բ) հանցագործության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլն:

Վերոգրյալի կապակցությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կյանքի համար վտանգավոր են գանգոսկրի ներթափանցող վնասվածքները, գանգի հիմքի և հատման ոսկորների բաց և փակ կտրվածքները, գլխուղեղի ծանր և միջին աստիճանի վնասումները, ողնաշարի, կոկորդի, շնչափողի, կերակրափողի ներթափանցող վնասվածքները և այլն: Բացի այդ՝ տուժողի կյանքի համար բռնությունը կարող է հանգեցնել տարբեր հիվանդագին վիճակների զարգացման կամ տարբեր հիվանդությունների կամ խանգարումների առաջացման (օրինակ՝ ծանր աստիճանի շոկը, կոմայի մեջ ընկնելը և այլն):

Հանցագործության, տվյալ դեպքում՝ ավազակության բնույթից, կատարման եղանակից, կատարման մեխանիզմի առանձնահատկություններից և այլնից ելնելով՝ բռնությունը գնահատվում է որպես կյանքի կամ առողջության համար վտանգավոր նաև այն դեպքում, երբ դրա կիրառման պահին իրական վտանգ է ստեղծվել տուժողի կյանքի կամ առողջության համար: Այսպես՝ գույքը հափշտակելու նպատակով հանցավորը, առանց վնաս պատճառելու, կիրառում է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ կամ բռնությունը կիրառում է տուժողի կյանքի համար վտանգավոր այլ եղանակներով (օրինակ՝ խեղդում է տուժողին, տարբեր ձևերով փակում է նրա շնչառությունը և այլն): Նման դեպքերում բռնության բնույթը որոշվում է՝ գործի բոլոր հանգամանքները (բռնության գործադրման եղանակ, գործիքներ, հանցակիցների քանակ, դեպքի կատարման ժամանակ, տեղ և այլն) հաշվի առնելով:

Կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքը հոգեբանական բռնության տարատեսակ է և կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ խոսքով, ժեստերով, զենքի կամ որպես զենք օգտա-

գործվող այլ առարկաների ցուցադրմամբ կամ այնպիսի այլ գործողությունների կատարմամբ, որոնք, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, տուժողի կյանքի կամ առողջության համար իրական սպառնալիք են ներկայացնում: Հետևաբար՝ այն դեպքում, երբ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների ցուցադրումը կամ հանցավորի դրսևորած այլ գործողությունները՝ ժեստը, մարմնաշարժումը և այլն, զուգորդված չեն տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի դրսևորման հետ, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտ:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկան փաստացի չի գործադրվել, սակայն կոնկրետ իրավիճակում տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ է ստեղծել (օրինակ՝ հարձակման ընթացքում հանցավորը զենքը կամ որպես զենք օգտագործվող այլ առարկան հպում է տուժողի որովայնին, կոկորդին կամ կենսական կարևոր նշանակություն ունեցող այլ օրգաններին), արարքը պետք է որակել որպես ավազակություն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սպառնալիքը կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու վերաբերյալ տուժողի սուբյեկտիվ ընկալումը կարող է պայմանավորված լինել նրա հուզական, հոգեֆիզիկական, նյարդային և առողջական վիճակով, տարիքով, զգայունության, մտավոր զարգացման աստիճանով և մի շարք այլ գործոններով: Ուստի սպառնալիքի՝ կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ ոչ վտանգավոր լինելու հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է հաշվի առնել գործով հաստատված բոլոր հանգամանքների համակցությունը՝ հանցագործության կատարման ժամանակը, տեղը և եղանակը, հանցագործի անձը, հանցագործների քանակը, տուժողի կողմից սպառնալիքի բնույթի սուբյեկտիվ ընկալումը, այնպիսի բացահայտ գործողությունների կատարումը,

որոնք վկայում են ֆիզիկական բռնություն գործադրելու՝ հանցավորի մտադրության կամ պատրաստակամության մասին և այլն:

Կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտը սուբյեկտիվ կողմից բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը գիտակցում է ոչ միայն գույքի բացահայտ հափշտակության, այլ նաև այդ ընթացքում կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի փաստը: Այլ կերպ ասած՝ հանցավորը գիտակցում է, որ տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրում կամ դրա գործադրման սպառնալիք է կիրառում նրա գույքը հափշտակելու նպատակով և ցանկանում է այդ:

Հիմք ընդունելով սույն որոշման 15-21-րդ կետերում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը որոշման 22-րդ կետով արձանագրում է, որ ավազակության (ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդված) և կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված կողոպուտի (ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ) հանցակազմերը տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

ա) ավազակության հանցակազմի իմաստով՝ կյանքի կամ առողջության նկատմամբ գործադրված բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը դիտվում է վտանգավոր այն դեպքում, երբ դրա հետևանքով տուժողի առողջությանը պատճառվել է թեթև (որն առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ), միջին ծանրության, ծանր վնաս կամ մահ:

բ) կյանքի կամ առողջության համար բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքը վտանգավոր է, եթե բռնության հետևանքով տուժողի առողջությանը վնաս չի պատճառվել, սակայն գործի նյութերով հաստատվել է, որ բռնությունը գործադրելու պահին տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու իրական սպառնալիք է եղել:

գ) այն դեպքում, երբ գործադրված բռնությունը կամ դա գործադրելու սպառնալիքն արտահայտվում է տուժողի առողջությանը թեթև վնաս պատճառելով, որը չի առաջացրել առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ, կամ զուգորդվել է ծեծով, ֆիզիկական ցավ պատճառելով, ձեռքերը կամ ոտքերը կապելով կամ ոլորելով կամ տուժողի ազատությունը սահմանափակելով՝ պայմանով, որ նշված գործողությունների հետևանքով տուժողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու իրական վտանգ չի ստեղծվել, և նման բռնության սպառնալիք չի տրվել, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ որպես կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված կողոպուտ:

դ) հարձակումն ավագակության հանցակազմի պարտադիր հատկանիշ է, մինչդեռ կողոպուտը կարող է կատարվել առանց հարձակման:

ե) ավագակության դեպքում հանցավորը գիտակցում է, որ տուժողի նկատմամբ կիրառված բռնությունը վտանգավոր է, իսկ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված կողոպուտի պարագայում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված է տուժողի կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրումը:

Իրավաբանական գրականության մեջ որոշակի քննադատության է արժանացել նաև՝ բռնության սպառնալիքի և բռնության փաստացի գործադրման դեպքերի միատեսակ քրեաիրավական գնահատման հարցը: Այս առումով՝ հեղինակներից Ս. Մ. Կաչոյն արդարացիորեն կարծում է, թե չի կարելի միևնույն քրեաիրավական նորմով՝ բռնության իրական գործադրման և բռնության գործադրման սպառնալիքի համար, նախատեսել միատեսակ պա-

տասխանատվություն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանք՝ իրենց հանրային վտանգավորության աստիճանով, միմյանց հետ չեն համընկնում²⁰:

Իրավաբանական գրականության մեջ առանձնակի քննարկման առարկա են դարձել ավագակության և բռնությամբ զուգորդված կողոպուտի՝ *որպես մեկ միասնական հանցակազմով հանդես գալու*, օրենսդրական նախաձեռնությանը վերաբերող հարցերը: Այս խնդրի շրջանակներում արտահայտած տեսակետներից մեկի համաձայն՝ եթե քրեական օրենսդրության կատարելագործման գործընթացն ընթանար այնպես, որ հնարավոր լիներ ձևավորելու ավագակության միասնական հանցակազմ, ապա պատասխանատվության հարցը կարող էր որոշվել՝ ելնելով այն հանգամանքից, թե գույքը հափշտակելու ընթացքում կիրառվել է իրական ֆիզիկական բռնություն, թե՛ միայն բռնություն²¹:

Բռնության բաժանումը՝ ըստ ինտենսիվության, հիմնականում պայմանավորված է բռնությամբ զուգորդված կողոպուտն ավագակության հանցակազմից տարանջատելու հանգամանքով: Այն երկրներում՝ բացառությամբ հետխորհրդային տարածքի երկրներից, որտեղ բացակայում են բռնությամբ զուգորդված հափշտակությունների տարանջատումը կողոպուտի և ավագակության, ներառյալ, օրինակ՝ Գերմանիայի և Ֆրանսիայի քրեական օրենքները, բռնության տարանջատումը բացակայում է: Միանշանակ պետք է պնդել, որ նշված հանցակազմերի միավորման դեպքում անձի անձեռնմխելիության պաշտպանության քրեաիրավական նշանակությունը, որը նշված հանցակազմերի դեպքում հանդես է գալիս որպես ոչ անմիջական օբյեկտ, էլ ավելի կամրապնդվի ու կմեծանա, քան այն դեպքերում, երբ հանդես է գալիս առանձին (միմյանցից անջատ) հանցակազմերում: Օրենսդրի այն դիրքորոշումը, թե բռնությունը՝ ըստ կյանքի կամ առողջության համար ունեցած վտանգավորության աստիճանի, բաժանվում է տեսակների, պրակտիկայում

²⁰ Տե՛ս Կոչոյ Ս.Մ. Ответственность за корыстные преступления против собственности, учебно-практическое пособие, издание 2-е, дополненное и переработанное, М., 2000 г., с. 206.

²¹ Տե՛ս Курс уголовного права, в пяти томах, особенная часть, том 3, под редакцией док. юрид. наук, профессора Г.Н. Борзенкова и док. юрид. наук, профессора В.С. Комиссарова, М., Зерцало-М, 2002 г., с. 451:

գրեթե չի գործում, քանի որ բռնության գործադրման փաստը, իր էությամբ, արդեն իսկ վտանգավոր է մարդու կյանքի և առողջության համար:

Ընդհանրացնելով իրավաբանական գրականության մեջ ավազակության և կողոպուտի հանցակազմերի միավորման խնդրի շուրջ առկա հիմնավորումները՝ միանշանակ է, որ նշված հանցակազմերի միավորումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քր. օր.-ի և դրա հետագա կատարելագործման համար: Բացի դրանից, նկատի ունենալով նաև նշված հարցի շուրջ տարբեր երկրների քրեական օրենսդրությունների պրակտիկան, *առաջարկվում է՝ համապատասխան օրենսդրական փոփոխություններով ՀՀ քր. օր.-ի «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»* գլխում ընդգրկված ավազակության (ՀՀ քր. օր.-ի 175-րդ հոդված) և բռնությամբ զուգորդված կողոպուտի (176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ) հանցակազմերը միավորելով՝ ստեղծել **ավազակության միասնական հանցակազմ**, իսկ ավազակության հանցակազմը բնորոշող օրենսդրական սահմանումը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. **«Ավազակությունն ուրիշի գույքի հափշտակությունն է, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով»²²:**

Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նմանատիպ բնորոշման հետևանքով ավազակության հանցակազմից դուրս է մնում կողոպուտի հասարակ տեսակը, այն է՝ ուրիշի գույքի բացահայտ հափշտակությունը, առաջարկվում է՝ կողոպուտի հանցակազմի հասարակ տեսակը ընդգրկել գողության հանցակազմում (ՀՀ քր. օր.-ի 177-րդ հոդված) և բնորոշել հետևյալ բովանդակությամբ. **«Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի կամ բացահայտ հափշտակությունը, որը կատարվել է մանր չափերով...»:** Նշված առաջարկի մեջ գողության զգալի չափը մանրով փոխարինելը պատ-

ճառաբանված է այն փաստարկով, որ դատաքննչական պրակտիկայում, օրինակ, հանդիպում են դեպքեր, երբ գողություն կատարելու նպատակով բնակարան ապօրինի մուտք գործած հանցավորը հափշտակում է մանր չափերի գույք, իսկ գողության որակյալ տեսակի համար՝ հափշտակության չափը դառնում է քննարկման ենթակա խնդիր: Նույնը վերաբերում է նաև գույքի բացահայտ հափշտակությանը, սակայն մի վերապահմամբ, որ ներկայիս ՀՀ գործող քր. օր.-ը կողոպուտի հասարակ տեսակի համար վնասի կոնկրետ չափը չի սահմանում, սակայն անուղղակի կերպով ենթադրվում է:

Նշված բոլոր փոփոխությունների հետևանքով, այն է՝ կողոպուտի հանցակազմից կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության հատկանիշի հանելը և դա՝ որպես ավազակություն համարելը, ինչպես նաև կողոպուտը՝ որպես գողության հանցակազմի բացահայտ հափշտակության դրսևորում դիտարկելը, ըստ էության, արմատապես փոխում են նշված հանցակազմերի վերաբերյալ ներկայումս գոյություն ունեցող պատկերացումները: Բացի այդ՝ առաջարկվող փոփոխությունների շնորհիվ՝ կարող են նաև նպատակահարմար հիմքեր ստեղծվել, որպեսզի գույքի բացահայտ հափշտակությունը դիտվի՝ որպես գողության հանցակազմի նոր եղանակ, իսկ այդպիսի հափշտակության հետևանքով պատճառված վնասն ստանա հստակ օրենսդրական կարգավորում:

Առաջարկվող փոփոխությունները կարելի է նաև առաջընթաց քայլ համարել նախկին ԽՍՀՄ տարիների քրեական օրենսդրությունների հետ դեռևս իր խոր արմատներով կապված՝ ՀՀ քրեական օրենսդրության բարեփոխումների համար, ինչը, գործնականում, ենթադրում է ավելի ճկուն դարձնելու նշված հանցակազմերի կիրառական նշանակությունը՝ հանցագործությունների քննության և ճիշտ որակման գործընթացում:

²² Տե՛ս Ա. Ալայնյան «Ավազակության հանցակազմի որակման հետ կապված մի շարք հիմնախնդիրների քրեաիրավական վերլուծություններ», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր («ՀՀ դատավորների միություն» հասարարական կազմակերպություն), №1-2/175-176, Երևան, 2014թ, էջ 16-27:

ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՋՅԱՆ

Իրավագիտության թեկնածու, փաստաբան

ՈՐՈՇ ԵԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՐԵՒԱՅԻՆ ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող հանցակազմը հայրենական քրեական իրավունքի տեսության համեմատաբար քիչ ուսումնասիրված ինստիտուտներից է: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 166-ը պատասխանատվություն է սահմանում 18 տարին լրացած անձի կողմից երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու համար:

Տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմը վերլուծելու համար անհրաժեշտ է բացահայտել հոդվածի դիսպոզիցիայում նշված «երեխա», «պոռնկություն», «պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ», «ներգրավել» հասկացությունների բովանդակությունը: ՀՀ քրեական օրենսգրքում տրված չէ պոռնկություն բառի հասկացությունը: Մեր կարծիքով՝ պոռնկություն բառն օգտագործվում է որպես մարմնավաճառության բառի հոմանիշ:

Որոշ դժվարություններ է հարուցում նաև հոդվածում օգտագործված «երեխա» հասկացության մեկնաբանությունը: Կարծում ենք՝ դա օգտագործված է անչափահաս բառի իմաստով, ուստի ավելի նպատակահարմար է հոդվածում «երեխա» բառը փոխարինել «անչափահաս» եզրույթով:

Հոդված 166-ում նշվում է պոռնկագրական նյութեր կամ առարկաներ պատրաստելու մեջ երեխային ներգրավելու մասին: Պոռնկագրական նյութեր ասելով՝ հասկացվում է տպագիր, կինո կամ տեսանյութերը, պատկերները կամ պոռնկագրական բնույթի այլ առարկաները¹: Ըստ Մ. Լեբեդևի կարծիքի՝ պոռնկագրական

նյութերը գեղագիտական, գրաֆիկական, գրական, երաժշտական և այլ ստեղծագործություններն են, որոնց բովանդակությունը սեռական հարաբերությունների մանրամասների կոպիտ նատուրալիստական ներկայացումն է²: Հանցագործությունների որակման հարցում հաճախ են սխալներ թույլ տրվում «ներգրավել» եզրույթի ոչ ճիշտ ընկալման պատճառով: Քրեագետները ներգրավելը բնորոշում են որպես հակահասարական գործունեությամբ (պոռնկությամբ) զբաղվելու մտադրության առաջացման կամ այդպիսի մտադրության ամրապնդման հարուցումն այլ անձի կողմից³: Մեր համոզմամբ՝ ներգրավելն այլ անձի մեջ որոշակի գործողություններ կատարելու մտադրության հարուցումը (առաջացում) է: Այսինքն՝ ներգրավելն ունի դրդման հատկանիշ, իսկ որոշման կայացման ամրապնդումն ինտելեկտուալ օժանդակություն է: Դրդելու և ինտելեկտուալ օժանդակության տարբերությունն այն է, որ առաջինն առաջացնում է որոշակի գործողություններ կատարելու մտադրություն, իսկ երկրորդն ամրապնդում է արդեն իսկ գոյություն ունեցող մտադրությունը: Բացի այդ՝ ոչ ոք չի կարող հստակ նշել մտադրության վրա ազդելու չափը, այսինքն՝ անձի՝ որոշակի գործողություններ կատարելու մտադրության վրա մեկ այլ անձ ինչ ազդեցություն է թողել, և արդյոք նա չէր կատարի տվյալ արարքը՝ առանց այդ ազդեցության:

Երեխային պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելու եղանակները տարբեր են: Հոդվածի դիսպոզիցիայում չի նշվում երեխային պոռնկության ներգրավելու եղանակները, ուստի երեխային ցանկացած եղանակով ներգրա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Տե՛ս Наумов А. В. Российское уголовное право. Курс лекций. М., 2004, էջ 471:

² Տե՛ս Комментарий к Уголовному кодексу РФ/ Под ред. В. М. Лебедева. М., 2002 էջ 593, Уголовное право Российской Федерации. Особенная часть/ Под ред. А. И. Рапога. М., 2001, էջ 370:

³ Տե՛ս Минковский Г. М., Брускин Г. З. Общая характеристика вовлечения несовершеннолетних в преступную деятельность и иное антиобщественное поведение // Проблемы борьбы с вовлечением несовершеннолетних и антиобщественное поведение. М., 1981, էջ 6:

վելը պետք է որակել հոդված 166-ով, եթե, իհարկե, բացակայում են հոդված 132.2-ի հատկանիշները: Այսպիսով՝ հոդված 166-ի 1-ին մասի առումով՝ ներգրավման հիմնական եղանակները պետք է համարել հետևյալները.

- *Համոզելը*. Անձին ներշնչվում է մարմնավաճառությամբ զբաղվելու անհրաժեշտության միտքը:
- *Կաշառելը*. Սա մարմնավաճառությամբ զբաղվելու հակելն է նյութական օգուտի խոստման միջոցով, օրինակ՝ գույքային պարտավորություններից ազատելը:
- *Խաբեությունը*. Այսինքն՝ հանցավորի իրական մտադրությունների առնչությամբ տուժողին մոլորության մեջ դնելը:
- *Այլ եղանակներ* (օրինակ՝ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելը)⁴:

Ընդհանուր առմամբ, համամիտ լինելով ներկայացված եղանակների դրսևորումներին, համարում ենք, որ այս արարքը հնարավոր չէ կատարել խաբեության միջոցով, այդպիսի արարքը անհրաժեշտ է որակել հոդված 132.2-ով, քանի որ խաբեության պարագայում տուժողի կամքն անտեսվում է, նա, ըստ էության՝ ընկնում է շահագործման վիճակի մեջ: Նույնը կարելի է ասել նաև տուժողի նյութական կախվածությունն օգտագործելու կապակցությամբ: Բայց այստեղ կարևոր նշանակություն ունեն նյութական կախվածության բնույթն ու աստիճանը: Եթե տուժողն ամբողջությամբ կախվածության մեջ է հանցավորից, այսինքն՝ առանց դրա նա, ըստ էության, չի կարող գոյատևել, այս դեպքում արարքը կորակվի հոդված 132.2-ով:

Մարմնավաճառությամբ զբաղվելուն ներգրավելը՝ բռնության գործադրման կամ դրա սպառնալիքով, որակվում է հոդված 166-ի 3-րդ մասով: Ա. Շչեդրինայի կարծիքով՝ այս հանցագործության կատարման եղանակ կարող է լինել պոռնկագրական բնույթի և (կամ) առարկաների տարածումն ու գովազդը⁵: Դժվար է համաձայնել այս մոտեցմանը, քանի որ այդպիսի նյութերի և առարկաների տարածումը

հանցագործություն չէ (եթե ապօրինի չեն տարածվել), բացի այդ՝ դրանք ուղղված չեն կոնկրետ անձանց և միայնակ, առանց այլ գործունեի ուղեկցությամբ, չեն կարող անձի մեջ առաջացնել մարմնավաճառությամբ զբաղվելու մտադրություն:

Հոդված 166-ի դիսպոզիցիան որևէ նշում չի պարունակում արարքի կատարման անզուգուրության կամ դիտավորության մասին: Հետևաբար՝ տվյալ հանցագործության մեղքի ձևը պարզելու համար անհրաժեշտ է մեկնաբանել տվյալ նորմը: Գրականության մեջ և պրակտիկայում⁶ ընդունված է համարել, որ երեխային հակահասարակական գործունեության, այդ թվում՝ պոռնկության, ներգրավելու գործողությունները կարող են կատարվել միայն ուղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է պոռնկության մեջ և ցանկանում է դա:

Օրենսդիրը չի նշում հոդված 166-ով նախատեսված հանցագործության նպատակն ու շարժառիթը: Որպես կանոն՝ այս հանցագործության կատարման հիմքում ընկած է շահը՝ մարմնավաճառությունից նյութական օգուտ ստանալու ցանկությունը: Սակայն հնարավոր են նաև այլ դրդապատճառներ, օրինակ՝ որևէ մեկին ծառայություն մատուցելու (լավություն անելու) ցանկությունը, տուժողի արժանապատվությունը ոտնահարելու մղումը և այլն: Շարժառիթները, որոնցով ղեկավարվում է հանցավորը, ինչպես նաև նրա հետապնդած նպատակը, արարքի որակման հարցում նշանակություն չունեն, բայց կարող են հաշվի առնվել պատիժ նշանակելիս:

Երեխային պոռնկության ներգրավելու հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերլուծությունը պահանջում է հանցավորի՝ տուժողի տարիքի նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի ճշգրտում: Հենց տարիքային առանձնահատկությունն է պատճառը, որ տվյալ հանցակազմը տեղադրված է ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 20-ում, տարիքային հատկանիշով է այս հանցակազմը սահմանազատվում հոդված 261-

⁴ Стів Федик Е. Н. Ответственность за действия, связанные с проституцией. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург. 2003, էջ 85:

⁵ Стів Щедрина А. К. Некоторые вопросы ответственности за вовлечение несовершеннолетних в антиобщественную деятельность // Проблемы Советского уголовного права и криминологии. Вып 28. Свердловск, 1975, էջ 132:

⁶ Стів Судебная практика по уголовным делам. Под ред. О. М. Оглоблина. М., 2001, էջ 163:

ով նախատեսված արարքից: Անչափահասների վերջնականապես չձևավորված բնավորությունը, նրա դյուրահավատությունը, կախվածությունը չափահասներից նրանց դարձնում են ավելի խոցելի, քան չափահասներին: Արարքը որակելիս պետք է պարզել՝ հանցավորի պատկերացումները համապատասխանում են տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշներին, թե՞ ոչ: Հոդված 166-ի դիսպոզիցիան բավականաչափ հստակ է՝ «Երեխային ներգրավելը...»: Այս հանգամանքը պարտադիր պետք է արտացոլվի հանցագործի գիտակցության և կամքի մեջ: Հարկավոր է, որ հանցավորը գիտակցի, թե ներգրավում է հենց անչափահասի: Պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև այն դեպքում, երբ տուժողի տարիքի վերաբերյալ հանցավորը թեև չունի ստույգ տեղեկություններ, բայց ենթադրում է կամ հիմնավոր կասկածներ ունի, որ պոռնկության մեջ է ներգրավում անչափահասի: Իսկ այն դեպքում, երբ կատարողը պոռնկության է ներգրավում անչափահասի՝ կարծելով, թե վերջինս չափահաս է, անհրաժեշտ է առաջնորդվել փաստական սխալի կանոնով և արարքը որակել հոդված 261-ով:

Անդրադառնալով սույն հանցակազմի կառուցվածքին՝ անհրաժեշտ է նշել, որ դա ձևական է: Հոդվածի դիսպոզիցիայում նշված չեն պարտադիր հետևանքներ: Չնայած՝ ինչպես և ցանկացած հանցագործություն, տվյալ արարքը նույնպես ունի հետևանքներ: Անչափահասի ներգրավումը պոռնկության մեջ նրա վրա թողնում է բազմաթիվ հետևանքներ՝ նրա մեջ առաջանում են վատ սովորություններ, հակում հակահասարակական գործունեության հանդեպ, բարոյականության անկում, բնականոն զարգացման ու դաստիարակության խաթարում և այլն: Պարզապես այս հետևանքներն առարկայական չեն, հնարավոր չէ դրանք նյութապես չափել: Ըստ մեզ՝ հանցագործության ավարտման պահ պետք է համարել տուժողի՝ պոռնկության մեջ ներգրավման պահը, այսինքն՝ այն պահը, երբ տուժողն սկսում է զբաղվել մարմնավաճառությամբ: Ըստ էության՝ հանցագործության ավարտման պահը համընկնում է անչափահասի կողմից առաջին հաճախորդին սպասարկելու հետ: Հանցագործության ավարտման պահ չի կարելի համարել տուժողի՝

պոռնկությամբ զբաղվելու վերաբերյալ համաձայնություն տալը, քանի որ այդ պահին նա դեռ պոռնկության մեջ ներգրավված չէ, փաստորեն, չի զբաղվում այդպիսի գործունեությամբ: Այս ամենից հետևում է, որ հնարավոր է նաև հանցափորձ, մասնավորապես՝ այն դեպքում, երբ հանցավորն իրենից կախված ամեն ինչ անում է (համոզում, նյութապես շահագրգռում, սպառնում և այլն) անչափահասին պոռնկության ներգրավելու համար, սակայն հանցավորից անկախ պատճառներով անչափահասը չի ներգրավվում պոռնկության մեջ (դրսևորում է համառություն կամ դա կանխվում է իրավապահ մարմինների կամ այլ անձանց կողմից): Փաստորեն, մեղավորը կատարում է հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները, բայց իրենից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցվում՝ երեխան չի ներգրավվում պոռնկության մեջ: Ներկայացված օրինակը լիովին համապատասխանում է ՀՀ քր. օր-ում տրված հանցափորձի սահմանմանը: Մասնավորապես, ըստ հոդված 34-ի՝ հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով:

Հոդված 166-ի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում նույն արարքի համար, որը կատարվել է ծնողի, մանկավարժի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը: Կարծում ենք՝ օրենսդրի կողմից այս հանգամանքի սահմանումն արդարացված է: Կարելի է պնդել, որ երեխայի դաստիարակության հարցում նրա իրավունքների խախտումն այն անձանց կողմից, ում վրա իրավական և բարոյական նորմերով դրված է երեխայի խնամքի և դաստիարակության պատասխանատվությունը, պարունակում է ավելի մեծ հանրային վտանգավորություն, քան այդ իրավունքների խախտումն այլ անձանց կողմից: Երեխայի ներգրավումը պոռնկության մեջ ծնողի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականությունը, համարվում է ծանրացնող հանգամանք նաև այն պատճառով, որ նրանք փաստացի և իրավաբանորեն

հսկողություն են իրականացնում երեխայի վրա, ուստի նրանց համար անհամեմատ ավելի հեշտ է երեխաներին ներգրավել հակահասարակական գործունեության, այդ թվում նաև՝ պոռնկության մեջ: Միևնույն ժամանակ՝ երբ երեխան ներգրավվում է պոռնկության մեջ ծնողի կամ այլ հարազատի կողմից, դա ավելի մեծ վնաս է հասցնում նրա հոգեբանությանը:

Անհրաժեշտ է պարզաբանել այս նորմում նշված «այլ անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պատասխանատվությունը» արտահայտությունը: Ըստ մեզ՝ այդ անձանց դերում կարող են լինել երեխայի խորթ ծնողները, որդեգրողները, հոգաբարձուները, խնամակալները, մանկատան աշխատակիցները: Այդ դերում կարող են հանդես գալ նաև երեխայի տատիկը, պապիկը և այլ հարազատները, եթե երեխայի դաստիարակությամբ ժամանակավորապես նրանք են զբաղվում, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ ծնողները հիվանդ են կամ մեկնել են գործուղման:

Հոդված 166-ի 3-րդ մասում սահմանված են առավել ծանրացնող հանգամանքները.

1. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են երկու կամ ավելի անձի նկատմամբ: Ծանրացնող այս հանգամանքը առկա է, երբ հանցավորը գիտակցում է, որ պոռնկության է ներգրավում երկու կամ ավելի անչափահասի: Իսկ եթե ներգրավվածներից մեկը չափահաս է, ապա արարքը պետք է որակել սույն հոդվածի առաջին մասի և հոդված 261-ի համակցու-

թյամբ: Ուստի ավելի ճիշտ կլիներ սույն հոդվածում «երկու կամ ավելի անձի նկատմամբ» արտահայտության փոխարեն օգտագործել «երկու կամ ավելի անչափահասի նկատմամբ» բառակապակցությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Այս հանցակազմում, բռնություն ասելով՝ պետք է հասկանալ առողջությանը միջին ծանրության կամ թեթև վնասի պատճառումը կամ ծեծը: Իսկ եթե բռնությունը եղել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր, ապա արարքն անհրաժեշտ է որակել հոդված 166-ի 1-ին մասի և համապատասխան հոդվածի համակցությամբ:

Մեր կարծիքով՝ որոշակի խնդիր կա նաև հոդված 166-ի սանկցիայի առումով: Հոդվածի 1-ին մասում սահմանված է մեկից հինգ տարի ժամկետով ազատազրկում: Հոդված 261-ի համար պատասխանատվություն է սահմանված մեկից երեք տարի ժամկետով: Փաստորեն, երկու հոդվածների սանկցիաների ստորին շեմն սկսվում է մեկ տարուց, ինչն արդարացված չենք համարում, քանի որ հոդված 166-ն ունի ավելի բարձր հանրային վտանգավորություն: Նաև չափազանց մեծ է հոդված 166-ի սանկցիայի միջակայքը, ինչը կարող է բարդություններ առաջաձևել պատիժ նշանակելիս: Այս խնդիրները լուծելու համար առաջարկում ենք վերանայել հոդված 166-ի սանկցիան:



ԱՐՄԱՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՓԵՆՏԱՏՈՒՄԸ ՈՐԴԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿ

Սահմանադրության արդյունավետության խնդիրների հետազոտությունները ցույց են տալիս, որ հիմնական փորձերը կատարվում են գործող հիմնական օրենքները կատարելագործելու ուղղությամբ: Այդ գործունեությունը պահանջում է սոցիալական արդյունավետության գնահատման մոտեցումների նախնական ընկալում: Ընդ որում՝ ժամանակին այդպիսի մոտեցումները կիրառվել են իրավական դաշտի տարբեր ճյուղերում՝ քրեական, աշխատանքային, ընտանեկան ոլորտներում՝ անհրաժեշտություն առաջացնելով այդպիսի արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակման: Սահմանադրության արդյունավետության խնդիրն անդրադառնալու համար անհրաժեշտ է բացահայտել այդ հասկացությունը: Իրավաբանական գրականության մեջ իրավական ակտի արդյունավետությունը նույնականացվում է օպտիմալության, ճշգրտության, հիմնավորվածության, նորմերի նպատակահարմարության հետ¹: Արդյունավետությունն իրավունքի մեկնաբանվում է նաև որպես դրված նպատակի օպտիմալ նվաճում նյութական միջոցների, մարդկային էներգիայի և ժամանակի տնտեսմամբ: Սահմանադրության արդյունավետության ընդհանուր բնորոշումն այն է, որ դա սահմանադրությունն ստեղծողների մտահղացման և սահմանադրության փաստացի կարգավիճակի հարաբերակցությունն է: Արդյունավետությունը գնահատելու նպատակով պետք է հաշվի առնել ոչ միայն նվաճված արդյունքները, այլև դրանց հետ անմիջականորեն կապված դրական կամ բացասական հանգամանքները: Ի վերջո՝ սահմանադրության արդյունավետության գնահատումը ցույց է տալիս՝ արդյոք սահմանադրությունը ի զորո՞ւ է ազդեցություն ունենալ հասարակական հարաբերությունների վրա որոշակի հանրագուտ ուղղությամբ:

Արժեքանական տեսանկյունից՝ հատուկ ուշադրության է արժանի սահմանադրության արդյունավետության և սոցիալական արժեքի սերտ կապը: Սոցիումի կողմից սահմանադրուրեն իր գոյը կարգավորելու ցանկությամբ պայմանավորված՝ սահմանադրության արդյունավետության աստիճանը ցույց է տալիս նաև սոցիալական պահանջարկի բավարարվածության մակարդակը: Արդյունավետությունը դիտարկելիս կարելի է անդրադառնալ հետևյալ 3 տարրի համադրությանը՝

1. սահմանադրության տեսանկյունից սոցիալական անբավարարվածություն,
2. իրավական կարգավորման մեխանիզմով խնդրի լուծման օբյեկտիվ հնարավորություն,
3. ոչ ցանկալի երևույթների բացառումը սահմանադրության մեջ:

Արդյունավետությունը ևս կարելի է դիտարկել ըստ ձևերի: Առաջին ձևն է սոցիալական արդյունավետությունը. այդ հասկացությունը բնորոշում է սահմանադրական կարգավորման սոցիալական օգտակարությունը հասարակական հարաբերությունների համակարգում, որի օբյեկտիվ չափանիշ է այդ կարգավորումների համապատասխանությունը հասարակության պրոգրեսիվ զարգացման պահանջարկին:

Իրավաբանական արդյունավետությունն իրավական նորմի այնպիսի հնարավորությունն է շարժառիթով ազդելու մարդկանց հոգեբանության վրա, որը հաղորդում է մարդկանց իրենց վարքագծի կանոնները:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրության արդյունավետության գնահատականը պարզելու համար անհրաժեշտ է սահմանել նորմերի գործողության դերը, որոնք իրենց ազդեցությունն են ունենում իրավակարգավորման ար-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Керимов Д.А. Свобода, право и законность в социалистическом обществе.– М., 1960. С. 143.

դյունքի վրա, այսինքն՝ պարզել, թե որքանով է ստացված արդյունքը կապված գոյություն ունեցող նորմի հետ, այլ ոչ թե՝ այլ գործոնների:

Այսպես՝ կարելի է ընդգծել այդ իրավակարգավորման վրա սահմանադրական նորմի ազդեցության մակարդակը հետևյալ տարբերակներով՝

1. սահմանադրական նորմի ազդեցության հատուկ, ինքնուրույն հետազոտության միջոցով, որի ընթացքում սինթեզվում են ինչպես իրավական նորմերը, այնպես էլ հետազոտված բացասական հետևանքները,

2. սահմանադրական նորմերի նպատակների տարանջատում՝ մատնանշելով իրավակարգավորման մեջ դրանց կշիռը,

3. իրավական գիտափորձ, որը կայանում է իրավական կարգավորումներից ժամանակավոր հրաժարմամբ, այլ իրավակարգավորումների ներդնամամբ²,

4. ներհատուկ քանակական ցուցանիշների մշակմամբ, որոնք կբնորոշեն սահմանադրական նորմի ազդեցության չափը,

5. փորձագետների գնահատականների միջոցով,

6. գիտափորձային վերլուծություն,

7. կոռելյացիոն վերլուծություն³:

Արդյունավետության խնդիրը հետազոտելիս իրավաբանական գիտության մեջ առաջանում է տեսական որակական վերլուծությունից քանակական հաշվարկներին անցման խնդիր: Այդպիսի հաշվարկների իրականացման համար կարող են օգնել օպերացիոն սահմանումները և ցուցանիշները: Արդյունավետության որակական բովանդակության հաստատման համար կարելի է կվանտիֆիկացնել դրա նպատակը և արդյունքը: Օպերացիոնալ ասելով՝ կարելի է հասկանալ այն սահմանումը, որը բովանդակում է գործողության ընտրությունը, որի արդյունքը կարելի է մախրիկ կերպով դիտարկել կամ չափել, հարաբերակցել այն գիտական հասկացության հետ, որը տեսականորեն ընդգրկում է այդ արդյունքը: Միևնույն հասկացությունը կարող է ստանալ մի քանի օպե-

րացիոն սահմանումներ, որոնք ցույց են տալիս հասկացության կիրառման տարբեր էմպիրիկ իրավիճակներ:

Սահմանադրության արդյունավետության հետազոտման ընթացքում կարելի է դիտարկել հետևյալ փուլերը.

1. Սահմանադրական նորմերի նպատակների որոշումը. նորմի, այսինքն՝ հասարակական հարաբերությունների պլանավորված վիճակի որոշման համար անհրաժեշտ է վերհանել չափանիշներ, որոնց միջոցով առաջարկվում է օպտիմալացնել իրավական կարգավորումը: Միևնույն ժամանակ՝ առաջարկվում է տարանջատել նպատակների դասակարգումն անմիջականի և վերջնականի, հեռանկարայինի և մոտակայի, նյութականի և իրավականի:

2. Տեղեկատվության մշակման և հավաքագրման տեխնիկայի և մեթոդի կիրառումը. տեղեկատվության հավաքագրման մեթոդների շարքում են գործողությունները՝ ա) ուղղված եզակի փաստերի հաստատման (դիտարկման, փաստաթղթերի ուսումնասիրության, հարցման) միջոցներով; բ) ուղղված առաջնային տեղեկատվության հավաքագրման (մոնոգրաֆիկ, ամբողջական, ընտրական հետազոտության, փորձարարական դիտարկման միջոցներով):

Տեղեկատվության հավաքագրման մեթոդների շարքում են նկարագրությունը, դասակարգումը, փորձարարական, վիճակագրական, գենետիկ կամ պատմական վերլուծության ձևերը, տիպաբանությունը, սոցիալական մոդելավորումը:

Տեղեկատվության հավաքագրման տեխնիկան ներառում է առաջնային տեղեկատվության հիմնավորվածության, բավարարության, կայունության նկատմամբ որակական վերահսկողության հնարքը, առաջնային փաստերի որակական բնութագրիչների չափումը, ինչպես նաև դիտարկման միավորների վիճակագրական ապարատը և որակական ու քանակական բնութագրիչների հավասարեցման հնարքները:

Տեղեկատվության մշակման տեխնիկան

² Смирнов О.В. Эффективность правового регулирования организации труда на предприятии.– М.: «Юридическая литература», 1968. С. 38.

³ Павлодский Е.А. Определение эффективности правовых норм с помощью корреляционного анализа / в кн.: Эффективность закона (методология и конкретные исследования).– М., 1997.

նախատեսում է տրամաբանական միջոցների, վիճակագրական հնարքների և այլ մաթեմատիկական միջոցների, ինչպես նաև սոցիոլոգիական որակական-քանակական ամփոփ բնութագրիչների՝ ինդեքսների, մշակման տեխնիկան⁴:

3. Սահմանադրական նորմի նպատակի և արդյունքի հարաբերակցության հաստատում (այսինքն՝ փաստացի և պլանավորված հասարակական հարաբերությունների վիճակը). այս փուլում պահանջվում է հաստատել քանակական կապերը և տալ բազմաթիվ գործոնների քանակական բնութագրումը, որոնք ազդում են ցուցանիշների ձևավորման վրա, որոնք, իրենց հերթին՝ բնորոշում են սահմանադրական նորմի գործողությունը: Նույն փուլում կարող են կիրառվել նշված հարաբերակցության հաստատման տարբեր մեթոդներ, օրինակ՝ կիբեռնետիկ մոտեցումը՝ վիճակագրական մոդելավորման հետ:

4. Հետազոտության արդյունքների բովանդակային մեկնաբանումն ուղղված է նոր նորմերի մշակման կամ գործող նորմերի կատարելագործման (փոփոխության, լրացման, գործողության դադարման) առաջարկությունների առաջադրմանը:

Սահմանադրության մշտադիտարկման համար պահանջվում է լայնորեն կիրառել վիճակագրական տվյալներ, մշակել սոցիոլոգիական և մաթեմատիկական մեթոդներ, գիտական կազմակերպական աշխատանքների կազմակերպում, իրավաբանական գիտնականներից բացի՝ նաև այլ ոլորտների մասնագետների (սոցիոլոգներ, տնտեսագետներ, հոգեբաններ, վիճակագիրներ, մաթեմատիկոսներ և այլ) ներգրավվում: Բացի այդ՝ անհրաժեշտ է կիրառել նաև քաղաքացիական հասարակության միջոցով հավաքագրված տեղեկատվությունը: Սահմանադրական մշտադիտարկման միջոցով որոշվում է գաղափարական նպատակների նվաճման աստիճանը՝ նորմերի տիպիկ անգործությունից մինչև դրանց պատճառների հայտնաբերման և դրանց վերացնելուն ուղղված միջո-

ցառումների ծրագրի հաստատման: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ընդգծել մի քանի գործողության՝ կապված մշտադիտարկման հետ.

1. մոդելի, այսինքն՝ նորմի հարաբերակցությունը տվյալ ոլորտի կարգավորմանն ուղղված հասարակական հարաբերությունների փաստացի արդյունքի հետ՝ հիմք ընդունելով որոշակի ցուցանիշներ,

2. սահմանադրական նորմի անգործության կամ շեղման պատճառների բացահայտում (կարգավորման սխալ կամ իրավական կոլիզիա, նորմի չիմացություն, գաղափարի այլասերում, լիազորությունների չօգտագործում, այլ մարմինների իրավասության դաշտ ներխուժում, մարդկանց իրավունքների խախտում, պետական մարմինների ոչ բավարար աշխատանք, ոչ իրավաչափ գործողություններ և այլն),

3. սահմանադրական նորմերի անգործության հստակ փաստերի հաստատում,

4. սահմանադրական նորմերի իրացման նեգատիվ, շեղված հետևանքների բնութագրում,

5. իրավաչափության մակարդակի որոշում կառավարման իրավիճակից կախված՝ որքանով է դրա մակարդակն ազդում տնտեսական կյանքի և սոցիալական վիճակի, ինչպես նաև մարդկանց վարքագծի վրա,

6. միջոցառումների ամբողջական փաթեթ-ծրագրի ձեռնարկում՝ ուղղված սահմանադրությունից շեղումների բացահայտման և բացառման, սահմանադրաիրավակիրառ պրակտիկայի կատարելագործման, սահմանադրության երաշխավորման լրացուցիչ գործողությունների իրականացման, ինչպես նաև վերջինիս դրույթների փոփոխությունների, լրացումների կամ դադարման անհրաժեշտ քայլերի ժամանակին ձեռնարկման:

Ներկայումս մշտադիտարկման իրականացման համար առաջարկվում է օգտագործել ինչպես իրավաբանական ինդիկատորները (կիրառելիության դրական կամ բացասական ցուցանիշների), այնպես էլ փաստացի կիրառելիության ինդիկատորները⁵:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

⁴ Ядов В.А. Роль методологии в определении методов и техники конкретного социологического исследования // Вопросы философии. 1966. №10. С. 33.

⁵ Тихомиров Ю.А. Рекомендации по проведению мониторинга действия закона // Законодательство и экономика. 2008. №6. С. 6, 8.

Սահմանադրական նորմերի կիրառելիության ցուցանիշ կարող են դիտարկվել՝

1. նորմերի կիրառումը սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար, պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների կողմից իրենց գործառույթների կատարումը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրացումը,

2. օրենսդրության մշակումը՝ հիմք ընդունելով սահմանադրական նորմերի իրական իմաստը,

3. սահմանադրական նորմերի մասին իմացության և տեղյակ լինելու ապահովում, դրանք օգտագործելը, քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների մասնակցության ապահովումը օրենսդրական ակտերի նախագծերի մշակման գործընթացում, վերահսկողությունում և այլն,

4. սահմանադրական նորմերի օգտագործումը, պետական մարմինների կարգավիճակի որոշումը և դրանց հիմնական գործունեության ուղղության հաստատումը,

5. սահմանադրական նորմերի օգտագործումը՝ որպես հիմնարար իրավական բնույթի գործունեության հիմք:

Սահմանադրական մշտադիտարկման ընթացքում անհրաժեշտ է բացահայտել այն օբյեկտիվ գործոնները, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում իրավակիրառ գործունեության վերջնական արդյունքի վրա: Դրանց են վերաբերում պետական կառավարման ուղղության փոփոխությունը, պետական մարմինների համակարգի վերակառուցումը, տեխնածին և բնական աղետները, ֆինանսատնտեսական ձախողումները, սոցիալ-քաղաքական կոնֆլիկտային իրավիճակները: Սահմանադրական մշտադիտարկման համար կարևոր են ինչպես իրավունքով կարգավորող հասարակական հարաբերությունները, այնպես էլ ոչ իրավական փաստացի հարաբերությունները:

Վերջիններս՝ այսպես կոչված ոչ ֆորմալ հարաբերություններն են, որոնք հատուկ են մարդկանց՝ հաշվի առնելով նրանց բնորոշ սոցիալ-հոգեբանական արժեքները, գործունեության շարժառիթները և նպատակները: Այդ հարաբերությունները, իհարկե, ձևավորվում և գոյություն են ունենում մինչև դրանց իրավա-

կան կարգավորումը, դրանց գործողության, ինչպես նաև գործողության դադարումից հետո: Ոչ ֆորմալ իրավահարաբերությունները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ երկու խմբի՝ 1) պոզիտիվ, որոնք ծառայում են իրավաստեղծ գործունեությանը, արտահայտում են շահերի ընդհանրություն, աջակցում են իրավաչափ վարքագծի տարբերակների ընտրության հարցում, ապահովում են պայմանավորվածությունները, 2) նեգատիվ, որոնք արտահայտում են իրավունքին հակասող՝ քաղաքացիների, պետական մարմինների, ձեռներեցների արժեքներ և գործունեության շարժառիթներ:

Եթե մշտադիտարկման ընթացքում բացահայտվում է նորմերի ոչ բավարար կարգավորումը, ապա հաջորդ փուլի խնդիրն արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկների բարձրացումն է: Մշտադիտարկման միջոցով որոշվում է հասարակական հարաբերությունների կանոնակարգման մակարդակը, վեր են հանվում ձախողումները, վերացվում են հակասությունները, կոլիզիաները ինչպես ներսահմանադրական մակարդակով, այնպես էլ սահմանադրության և ստորադաս իրավական ակտերի միջև, ապահովվում են այդպիսի իրավական համակարգի ներքին կայունությունը և ներդաշնակությունը, մշակվում են իրավական համակարգի նորացման և կատարելագործման առաջարկներ: Վերջին հաշվով՝ խոսքը այնպիսի գործոնների բացահայտման մասին է, որոնք պատճառ են գործող իրավական համակարգի ցածր արդյունավետության, և դրա հետևանքով՝ բացասական արդյունքի հաղթահարման ուղղությամբ միջոցների ձեռնարկման մասին:

Եթե օրենսդրության արդյունավետության մասին խոսելիս կարելի է նշել ներկայիս հայաստանյան օրենսդրության որակը, ապա սահմանադրական նորմերի անգործության պատճառը շատ ավելի խորն է, քանի որ խոսքն այստեղ ոչ թե որակի, այլ՝ հստակ գործելու կամ չգործելու մասին է: Խոսքը սահմանադրական նորմերի կիրառության մասին է ինչպես օրինաստեղծ գործունեության մեջ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում: Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական նորմերի մշտադիտարկման իրականացման ընթացքում որոշման են

ենթակա այն գործոնները, որոնք կոնկրետ իրավիճակում նպաստել են սահմանադրության՝ որպես իրավական արժեքի գործողության, արդյունավետության անկմանը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան միջոցներ, քայլեր, մեխանիզմներ՝ այսպես կոչված, մշտադիտարկման գործիքներ, բացասական ազդեցությունը հաղթահարելու համար:

Ժամանակակից Հայաստանի իրավական համակարգում բաց է մնում սահմանադրական մշտադիտարկման ինստիտուտի հարցը: Սույն աշխատանքի շրջանակներում փորձ է կատարվում, մշտադիտարկման նպատակ ասելով՝ հասկանալ սահմանադրական նորմերի ամփոփ բնութագրիչները, որոնք արտացոլում են հա-

սարակական հարաբերություններում ի սկզբանե պլանավորված արժեքներն իրացնելիս որոշակի մակարդակի նվաճումը: Հիմք ընդունելով վերը նշվածը, նպատակ ունենալով, ի թիվս վերը նշվածների, որոշել նաև սահմանադրության իրական արդյունավետությունը՝ անհրաժեշտ է բացահայտել սահմանադրության մեջ դրված գաղափարների նվաճումը, այսինքն, մի կողմից՝ ա) հաստատել, թե որքանով է երկրում առկա իրավիճակը՝ պայմանավորված սահմանադրական նորմերի գործողությունից, բ) բացահայտել այլ բացասական գործոնների առաջացման հիմքերը և սահմանադրորեն վերացնել դրանք՝ ապահովելով սահմանադրության գերակայությունը:



КАРЕН КОНДЖАКУЛЯНкандидат юридических наук,
доцент кафедры государственно-правовых
дисциплин ИГСУ РАНХиГС**АРШАК АРУТЮНЯН**кандидат юридических наук, ассистент кафедры
правоведения и политологии права
Армянского государственного экономического университета

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПРАВИТЕЛЬСТВА В ЗАКОНОТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)

Важный аспект взаимоотношений исполнительной власти и законодательной – это участие правительства в законодательной деятельности.

Из самой сущности демократии вытекает, что инициатива принятия законов должна принадлежать либо самому народу как источнику и носителю власти, либо выборному представительному и законодательному органу – парламенту. Однако в каждом государстве круг субъектов законодательной инициативы ограничен¹.

На наш взгляд, правительство лучше других субъектов власти информировано о том, какое законодательное обеспечение необходимо для проводимой им политики и каковы текущие потребности в изменении законодательства. Нам представляется, что исполнительная власть имеет больше возможностей и резервов для разработки качественных законопроектов. В этой связи вызывает интерес суждение В.В. Гончарова, что в итоге происходит подмена функций исполнительной и законодательной власти – Федеральное Собрание, призванное заниматься законотворчеством, по сути, осуществляет лишь контрастную сигнацию законопроектов, подготовленных в системе федеральной исполнительной власти, в связи с этим падает статус Федерального Собрания как законодательного органа власти и разрушается баланс в системе разделения властей, заложенный в Конституции².

В действующем законодательстве Российской Федерации отсутствует механизм, который мог бы обеспечить депутатам Государственной Думы и членам Совета Федерации Федерального Собрания определенную институциональную независимость при разработке и принятии законов от федеральных органов исполнительной власти.

Итак, согласно законодательству России и Армении, правительству принадлежит право законодательной инициативы. Правительство осуществляет данное право посредством внесения законопроектов в Государственную Думу Российской Федерации и в Национальное Собрание Республики Армения соответственно.

Отметим, что правительства обеих стран вправе вносить в парламент, в соответствии с законодательством, поправки к находящимся на рассмотрении в парламенте законопроектам. Важно отметить, что разрабатываемые правительством России проекты федеральных законов по предметам совместного ведения Российской Федерации и субъектов Российской Федерации в обязательном порядке направляются правительством в органы государственной власти субъектов Российской Федерации³.

Так, правительство России дает письменные заключения на законопроекты о введении или об отмене налогов, об освобождении от их уплаты, о выпуске государственных займов, об из-

¹ Арутюнян А.Р. Институциональные и функциональные характеристики правительств Российской Федерации и Республики Армения (сравнительно-правовое исследование). Автореферат. ... канд. юрид. наук. М., РАНХиГС, 2013. С. 122.

² См.: Гончаров, В. В. Проблемы и перспективы взаимодействия Федерального Собрания Российской Федерации с федеральными органами исполнительной власти // Административное и муниципальное право. 2010. №3. С. 76.

³ Отметим, что вопросы совместного ведения Российской Федерации и субъектов Российской Федерации установлены в ст. 72 Конституции России.

менении финансовых обязательств государства и на законопроекты, предусматривающие расходы, покрываемые за счет федерального бюджета.

Стоит отметить, что правовое значение заключения – консультативное⁴. Заключение правительства направляется субъекту права законодательной инициативы и в Государственную Думу в срок до одного месяца со дня поступления законопроекта в правительство. По согласованию с соответствующим субъектом права законодательной инициативы, этот срок может быть продлен.

Представляется, что заключением правительства следует признать документ, подписанный председателем правительства, и оно должно исходить от имени правительства. Отсутствие вышеуказанных признаков может послужить базисом для отклонения законопроекта парламентом⁵.

Анализ ч. 4 ст. 103 Регламента Совета Федерации и ч. 3 ст. 103 Конституции Российской Федерации и ст. 36 ФКЗ «О Правительстве РФ» свидетельствует о наличии правовой коллизии. Так, ч. 4 ст. 103 Регламента Совета Федерации гласит: отсутствие в документах и материалах, сопровождающих поступившие из Государственной Думы федеральные законы по вопросам введения или отмены налогов, освобождения от уплаты налогов, выпуска государственных займов, изменения финансовых обязательств государства, предусматривающие расходы, покрываемые за счет федерального бюджета, заключения правительства России, может служить основанием для отклонения Советом Федерации федеральных законов⁶.

При этом Конституция и ФКЗ «О Правительстве РФ» предусматривают императивность такого заключения правительства. В этой связи,

напрашивается вывод о противоречии, так как Регламент Совета Федерации содержит формулировку, что «заключение Правительства РФ может служить основанием для отклонения Советом Федерации», что предусматривает не-обязательный порядок письменного заключения правительства. Получается, что Государственная Дума может рассмотреть закон с нарушением требований ч. 3 ст. 104 Конституции, что, на наш взгляд является безусловным основанием для отклонения.

Для сравнения возьмем законодательную норму Республики Армения, согласно которой, на обсуждение правительства ставят вопросы законодательной инициативы депутатов Национального Собрания. Вопросы, не требующие законодательных и подзаконных решений, представляются на обсуждение правительства в форме отчетов, докладов, предложений и в других формах, которые не подлежат согласованию.

Важно отметить, что проекты законов Республики Армения и решений нормативного характера Национального Собрания, решений правительства и премьер-министра согласовываются с министром юстиции⁷.

Другой аспект взаимодействия правительства России и парламента – это то, что правительство может направлять в палаты Федерального Собрания официальные отзывы о рассматриваемых палатами федеральных законах и законопроектах. Заключение правительства на законопроекты, поправки к законопроектам и официальные отзывы правительства о рассматриваемых палатами Федерального Собрания федеральных законах и законопроектах подписываются председателем правительства или его заместителем и направляются в палаты Федерального Собрания. Отметим, что при подготовке

⁴ Конджакулян К.М. Предложения по усовершенствованию функциональных характеристик правительств Армении и России (Сравнительно-правовое исследование) // Право и образование. №2. 2015. С. 58.

⁵ Конджакулян К.М. Правовые основы влияния на государственное управление и единоначалие власти в Российской Федерации и Республике Армения. Ценности и интересы современного общества. Международная научно-практическая конференция. М.: МЭСИ. 2014. С. 87.

⁶ Постановление СФ ФС РФ от 30 января 2002 г. №33-СФ «О Регламенте Совета Федерации Федерального Собрания Российской Федерации» (с изм. и доп. от 26.09.2015) // СЗ РФ. 2015. №7. Ст. 635.

⁷ См.: Указ Президента РА от 18 июля 2007 г. № УП-174 «Об утверждении порядка деятельности и организации Правительства Республики Армения и подведомственных ему иных государственных органов» (с изм. и доп. от 3 августа 2015) // Ведомости Республики Армения. 2015. №46 (849). Ст. 1132.

проекта официального отзыва в нем следует отражать сведения о соответствии законопроекта Конституции и федеральному законодательству; финансовой обеспеченности, если его реализация потребует средств из федерального бюджета; социально-экономических последствиях и о полноте учета парламентом заключения и отзывов.

Законодательство Российской Федерации не дает легального определения понятия «официальный отзыв», что можно оценить как правовой пробел в законодательстве. Полагаем, что официальный отзыв – форма выражения соотношения правительства к конкретному законопроекту, так как он содержит концептуальные сведения и положения результатов проведенной правовой и других экспертиз законопроекта. Более того, в официальном отзыве устанавливается позиция правительства о целесообразности правового регулирования общественных отношений на уровне закона.

С учетом вышеизложенного, представляется целесообразным отметить позицию некоторых исследователей, согласно которым, следует разработать и закрепить в действующем законодательстве Российской Федерации определенный механизм, обеспечивающий независимость Федерального Собрания от федеральных органов исполнительной власти и его самостоятельность при осуществлении законотворческой деятельности, что представляется небесспорным. Например, как отмечается, необходимо предоставить Государственной Думе право самостоятельной разработки проекта федерального закона о федеральном бюджете (с обязательным согласованием его в правительстве), что позволит, с одной стороны, парламенту как органу власти, избранному непосредственно населением, самостоятельно осуществлять бюджетное зако-

нотворчество, а, с другой стороны, подстегнет правительство страны подготавливать более качественные проекты федерального бюджета уже на конкурсной основе⁸.

Как отмечается в научной литературе, в интересах более масштабного и эффективного взаимодействия правительства и парламента, в законотворческом процессе выступает институт полномочного представителя правительства в палатах Федерального Собрания⁹. Нормативное регулирование правового статуса полномочных представителей правительства устанавливается ФКЗ «О Правительстве РФ» и Постановлением правительства «О полномочных представителях Правительства Российской Федерации в палатах Федерального Собрания Российской Федерации»¹⁰.

Для представления в палатах Федерального Собрания внесенного правительством законопроекта назначается официальный представитель правительства. В целях защиты позиций правительства по заключениям, поправкам и официальным отзывам поручением председателя правительства или одного из его заместителей может быть направлен специальный представитель, полномочия которого определяются в поручении. Представители правительства присутствуют на заседаниях палат Федерального Собрания при рассмотрении федеральных законов и законопроектов, где им предоставляется слово, в соответствии с регламентами палат¹¹.

В результате проведенного исследования, напрашивается вывод о том, что у правительства России отсутствует реальная возможность сохранить первоначальную редакцию внесенного им законопроекта. В законодательном процессе Государственная Дума может внести изменения и поправки в правительственные законопроекты, де-факто не учитывая мнения правительства,

⁸ См.: Кабалоева, А. Т. Участие Правительства Российской Федерации в законодательной деятельности Федерального Собрания Российской Федерации: автореф. дис. ... канд. юрид. наук. Владикавказ, 2009. С. 13–16.

⁹ Конджакулян К.М. Исполнительная власть и институт президентства: вопросы соотношения (административно-правовое исследование на примере Российской Федерации и Республики Армения) Дисс. ... канд. юрид. наук. М., ОПТМ РАГС, 2010. С. 16.

¹⁰ См.: Постановление Правительства РФ от 1 февраля 2000 г. №94 «О Полномочных представителях Правительства Российской Федерации в палатах Федерального Собрания Российской Федерации» (с изм. и доп. от 26 января 2014) // СЗ РФ. 2014. №8. Ст. 774.

¹¹ См.: Федеральный конституционный закон РФ от 17 декабря 1997 г. №2-ФКЗ «О Правительстве Российской Федерации» (с изм. и доп. от 1 февраля 2015) // СЗ РФ. 2015. №5. Ст. 458.

которые носят рекомендательный характер. Отозвать же свой законопроект субъекты права могут лишь до принятия или одобрения законопроекта в первом чтении (п. «б», ч. 6 ст. 112 Регламента Государственной Думы). Таким образом, возможна ситуация, когда правительственный законопроект будет изменен до неузнаваемости и утратит первоначальную сущность. Представляется верным тезис, согласно которому, вышеуказанные аспекты должны быть взаимосогласованы с правительством, с учетом официальной позиции последнего.

Участие правительств обеих стран в законодательной деятельности парламента является важным аспектом по реализации исполнительной властью своих интересов и задач. Данное участие обусловлено необходимостью эффективного государственного управления в системе организации и функционирования государственного механизма. Так, реализуя право законодательной инициативы, правительство стремится законодательно урегулировать общественные отношения в системе функционирования органов исполнительной власти, тем самым восполняя правовые пробелы в обществе.

Проведенное исследование свидетельствует, что в Республике Армения вопросы соотношения правительства и Национального Собрания в русле законодательного процесса регламентированы фрагментарно, что требует более системного и комплексного подхода со стороны законодателя Армении. В этой связи, следует в императивном порядке более детально регулировать процедуры заключения и официальных отзывов со стороны правительства, при этом дать развернутую характеристику заключения, а также финансово-экономического обоснования

на него. Более того, для улучшения взаимодействия правительства Армении с Национальным Собранием в законодательной деятельности требуется усовершенствовать уже существующие формы деятельности и однозначно учитывать положительный опыт Российской Федерации в рамках института полномочных представителей.

Так, следует детализировать основные задачи полномочного представителя правительства Армении в Национальном Собрании такими пунктами, как: координация законопроектной деятельности органов исполнительной власти и формирование пакетов законопроекта; обеспечение эффективного и постоянного взаимодействия правительства с иными субъектами прав законодательной инициативы в сфере законотворческого процесса; правовой анализ стадий подготовки проектов законодательных актов, вносимых правительством и т. д.

Императивность и необходимость эффективного взаимодействия правительства соответственно с Федеральным Собранием Российской Федерации и Национальным Собранием Республики Армения связаны с основной функцией исполнительной власти – исполнением законов, что порой связано с принятием подзаконных актов, обеспечивающих их действие и реализующих установленную законодательством компетенцию правительства. Для эффективного государственного управления и решения ключевых вопросов, стоящих перед двумя государствами, необходимы согласованные действия парламента и правительства, с тем, чтобы одновременно с законами в случае необходимости были приняты подзаконные акты с целью применения закона на практике.



ԶԱՐԻՆԵ ԱԶԻԶՅԱՆ

«ԱԿՔԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ՔԱՆԿ» ՓԲԸ

Քիզնես գործընթացների իրավական սպասարկման բաժնի պետ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՓՈԹԵՔԻ ԱՐԳԵԼԸ (ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

«Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպքում հիփոթեք կարող է սահմանվել քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող այն հողամասի նկատմամբ, որը բնեղենով առանձնացված է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից՝ որպես առանձին գույք, և դրա նկատմամբ իրավունքները գրանցված են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով»:¹ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում սահմանված այս իրավական նորմի համաձայն՝ արգելվում է գրավադրել ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը. դա կարող է դառնալ գրավի առարկա միայն ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսանալուց հետո:

Այս իրավական նորմի առկայությունը խոչընդոտում է քաղաքացիներին գրավադրել իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասը և ֆինանսավորում ստանալ ֆինանսական կազմակերպություններից: Ֆինանսական կազմակերպությունները հրաժարվում են որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց ընդունել համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը՝ պահանջելով քաղաքացիներից դա բաժանել մասերի և գրավադրել որպես բաժնային սեփականություն: Որպես արդյունք՝ քաղաքացիները որոշակի լրացուցիչ գործողություններ և ծախսեր պետք է կատարեն (չափագրման աշխատանքների կատարում, բաժանման պայմանագրի կնքում, պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացում և պետական գրանցման կատարում), որպեսզի կարողանան գրավադրել իրենց սեփականությունը, այն էլ՝ բաժնա-

յին դառնալու դեպքում, մինչդեռ, ՀՀ Սահմանադրության համաձայն՝ սեփականության բոլոր ձևերը հավասարապես պետք է պաշտպանվեն և ազատորեն զարգանան:

Ստեղծված իրավիճակում քաղաքացին, ով որպես սեփականություն ունի ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամաս, չի կարող իր հայեցողությամբ տնօրինել իր սեփականությունը, մինչդեռ մյուս գույքերի սեփականատերերն ազատորեն տնօրինում են իրենց գույքը:

Օրենսդիրը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում նշված դրույթի սահմանմամբ սեփականության իրավունքի տնօրինման հավասար պայմաններ չի ստեղծել սեփականության բոլոր ձևերի և բոլոր գույքերի սեփականատերերի համար՝ խոչընդոտելով անհավասար պայմաններում գտնվող ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի սեփականատիրոջը տնօրինել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ համատեղ սեփականությունը, որպես սեփականության ձև, հավասարապես չի պաշտպանվում պետության կողմից, հետևաբար՝ որպես սեփականության ձև, առկա իրավիճակում համատեղ սեփականությունը չի կարող ազատորեն զարգանալ, և պետությունը պետք է քայլեր ձեռնարկի վերջինիս զարգացմանը նպաստելու համար:²

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի թե՛ սեփականության իրավունքի և թե՛ գրավի իրավունքի ընդհանուր կարգավորումների համաձայն՝ ընդհանուր համատեղ սեփականությունը կարող է տնօրինվել, ինչպես նաև գրա-

¹ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մաս:
² ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված:

վաղրվել բոլոր սեփականատերերի համաձայնությամբ: Սակայն գործող իրավական կարգավորման պարագայում համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի համատեղ սեփականատերերն իրենց գրավոր համաձայնությամբ կամ նույնիսկ բոլորը միասին հիփոթեքի պայմանագրով որպես գրավատու հանդիսանալու պարագայում չեն կարող կնքել հողամասի հիփոթեքի պայմանագիր և գրավադրել իրենց համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը: Այսպիսով՝ նույն իրավական ակտում հողամասի հիփոթեքի դեպքում այլ կարգավորման նախատեսումը կարծես դուրս է մնում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունից:

Հարկ է նշել նաև, որ գործող իրավական կարգավորումը շատ հաճախ խոչընդոտում է նաև ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող շինության գրավադրումը, մասնավորապես՝ երբ շինությունը համատեղ սեփականություն է և գտնվում է համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի վրա: Այդ դեպքում հողամասը և դրա վրա կառուցված շինությունը մեկ կադաստրային միավոր են, ստացվում է, որ առանց հողամասի հիփոթեքի հնարավոր չէ գրավադրել դրա վրա կառուցված շինությունը:

Առկա իրավիճակում ստացվում է, որ ամուսինները, ովքեր ցանկանում են հիփոթեքային վարկի միջոցով ձեռք բերել բնակելի տուն և հանդիսանալ համատեղ սեփականատերեր չեն կարող իրագործել իրենց ցանկությունը: Այդ դեպքում վերջիններս կանգնում են ընտրության առջև. կամ բաժանել գույքը միմյանց միջև, կամ հրաժարվել հիփոթեքային վարկով բնակելի տուն գնելու մտադրությունից:

Այսպիսով՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի՝ օրենսդրությամբ սահմանված գրավադրման արգելքն ինքնաբերաբար հանգեցնում է ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող բնակելի տան կամ շինության՝ օրենսդրությամբ չսահմանված գրավադրման արգելքի:

Փորձելով հասկանալ օրենսդրի՝ նման կար-

գավորման սահմանման նպատակը՝ կարող եմ փաստել միայն, որ օրենսդիրը, նման կարգավորում սահմանելով, ցանկացել է պաշտպանել համատեղ սեփականատեր հանդիսացող գրավատուի շահերը՝ դիտարկելով այն իրավիճակը, երբ հողամասն ունի մի քանի սեփականատեր, և սեփականատերերից յուրաքանչյուրն էլ համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի վրա ունի միայն իրեն սեփականության իրավունքով պատկանող առանձնացված շինություն, որը ցանկանում է գրավադրել ֆինանսական կազմակերպությունում և ստանալ ֆինանսավորում, սակայն, ցանկանալով գրավադրել միայն իրեն սեփականության իրավունքով պատկանող շինությունը, հարկադրված է գրավադրել նաև այդ շինության տակ գտնվող հողամասը, որը համատեղ սեփականություն է այլ անձանց հետ, քանի որ շինությունը և հողամասը մեկ կադաստրային միավոր են, և շինությունն առանց հողամասի չի կարող գրավադրվել: Տվյալ դեպքում, գրավադրելով այլ անձանց հետ համատեղ սեփականության իրավունքով տնօրինվող հողամասը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի մեկ այլ կարգավորման համաձայն՝ համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը գրավադրելով՝ կգրավադրվեն նաև այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող շինությունները, որոնք գտնվում են համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի վրա:³

Այսպիսով՝ եթե չլիներ համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի հիփոթեքի՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում նախատեսված արգելքը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով համատեղ սեփականություն հանդիսացող հողամասը կգրավադրվեր մյուս համատեղ սեփականատերերի գրավոր համաձայնությամբ:⁴

Սակայն այս դեպքում էլ համատեղ սեփականատերերի կողմից հողի գրավադրման համար գրավոր համաձայնություն տալու դեպքում ամբողջ հողը գրավադրված կհամարվի ֆինանսական կազմակերպությունում, նույնիսկ ավելին՝ այդ հողի վրա կառուցված միայն համատեղ սեփականատերերից յուրաքանչյուրին

³ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մաս:

⁴ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մաս:

սեփականության իրավունքով պատկանող շինությունները նույնպես կհամարվեն գրավադրված:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ օրենսդրի կողմից ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում գույքերի գրավադրման վերաբերյալ սահմանված վերը նշված կարգավորումների առկայության դեպքում համատեղ հողամասի հիփոթեքի արգելքը չսահմանելու պարագայում՝ միակ սեփականատեր հանդիսացող քաղաքացիները կարող էին հայտնվել անբարենպաստ պայմաններում՝ այլ անձի պարտավորությունների համար իրենց սեփականությունը ոչ իրենց ցանկությամբ գրավի առարկա դարձնելով: Սակայն օրենսդիրը, ցանկանալով պաշտպանել միակ սեփականատեր հանդիսացող քաղաքացիների իրավունքներն ու շահերը, սահմանափակել և հավասարապես չի պաշտպանել համատեղ սեփականատերերի իրավունքները՝ վերջիններիս արգելելով գրավադրման եղանակով տնօրինել իրենց սեփականությունը:

Նշենք, որ իմ կողմից ուսումնասիրված օտարերկրյա որևէ իրավական համակարգում նման իրավական կարգավորում առկա չէ, մասնավորապես, ուսումնասիրելով Ամերիայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի Հանրապետության, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի իրավական կարգավորումները՝ սեփականության ձևերի և դրանց տնօրինման հետ կապված, եկա հետևյալ եզրահանգմանը.

Նշված բոլոր իրավական համակարգերում սահմանվում է սեփականության երկու ձև՝ համատեղ սեփականություն և ընդհանուր սեփականություն: Համատեղ սեփականություն է համարվում մեկից ավելի անձանց կողմից ամբողջ գույքի միասին համատեղ տնօրինումը, օգտագործումը և տիրապետումը, և որտեղ բաժիններ առանձնացված չեն: Համատեղ սեփականատերերից յուրաքանչյուրը պետք է իր շահն ու հետաքրքրությունն ունենա համատեղ սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման

գործարքներում: Համատեղ սեփականություն հանդիսացող գույքերն առանց որևէ սահմանափակման կարող են գրավադրվել, սակայն, կախված տվյալ երկրի, իսկ ԱՄՆ-ում՝ նահանգի կողմից սահմանված իրավական կարգավորումից, կարող են գրավադրվել կամ բոլոր համատեղ սեփականատերերի գրավոր համաձայնությամբ, կամ առանց վերջիններիս համաձայնության:⁵

Ընդհանուր բաժնային սեփականությունն ընդհանուր համատեղ սեփականությունից տարբերվում է այնքանով, որ մեկից ավելի սեփականատերերը սեփականության իրավունքով տիրապետում, օգտագործում և տնօրինում են ամբողջ գույքի մի բաժինը, այսինքն՝ յուրաքանչյուր սեփականատեր ունի քանակապես առանձնացված բաժնեմաս, և յուրաքանչյուրն իրավունք ունի առանց մյուս սեփականատերերի համաձայնության վաճառելու և գրավադրելու իր սեփականությունը:⁶ Համատեղ սեփականության և ընդհանուր սեփականության հիմնական և ամենակարևոր տարբերությունն այն է, որ համատեղ սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող գույքը ժառանգաբար չի կարող փոխանցվել իր իրավահաջորդներին, դա փոխանցվում է մյուս համատեղ սեփականատերերին, իսկ դրան ի հակառակ՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը ժառանգաբար կարող է փոխանցվել:⁷

Ուսումնասիրելով օտարերկրյա օրենսդրությունը, մասնավորապես՝ ընդհանուր համատեղ և ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքերի տնօրինման հետ կապված կարգավորումները, փորձելով հասկանալ օրենսդրի նպատակը և բախվելով քաղաքացիների՝ իրենց սեփականությունը տնօրինելը խոչընդոտող առկա ՀՀ օրենսդրական կարգավորումներին՝ անհրաժեշտություն եմ համարում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում որոշակի փոփոխությունների կատարումը.

⁵ Thompson, Jayne. “Mortgages as Joint Tenants.” Pocket Sense, <https://pocketsense.com/mortgages-joint-tenants-20243.html>. Accessed 28 February 2018.

⁶ Realty Times: Can One Co-Owner Mortgage a Property? Benny Kass, 24 SEPTEMBER 2001.

⁷ <https://www.lawhandbook.sa.gov.au/ch23s08s12.php>, Accessed February, 28th 2018

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում առկա 265-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Խնդրահարույց հոդվածն ուժը կորցրած ճանաչելուց հետո հողամասի հիփոթեքը կիրականացվի՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում սահմանված ընդհանուր համատեղ և ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի գրավադրման կարագավորումների համաձայն:

Մասնավորապես՝ բաժնային սեփականություն հանդիսացող գույքի գրավադրման դեպքում դա կարող է գրավադրվել միայն գույքի համապատասխան բաժնի սեփականատիրոջ կողմից՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության,⁸ իսկ համատեղ սեփականություն հանդիսացող գույքի գրավադրման դեպքում համատեղ սեփականություն հանդիսացող գույքը կարող է գրավադրվել բոլոր համատեղ սեփականատերերի գրավոր համաձայնությամբ:⁹

Նշված փոփոխությունն իրականացնելուց հետո, որպես գույք, հողամասի տնօրինման տարբերակված մոտեցումը նույնպես կվերանա, ինչը հատուկ է Հայաստանի Հանրապետությանը և, որ ամենակարևորն է՝ սեփականության բոլոր ձևերը՝ թե՛ ընդհանուր բաժնային սեփականությունը և թե՛ ընդհանուր համատեղ սեփականությունը հավասարապես կպաշտպանվեն օրենքի ուժով և ազատորեն կզարգանան:

2. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածում լրացում կատարել՝ վերաշարադրելով հետևյալ կերպ.

Հոդված 231. Ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի գրավը

1. Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը կարող է գրավ դրվել միայն բոլոր սեփականատերերի գրավոր համաձայնությամբ, որի դեպքում գրավի իրավունքը

վունքը փարածվում է ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող ամբողջ գույքի վրա:

Ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող հողամասը կարող է գրավ դրվել միայն հողամասի և դրա վրա գտնվող կամ կառուցվող բոլոր անշարժ գույքերի սեփականատերերի գրավոր համաձայնությամբ, որի դեպքում գրավի իրավունքը փարածվում է ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող հողամասի, ինչպես նաև դրա վրա գտնվող կամ կառուցվող բոլոր անշարժ գույքերի վրա:

2. Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր գույքի նկատմամբ իրավունքում իր բաժինը գրավ դնել՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության, և այդ դեպքում գրավի իրավունքը փարածվում է ընդհանուր բաժնային սեփականության համապատասխան բաժնի վրա:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում առկա 265-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու առաջարկի հետ միաժամանակ՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածի լրացումը, կարծում եմ, կլուծի օրենսդրի մտահոգությունը, որի հիման վրա էլ նախատեսվել է սույն կարգավորումը, քանի որ սույն կարգավորմամբ, կարծում եմ, օրենսդիրը ցանկացել է պաշտպանել ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասի վրա գտնվող միակ սեփականատեր հանդիսացող՝ շինության սեփականատիրոջ իրավունքները և օրինական շահերը, որոնք կարող են խախտվել՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորման համաձայն, այն է՝ հողամասի հիփոթեքի դեպքում գրավի իրավունքն օրենքի ուժով տարածվում է նաև այդ հողամասում գտնվող կամ կառուցվող՝ գրավատուի շենքերի և շինությունների վրա:

Դա կնպաստի ընդհանուր համատեղ սեփականատեր հանդիսացող քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, քանզի վերջիններս ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը գրավադրելիս համաձայնություն տալով

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

⁸ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մաս:

⁹ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մաս:

կգիտակցեն, որ իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքի վրա է տարածվելու գրավի իրավունքը, իսկ ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող հողամասի հիփոթեքի ժամանակ համաձայնություն տալով՝ կգիտակցեն նաև այդ հողամասի վրա գտնվող կամ կառուցվող շինությունների հնքնաբերաբար հողամասի հիփոթեքի հիմքով գրավադրված համարվելու ռիսկը և կհամաձայնվեն կրել դա:

Հողվածում առաջարկված փոփոխությունները կօգնեն քաղաքացիներին առանց որևէ խոչընդոտների և անհարկի ու պարտադրված ծախսեր կատարելու իրացնել իրենց սեփակա-

նության իրավունքը՝ որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց գրավադրելով իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքը, և այդ գույքի ապահովմամբ ֆինանսավորում ստանալ ֆինանսական կազմակերպություններից: Փոփոխությունների կատարման շնորհիվ՝ կնվազեն նաև ֆինանսավորման ստացման համար քաղաքացիների կողմից կատարվող ծախսերը, իսկ ֆինանսական կազմակերպություններն էլ որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց կընդունեն նաև ընդհանուր համատեղ սեփականության ներքո գտնվող հողամասի հիփոթեքը:



ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության
մշակման վարչության պետի տեղակալ

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՅ ԱՉԱՏՎԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ,
ԱՆԽԱՂՅԱԿԱՐԵԼԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՒ ԴԵՊՐՈՒՄ**

Պատասխանատվությունից ազատելու նորմերը կոչված են ապահովելու քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների կիրառման օրինականությունը և նպատակահարմարությունը, նպաստելու քաղաքացիական իրավունքների պաշտպանության մեխանիզմների իրացմանը, քաղաքացիական շրջանառության կայունությանը: Պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտը կարևոր դերակատարում ունի նաև իրավունքի արդարության սկզբունքի իրացման տեսանկյունից¹:

Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (այսուհետ՝ Ապրանքներ) թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում պատասխանատվությունից ազատվելու խնդրին անդրադարձ է կատարվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1091-րդ հոդվածում², որտեղ որպես պատասխանատվությունից ազատվելու հիմքեր առանձնացվում են անհաղթահարելի ուժը կամ սպառողի կողմից Ապրանքների օգտագործման, պահպանման կանոնների խախտում թույլ տալը:

Ինչպես վերը նշեցինք՝ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում վնաս պատճառած անձը կարող է

ազատվել պատասխանատվությունից անհաղթահարելի ուժի առկայության դեպքում: Անհաղթահարելի ուժը սովորաբար բնորոշվում է որպես այնպիսի որակյալ պատահար, որն աչքի է ընկնում օբյեկտիվ անկասելիությամբ և արտակարգությամբ³: Անհաղթահարելի ուժ դիտարկվող երևույթները սովորաբար բաժանվում են երեք հիմնական խմբերի՝ 1) բնական երևույթներ, 2) սոցիալական բնույթի հանգամանքներ, 3) պետական մարմինների գործողություններ⁴:

Արտապայմանագրային պատասխանատվության, այդ թվում՝ Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում որպես անհաղթահարելի ուժ կարող են դիտարկվել տվյալ պայմաններում այնպիսի արտակարգ և անկանխելի հանգամանքները, որոնց ազդեցությունը հանգեցրել է վնասի պատճառմանը:

Ըստ այդմ՝ վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հարցը քննելիս պետք է պարզել, թե արդյոք տվյալ հանգամանքն իր բնույթով արտասովոր, բացառիկ է եղել, արդյոք անկանխելի է եղել՝ գնահատելով և՛ տվյալ հանգամանքի վրա հասնելու անխուսափելիությունը, և՛ դրա հետևանքների

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Տեն Богданов Д.В. “Освобождение от ответственности и ее исключение в российском гражданском праве”: автореф. дис. канд. юрид. наук, Пермь, 2012, էջ 3, էջ 16:
² Վերը նշված հանգամանքները վնաս պատճառած անձին պատասխանատվությունից ազատելու հատուկ հիմքեր են՝ հաշվի առնելով այն, որ Քաղաքացիական օրենսգրքի 60-րդ գլուխը, կարգավորելով վնասի հատուցման ընդհանուր դրույթները, նախատեսում է նաև վնասի հատուցման մեթոման կամ պատասխանատվությունից ազատման այլ ընդհանուր հիմքեր:
³ Տեն Բարսեղյան Ս.Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս. չորրորդ հրատարակություն, Երևանի պետ. համալս., Եր.: «Տիգրան Մեծ» հրատ., 2014, էջ 538:
⁴ Տեն Богданов Д.В., վերը նշված աշխատությունը, էջ 28:

անկանխելիությունը: Վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հարցը քննելիս պետք է գնահատել, թե արդյոք արտակարգ և անկանխելի հանգամանքի ազդեցությունն է հանգեցրել Ապրանքի թերության առաջացմանը, և արդյոք վնաս պատճառած անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք կկանխեին կամ նվազագույնի կհասցնեին պատճառված վնասը:

Ընդ որում՝ Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում այս կամ այն հանգամանքի՝ որպես անհաղթահարելի ուժ որակումը պետք է իրականացվի ոչ թե ընդհանրապես տվյալ հանգամանքի արտակարգ և անկանխելի բնույթ ունենալու տեսանկյունից, այլ՝ տվյալ իրադրությունում դրա արտակարգ և անկանխելի հանդիսանալու տեսանկյունից: Ըստ այդմ՝ տվյալ հանգամանքի որպես անհաղթահարելի ուժ դիտարկումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով կոնկրետ իրադրությունը, ժամանակը, վայրը, գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը:

Քննարկելով անհաղթահարելի ուժի առկայության դեպքում պատասխանատվությունից ազատվելու հարցը՝ անդրադառնանք վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու մյուս հիմքին: Օրենսգրքի 1091 հոդվածով որպես այդպիսին առանձնացվում է սպառողի կողմից Ապրանքների օգտագործման կամ դրանց պահպանման կանոնները խախտելը: Վերը նշված հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Որպես վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հիմք կարող է ծառայել Ապրանքների օգտագործման կամ դրանց պահպանման սահմանված կանոնների ցանկացած խախտում.

2. Վնաս պատճառած անձը կարող է ազատվել պատասխանատվությունից բացառապես այն կանոնների խախտման դեպքում, որոնք վերաբերել են Ապրանքների օգտագործմանը կամ պահպանմանը:

Մինչդեռ մենք համարում ենք, որ Ապրանքների օգտագործման, պահպանման կանոններ

րի ցանկացած խախտման (այդ թվում՝ հասարակ անզգուշությամբ) առանձնացումը որպես վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հիմք հիմնավոր չէ, քանի որ նման մոտեցումը համահունչ չէ սպառողի՝ «ոչ արհեստավարժ և շուկայի առավել խոցելի» սուբյեկտ լինելու գաղափարին, ինչպես նաև իր կյանքի, առողջության և գույքի համար անվտանգ Ապրանք օգտագործելու պահանջի իրավունքի բովանդակությանը և, ըստ այդմ՝ վաճառողի և արտադրողի՝ Ապրանքի անվտանգությունն ապահովելու պարտականության էությունը:

Բացի այդ՝ նման կարգավորումը խնդրահարույց է Օրենսգրքի 1091-րդ հոդվածի և 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության ճիշտ հարաբերակցության և կիրառության տեսանկյունից, քանի որ, Օրենսգրքի 1076-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ տուժողի հասարակ անզգուշության դեպքում վրա հասնող իրավական հետևանքները արտահայտում են ինչպես վնասի հատուցումը մերժելով, այնպես էլ՝ դրա չափը նվազեցնելով: Ընդ որում՝ նշված հոդվածով տուժողի կուպիտ անզգուշությունը չի դիտարկվում որպես վնասի հատուցման մերժման կամ դրա չափի նվազեցման պարտադիր պայման, այլ՝ դատարանին, ըստ էության, իրավունք է վերապահում գործի հանգամանքների առանձնահատկությունների հաշվառմամբ վնաս պատճառած անձին ազատել պատասխանատվությունից կամ նվազեցնել վնասի հատուցման չափը:

Ուշադրության է արժանի այս հարցի կապակցությամբ ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում զարգացած «Ապրանքի սխալ գործածության» կամ «Ոչ իրավաչափ վարքագծից պաշտպանության» դոկտրինը, որի հիմնական իմաստն այն է, որ ապրանքը չի կարող անվտանգ լինել ցանկացած նպատակի կամ օգտագործման ցանկացած ձևի համար: Ըստ այդմ՝ ապրանքի սխալ գործածությունը հիմք է վնասների հատուցման չափի նվազեցման, ոչ թե՝ հատուցումը մերժելու համար: Միայն սպառողի կողմից ապրանքի «անկանխատեսելի» սխալ օգտագործումն է հանգեցնում վնասի հատուցման մերժմանը⁵:

⁵ Stéu Owen, David G. “Products Liability: User Misconduct Defenses.” SCL Rev, 2000, N 52:1, էջ 45-48:

Մենք այն տեսակետին ենք, որ Օրենսգրքի 1091-րդ հոդվածով նախատեսված՝ Ապրանքների օգտագործման կամ պահպանման կանոնների խախտումը կարող է հետևանք լինել տուժողի դիտավորության, որի պարագայում վնաս պատճառած անձը կարող է ազատվել պատասխանատվությունից: Ըստ այդմ, հաշվի առնելով Օրենսգրքի 1091-րդ հոդվածով նախատեսված նորմի իրավական որոշակիությունն ապահովելու և միասնական իրավակիրառ պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությունը, համարում ենք, որ Օրենսգրքի 1091-րդ հոդվածով պետք է հստակ շեշտադրվի, որ դա կիրառելի է բացառապես տուժողի դիտավորության հետևանքով Ապրանքներին առաջադրվող կանոնների խախտման դեպքում: Այս պարագայում կապահովվի տուժողի դիտավորության և կոպիտ անզգուշության դեպքում վրա հասնող հետևանքների հստակ տարանջատումը, որպես վերջնական արդյունք նաև Օրենսգրքում ամրագրված՝ մեղքի տարբեր ձևերի դրսևորման հետ կապված իրավական ռեժիմների տարանջատումը:

Այժմ անդրադառնանք այն խնդրի քննարկմանը, որ Օրենսգրքի 1091-րդ հոդվածով վնաս պատճառած անձը կարող է ազատվել պատասխանատվությունից բացառապես այն կանոնների խախտման դեպքում, որոնք վերաբերելի են Ապրանքների օգտագործմանը կամ պահպանմանը: Կարծում ենք՝ Ապրանքների փոխադրման կանոնների խախտումը ևս կարող է հանգեցնել Ապրանքների թերությունների ի հայտ գալուն, հատկապես, այն հանգամանքի հաշվառմամբ, որ Ապրանքների բաղադրամասային թերությունների առաջացումն ուղղակիորեն կարող է փոխկապակցված լինել դրանց փոխադրման կանոնների խախտման հետ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 1091-րդ հոդվածում վնաս պատճառողին պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն պետք է ընձեռվի նաև տուժողի կողմից Ապրանքների փոխադրման կանոնների խախտման պարագայում ևս:

Հարկ է նաև նշել, որ Օրենսգրքի 1088-րդ հոդվածի 2-րդ մասը վնասի հատուցման ինստիտուտի կիրառումը պայմանավորում է միայն սպառողական նպատակով Ապրանքներ ձեռք բերելու նպատակի հետ, սակայն Օրենսգրքը (1088-րդ հոդված 2-րդ մաս, 1091-րդ հոդված) լուծում չի տալիս վնաս պատճառած անձի պատասխանատվության հարցին այն դեպքում, երբ թերություն ունեցող Ապրանքը ձեռք է բերվել սպառողական նպատակով, սակայն պարզվել է, որ ի սկզբանե արտադրողը (վաճառողը) չի նախատեսել Ապրանքը իրացնել սպառողական նպատակներով կամ, անգամ նախատեսելու դեպքում՝ հետագայում շրջանառության մեջ չի դրել (օրինակ՝ Ապրանքը շրջանառության մեջ է հայտնվել գողության պատճառով):

Ներկա իրավակարգավորումների պարագայում Ապրանք արտադրողը (վաճառողը) ենթակա կլինի պատասխանատվության անգամ այն պարագայում, երբ ի սկզբանե որոշել է, որ Ապրանքը սպառման համար պիտանի չէ, չի դրել շրջանառության մեջ, ձեռնարկել է բավարար միջոցներ դրա շրջանառությունը բացառելու նպատակով: Հաշվի առնելով նման մոտեցման հիմնավոր և արդարացված չլինելը՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 1091-րդ հոդվածում Ապրանք արտադրողի (վաճառողի) կողմից Ապրանքը շրջանառության մեջ չդնելու հանգամանքը ևս պետք է առանձնացվի որպես վերջինիս պատասխանատվությունից ազատվելու հիմք: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Եվրոպական երկրներում վնաս պատճառած անձը, ի թիվս այլ հիմքերի, ազատվում է պատասխանատվությունից նաև այն դեպքերում, երբ ապացուցում է, որ ապրանքը շրջանառության մեջ դնելիս գիտատեխնիկական գիտելիքի մակարդակը հնարավորություն չի տվել հայտնաբերելու դրա թերության առկայությունը⁶: Այս դոկտրինը հայտնի է «Զարգացման ռիսկեր» (Development Risks) կամ «Տեխնիկայի մակարդակ» (State of Art) անվանմամբ⁷: Դրա նախատեսումը հետազոտություն-

⁶ Stn Council Directive 85/374/EEC of 25 July 1985 “On the approximation of the laws, regulations and administrative provisions of the Member States concerning liability for defective products”, Official Journal of the European Communities, L.210, 1985, N 07/08:

⁷ Դոկտրինի հիմքը դրվել է Եվրոպական Միության 1985 թվականի հուլիսի 25-ի Դիրեկտիվի ընդունման հետևանքով:

նը խթանելու նպատակ է հետապնդել⁸, բայց նաև բազմաթիվ վեճերի առիթ է տվել⁹:

Ինչպես նշում է Ռ.Դրեյֆուսը՝ այս հիմքով պատասխանատվությունից ազատվելու համար վնաս պատճառած անձը պետք է ապացուցի, որ այդ պահին առկա (հասանելի) գիտելիքը հնարավորություն չի տվել իրազեկ լինելու ապրանքի իրականում վտանգավոր լինելու մասին, կամ ռիսկը առկա է եղել, սակայն գիտելիքը բավարար չի եղել դա վերացնելու համար¹⁰: «Չարգացման ռիսկեր» դոկտրինին վերաբերելի են այն իրավիճակները, երբ ապրանքները պատրաստվել են առավել վաղ ժամանակահատվածի ստանդարտներին համապատասխան, բայց հետագայում դրանք այնքան են փոխվել, որ ապրանքները պատրաստվել են այլ, որպես կանոն՝ առավել լավ եղանակով: Օրինակ՝ ինչպես արձանագրել է ԱՄՆ վերաքննիչ դատարանը Bruce ընդդեմ Martin-Marietta Corp., գործով՝ ճամփորդները չեն կարող 1952 թվականին կառուցված օդանավից ակնկալել այն նույն անվտանգությունը, ինչ 1970 թվականին կառուցվածից: Այս դոկտրինին են վերաբերելի նաև այն իրավիճակները, երբ ապրանքի թերություններն անհայտ են և անճանաչելի (unknowable) (օրինակ՝ դեղն արտադրելիս դրա կողմնակի ազդեցության մասին տեղեկություն չունենալը): Անդրադառնալով նշված դոկտրինին՝ Ուեյդը նշում է, որ «տեխնիկայի մակարդակ» տերմինը նման է «քամելեոնի», քանի որ կարող է վերաբերելի լինել ամեն ինչի¹¹: Շատ տեսաբաններ ներկայումս էլ համարում են, որ պատասխանատվությունից ազատվելու այս հիմքը խնդրահարույց է¹²: Այս դոկտրինը կիրառելի է եվրոպական երկրների մեծ մասում (բացառությամբ Ֆինլանդիայի, Լյուքսեմբուրգի): Համանման է մոտեցումը նաև ամերիկյան նահանգների մեծ մասում: Կան նաև երկրներ, որոնք նախատեսում են դոկտրինի կիրառման որոշ սահմանափակումներ: Օրինակ՝ Իսպա-

նիայում դա կիրառելի չէ սննդամթերքի և դեղերի, Գերմանիայում՝ դեղերի և գենետիկորեն մշակված ապրանքների, Ֆրանսիայում՝ մարդկային ծագմամբ նյութի (արյան) դեպքում: Այնուամենայնիվ, ինչպես նշում է Մ.Ռեյմանը՝ դոկտրինն այդքան էլ արդիական չէ, առնվազն եվրոպական երկրներում դրա հետ կապված դատական հայցերը հազվադեպ են¹³:

Ընդհանուր գծերով վերլուծելով նշված դոկտրինը՝ կցանկանայինք նշել, որ որպես նոր զարգացող ուղղություն դա կարող է կարևոր դերակատարում ունենալ հատկապես գիտատեխնիկական մեծ առաջընթաց ապրող երկրներում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով նաև նման երկրներում այս ինստիտուտի կիրառման փորձի պակասը, արձանագրված խնդիրները, կարծում ենք՝ ներկա պահին վաղաժամ է պատասխանատվությունից ազատվելու այս հիմքի նախատեսումը կամ, այլ կերպ ասած՝ դրա մեխանիկական փոխառումը քաղաքացիական օրենսդրություն՝ հաշվի առնելով նաև և առաջ նման իրավական կարգավորում նախատեսելու գործնական անհրաժեշտության պակասը և այս ինստիտուտի ոչ իրավաչափ կիրառման վտանգը:

Քննարկելով վնաս պատճառած անձի պատասխանատվությունից ազատվելու հարցը՝ կցանկանայինք անդրադառնալ նաև ապացուցման բեռի հիմնահարցին, քանի որ Ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի դեպքում առանցքային խնդիրներից մեկը վնասի հատուցման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման նախադրյալների առկայությունն է: Վնասի հատուցման իրավունքի արդյունավետ կենսագործման գրավականներից կարևորագույնը տուժողի և վնասի պատճառողի միջև ապացուցման բեռի համաչափ բաշխվածության և, ըստ այդմ՝ վերջիններիս շահերի արդարացի հավասարակշռության ապահովումն է: Ապացուցման պարտականու-

⁸ Տե՛ս Kim, Chan Jin. “The Korean Product Liability Act.” Korean J. Int’l & Comp., 2005, L. 33:47, էջ 88:

⁹ Տե՛ս Griffiths, Lord; De Val, Peter; Dormer, RJ. “Developments in English Product Liability Law: A Comparison with the American System.” Tul. L. Rev., 1987, L. 62, էջ 384:

¹⁰ Տե՛ս Dreyfuss, Richard H. “The Italian Law on Strict Products Liability”, NYL Sch. J. Int’l & Comp., 1997, L. 17, էջ 72-73:

¹¹ Տե՛ս Griffiths, Lord; De Val, Peter; Dormer, RJ, վերը նշված աշխատությունը, էջ 384-386:

¹² Տե՛ս Stapleton, Jane. “Products Liability in the United Kingdom: The Myths of Reform.” Tex. Int’l, 1999, LJ 34:45, էջ 58-60:

¹³ Տե՛ս Reimann, Mathias. “Liability for defective products at the beginning of the twenty-first century: Emergence of a worldwide standard?” The American Journal of Comparative Law 51, 2003, N 4, էջ 780-781:

թյունը բաշխելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ընդհանուր կանոնի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Ինչպես նշում է Ս.Գ. Մեղրյանը, քննարկված ընդհանուր կանոնից բացի՝ կան նաև հատուկ կանոններ՝ ապացուցողական կանխավարկածներ, որոնց ուժով որոշակի փաստ վկայակոչող գործին մասնակցող անձն ազատվում է դա ապացուցելու պարտականությունից¹⁴: Ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոնների նախատեսումը նպատակ է հետապնդում կողմերի միջև ապահովել ողջամիտ և արդարացի հավասարակշռություն՝ հաշվի առնելով գործնականում այս կամ այն կողմի համար որոշակի փաստերի ապացուցման դժվարությունը կամ անհնարիությունը: Հաշվի առնելով Ապրանքների թերությունների հետևանքով վնաս պատճառելու դեպքում ապացուցման պարտականության բաշխման հատուկ կանոնների բացակայությունը՝ կարող ենք արձանագրել, որ տուժողը պետք է ապացուցի իր կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի առկայությունը, Ապրանքների արտադրական, կառուցվածքային (և այլ) թերությունների, վնասի և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը: Վնասի հատուցման պարտադիր պայման հանդիսացող տարրերից որևէ մեկի ապացուցման անհնարիության դեպքում վնասը ենթակա չի լինի հատուցման: Ըստ այդմ, մի կողմից, խնդրահարույց է տուժողին՝ վնասի հատուցման բոլոր պայմանների ապացուցման անհամաչափ պարտականությամբ ծանրաբեռնելը, մյուս կողմից՝ վնաս պատճառողին ապացուցման պարտականության տեսանկյունից լրացուցիչ անհիմն պահանջ առաջադրելը: Մեր կարծիքով՝ տուժողի և վնաս պատճառողի շահերի պատշաճ հավասարակշռության ապահովման տեսանկյունից թերևս խնդրահարույց է վնասի հատուցման պարտադիր պայմաններից՝ Ապրանքների բոլոր թերությունների առկայության ապացուցման պարտականությունը

սպառողի վրա դնելը՝ հաշվի չառնելով այդ թերությունների առանձնահատուկ բնույթը: Մասնավորապես՝ Ապրանքների վերաբերյալ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություն տրամադրելու հետևանքով առաջացած թերությունների առկայության ապացուցումը սպառողից, որպես կանոն, ընդամենը պահանջում է ներկայացնել Ապրանքներին կցվող տեխնիկական փաստաթղթերը, պիտակները (կամ այլ փաստաթղթեր)՝ ապացուցելով, որ Ապրանքների մասին տրամադրվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, կամ չի տրամադրվել ամբողջական ծավալով անհրաժեշտ տեղեկատվություն: Ապրանքների կառուցվածքային թերությունների դեպքում սպառողը, որպես կանոն, պետք է մատնացույց անի Ապրանքների կառուցվածքի շեղումը համանման Ապրանքներին սովորաբար ներկայացվող պահանջներից: Մինչդեռ՝ Ապրանքների արտադրական թերությունների առկայության ապացուցումը կարող է հանգեցնել որոշակի դժվարությունների, հետևյալ պատճառաբանությամբ.

1. Սպառողը, մասնակից չլինելով Ապրանքների արտադրության, պատրաստման գործընթացին, զրկված է դրա պատճառով առաջացած Ապրանքների թերությունները հավաստող անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից.

2. Ապրանք արտադրողը (աշխատանք կատարող, ծառայություն մատուցող), հանդիսանալով արտադրության գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման անմիջական պատասխանատուն, տիրապետում է Ապրանքների արտադրական թերությունների բացակայությունն ապացուցելու անհրաժեշտ գործիքակազմի.

3. Հատկապես տեխնիկապես բարդ Ապրանքների թերությունների դեպքում դրանց ապացուցումը սպառողի համար դառնալու է անհնարին, քանի որ դրանց առկայությունը կարող է հավաստվել հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար փորձագետ ներգրավելու դեպքում:

Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ

¹⁴ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Ապացուցումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում: Դասախոսություններ: Երևանի պետ. Համալսարան: Եր., ԵՊՀ հրատ, 2012, էջ 104-107, 109-112:

Ապրանքների արտադրական թերությունների դեպքում, որպես կանոն, տուժողն օբյեկտիվորեն չի կարող ներկայացնել այդ թերությունների առկայությունը հիմնավորող բավարար ապացույցներ, քանի որ դրանք, որպես կանոն, գտնվում են արտադրողի տիրապետության ներքո: Հետևաբար՝ տուժողին ապացուցման տեսանկյունից՝ նման պահանջ առաջադրելը, վնաս պատճառողի համեմատ, վերջինիս կղնի նվազ բարենպաստ պայմանում, իսկ, ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր

գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում¹⁵:

Այսպիսով, հաշվի առնելով նշվածը, կարևորելով տուժողի և վնաս պատճառողի միջև արդարացի, ողջամիտ հավասարակշռության ապահովման անհրաժեշտությունը՝ համարում ենք, որ Ապրանքների արտադրական թերությունների դեպքում որպես ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոն, վնաս պատճառողի վրա պետք է դրվի դրանց բացակայության ապացուցման պարտականությունը, քանի որ նման ապացույցների ներկայացումը, որպես կանոն, սպառողի համար դժվարին է կամ անհնարին, և դրանք սովորաբար գտնվում են վնաս պատճառողի տիրապետության ներքո:



¹⁵ Տե՛ս Անկերլ ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, կետ 38:

ԿԱՐԵՆ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

«ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՉԲՈՒՆՔԸ»՝ ՈՐՊԵՍ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԻ

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության¹ 50-րդ հոդվածի 1-ին մասը, ամրագրելով, որ՝ «յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք», դրանով իսկ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ է ներմուծել վարչական իրավունքի գիտությանը հայտնի, այսպես կոչված, «հոգատարության սկզբունքը» (“the principle of care”): Այս իրավական սկզբունքը, որը կազմում է պատշաճ վարչարարության էությունը և դրա անքակտելի մասը, իրավաբանական գրականությունում բնորոշվում է որպես յուրաքանչյուր իրավական պետության կենտրոնական և կարևորագույն հատկանիշներից մեկը²:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «հոգատարության սկզբունքն» անխզելիորեն կապված է նույն հոդվածում թվարկված մյուս բոլոր ընթացակարգային իրավունքների հետ: «Հոգատարության սկզբունքի» և պատշաճ վարչարարության իրավունքի մյուս տարրերի այդպիսի սերտ փոխկապակցվածության պատճառով մասնագիտական գրականությունում արտահայտվել է այն տեսակետը, որ պատշաճ վարչարարության իրավունքի

հասկացության ծավալը համընկնում է «հոգատարության սկզբունքի» հասկացության ծավալի հետ, իսկ այդ հիմնարար իրավունքի՝ իրավունքի աղբյուրներում թվարկված մյուս բաղադրիչները պարզապես մանրամասնում են պատշաճ վարչարարության իրավունքի բովանդակությունը՝ առանց դուրս գալու «հոգատարության սկզբունքի» շրջանակներից³: Որոշ տեսաբաններ անգամ կարծում են, թե պատշաճ վարչարարության իրավունքը չունի առանձին բովանդակություն և սոսկ «հոգատարության սկզբունքի» կրկնողությունն է⁴:

Մյուս կողմից՝ իրավաբան-հետազոտողների մեկ այլ խումբ պնդում է, որ իրավունքի աղբյուրներում թվարկված պատշաճ վարչարարության իրավունքի ընթացակարգային բաղադրիչները հստակեցնում և կոնկրետացնում են պատշաճ վարչարարության տարբեր կողմերը և չեն նույնանում «հոգատարության սկզբունքի» բովանդակության հետ⁵:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այն իրողության վրա, որ «հոգատարության սկզբունքը», որն ընկալվում է որպես պատշաճ վարչարարության իրավունքի առաջնային տարր⁶, եվրոպական իրավակիրառողների, հատկապես՝ դատական ատյանների, կողմից բնորոշվում է եզրութաբանական տարբեր ձևա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում, Հոդ. 1118:

² Տե՛ս H. C. H. Hofmann, “Inquisitorial Procedures and General Principles of Law: The Duty of Care in the Case Law of the European Court of Justice”, The Nature of Inquisitorial Processes in Administrative Regimes: Global Perspectives (editor: Laverne Jacobs), Ashgate, 2013, էջ 153-166:

³ Տե՛ս Klara Kanska, “Towards Administrative Human Rights in the EU. Impact of the Charter of Fundamental Rights”, European Law Journal, Vol. 10, No. 3, 2004, էջ 312:

⁴ Տե՛ս Hanns Peter Nehl, “Good Administration as Procedural Right and/or General Principle?”, Legal Challenges in EU Administrative Law (editors: H.C.H. Hofmann, A.H. Türk), Cheltenham, Edward Elgar Publishing, 2009, էջ 322-351:

⁵ Տե՛ս Bucura C. Mihaescu Evans, The Right to Good Administration at the Crossroads of the Various Sources of Fundamental Rights in the EU Integrated Administrative System (Luxemburger Juristische Studien – Luxembourg Legal Studies), Nomos, 2015, էջ 392-393:

⁶ Տե՛ս Deirdre Curtin, Herwig C. H. Hofmann, Joana Mendes, “Constitutionalising EU Executive Rule-Making Procedures: A Research Agenda”, European Law Journal, Vol. 19, Issue 1, 2013, էջ 1-21:

կերպումներով, որոնցից են, օրինակ՝ «պատշաճ հոգատարության պարտականությունը» (“the obligation of due care”), «անհրաժեշտ ջանադրության պարտականությունը» (“the duty of requisite diligence”), «մտահոգության սկզբունքը» (“the principle of solicitude”) և այլն⁷: Նշված հասկացությունները հաճախ կիրառվում են որպես միասնական ամբողջություն՝ առանց հստակ տարանջատման⁸, իսկ որոշ դեպքերում դրանք վկայակոչվում են որպես փոխադարձ փոխարինելի իրավական կատեգորիաներ⁹ կամ հոմանիշ հասկացություններ¹⁰: Սակայն երբեմն եվրոպացի իրավակիրառողները քննարկվող սկզբունքներն ընկալում են որպես միմյանց լրացնող, բայց տարբեր գաղափարներ¹¹:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ «հոգատարության սկզբունքն» անհրաժեշտ է դիտարկել լայն և նեղ առումներով: Լայն առումով՝ «հոգատարության սկզբունքը» պատշաճ վարչարարության իրավունքի կարևորագույն, հիմնական ու անկյունաքարային բաղադրիչն է, որը հանգում է յուրաքանչյուր անձի՝ վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի ու ողջամիտ ժամկետում քննության իրավունքներին և ներառում է «ջանադրության» ու «մտահոգության» սկզբունքները:

Նեղ իմաստով՝ «հոգատարության սկզբունքը» կարող է բնութագրվել որպես վարչական մարմիններին ներկայացվող՝ զգոնություն, աչալրջություն և շրջահայեցություն ցուցաբերելու, ինչպես նաև տվյալ գործի հանգամանքներով պայմանավորված ողջամիտ վարչարարություն դրսևորելու պահանջ: Բացի այդ՝ գործի փաստական և իրավաբանական հանգամանքներն անաչառ և ուշադիր կերպով քննարկելու՝

վարչական մարմնի պարտականությունը ենթադրում է նաև, որ վարչական մարմինը պետք է յուրաքանչյուր կոնկրետ գործ քննարկի բազմակողմանիորեն (բոլոր անհրաժեշտ տեսանկյուններից)՝ ընդունվելիք որոշման համար էական նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով (“the requirement of full knowledge”)¹²:

«Հոգատարության սկզբունքի» այս քանակական հատկանիշը, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է քննարկել և որոշում կայացնելիս հիմք ընդունել այն բոլոր գործոնները, որոնք կարող են ազդել ընդունվելիք որոշման վրա, որոշումների ընդունման գործընթացի *որակական* կողմի ապահովման անհրաժեշտ և անփոխարինելի նախադրյալն է: Ընդ որում՝ միայն գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքների մասին ամբողջական տեղեկատվությանը տիրապետելու դեպքում է հնարավոր գնահատել այն փաստերի և ապացույցների ճշմարտացիությունը, որոնք վարչական մարմնի կողմից դրվել են այս կամ այն որոշման կայացման հիմքում: Վերոգրյալից հետևում է, որ «հոգատարության սկզբունքը» հնարավորություն է ընձեռում դատարանին՝ գնահատելու վարչական մարմնի կողմից հաշվի առնված տվյալները թե՛ *քանակական*, թե՛ *որակական* առումներով:

Ինչպես իրավացիորեն նշում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը՝ գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտումը վարչական վարույթի կարևոր խնդիրներից է. այդ սկզբունքը վարչական մարմիններին պարտավորեցնում է հետազոտել գործի բոլոր հանգամանքները, դրանց

⁷ Stn G. H. Addink, Good Governance: Concept and Context, Oxford University Press, 2014, էջ 1-177:

⁸ Stn, օրինակ՝ French Republic v Monsanto Company and Commission of the European Communities (C-248/99 P) գործով Եվրոպական միության դատարանի 08.01.2002 թվականի վճիռը, ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=C-248/99> կայքէջի:

⁹ Stn, օրինակ՝ Jean-Louis Burban v European Parliament (T-133/89) գործով Եվրոպական միության դատարանի 20.06.1990 թվականի վճիռը՝ ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=T-133/89> կայքէջի:

¹⁰ Stn, օրինակ՝ max.mobil Telekommunikation Service GmbH v Commission of the European Communities (T-54/99) գործով Եվրոպական միության դատարանի 30.01.2002 թվականի վճիռը՝ ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=T-54/99> կայքէջի:

¹¹ Stn, օրինակ՝ Henri Maurissen v Court of Auditors of the European Communities (417/85) գործով Եվրոպական միության դատարանի 04.02.1987 թվականի վճիռը՝ ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=417/85> կայքէջի:

¹² Stn Herwig C. H. Hofmann, Morgane Tidghi, “Rights and Remedies in Implementation of EU Policies by Multi-Jurisdictional Networks”, European Public Law (20), 2014, էջ 147-163:

իրական փոխկապվածությունը, զերծ մնալ կանխակալ մոտեցումից և միակողմանիությունից¹³: Այս իմաստով՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բաղադրատարր հանդիսացող «հոգատարության սկզբունքի» (նեղ իմաստով) բովանդակությունն օրենսդրի կողմից բացահայտվել է 18.02.2004 թվականին ընդունված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի¹⁴ 37-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ *վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները*:

Բացի այդ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից հետևում է, որ վարչական մարմինը պարտավոր է սեփական ուժերով ու միջոցներով, այսինքն՝ ի պաշտոնե («ex officio»), պարզել իր կողմից քննվող գործի բոլոր փաստական հանգամանքները՝ կիրառվելիք միջոցի ներգործությունը կրող մասնավոր անձանց սուբյեկտիվ իրավունքների երաշխավորման, ինչպես նաև վերջիններիս ու հանրային իշխանության միջև առկա փաստացի անհավասարությունը մեղմելու նպատակով: Վարչական մարմնի կողմից այս պարտականության թերի կատարումն ընթացակարգային սխալ է, որը հանգեցնում է վարչական ակտի ոչ իրավաչափության¹⁵:

Ավելին՝ այն բոլոր դեպքերում, երբ վարչական մարմինն օժտված է հայեցողական լիազորություններով, վերջինիս կողմից գործի բոլոր հանգամանքների բազմակողմանի և անկողմնակալ քննության պարտականությունն առավել կարևոր նշանակություն է ստանում, քան

նի որ հայեցողական լիազորությունների առկայությունն ինքնին ենթադրում է մի քանի իրավաչափ լուծումներից որևէ մեկի ընտրության վրա ազդող բոլոր գործոնների՝ քննարկման առարկա դառնալու հնարավորությունը և անհրաժեշտությունը: Վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունների կիրառումը, ըստ այդմ, սահմանափակված է «հոգատարության սկզբունքով»:

Այսպիսով՝ «հոգատարության սկզբունքը» պահանջում է վարչական մարմիններից գործել որպես հանրային շահի կրող և գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ պարզելու համար օգտագործել իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ ճիշտ որոշում կայացնելու նպատակով: Ըստ այդմ՝ վարչական մարմինները կաշկանդված չեն վարույթի մասնակիցների կողմից ներկայացված միջնորդություններով, փաստարկներով և ապացույցներով: Վարչական մարմիններն անհրաժեշտության դեպքում պետք է ինքնուրույն միջոցներ ձեռնարկեն գործի ելքի համար նշանակություն ունեցող ցանկացած տեղեկատվություն ձեռք բերելու ուղղությամբ՝ վարույթի մասնակիցներին լսելու, փորձագետ կամ վկա հրավիրելու, գրավոր կամ իրեղեն ապացույցներ հայթայթելու և այլնի միջոցով: Իսկ վարույթի մասնակիցները պարտավոր են օժանդակել վարչական մարմիններին՝ կրելով իրենց համար բարենպաստ կամ բացառապես իրենց հայտնի փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը¹⁶:

«Ջանադրության սկզբունքը» («the principle of diligence») Եվրոպական միության իրավական համակարգում և դոկտրինալ աղբյուրներում հետևողականորեն դիտարկվում է որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ. մի դեպքում ընկալվում է որպես «հոգատարության սկզբունքից» բխող պահանջ, իսկ երբեմն՝ որպես «հոգատարության

¹³ Տե՛ս Դանիելյան Գևորգ, Վարչական պատասխանատվություն – Եր.: ԱՌՏ, 2007, էջ 157:

¹⁴ Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413:

¹⁵ Օրինակ՝ «ՄԱՐՇԱԼ ԼԵՆԴ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/0456/05/17 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 20.12.2017 թվականին կայացրած վճռով անվավեր է ճանաչել վիճարկվող վարչական ակտը՝ դրա ընդունելուն ուղղված վարչական վարույթի ընթացքում փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում չիրականացնելու հիմքով: Տե՛ս՝ ըստ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809900255 կայքէջի:

¹⁶ Տե՛ս German Administrative Law in Common Law Perspective / Mahendra P. Singh.– 2. ed.– Berlin: Springer, 2001 էջ 74-75:

սկզբունքը» ներառող առավել լայն հասկացություն: Իսկ որոշ դեպքերում այս երկու իրավական սկզբունքները կիրառվում են միասին՝ որպես մեկ միասնական հասկացություն:

Այնուամենայնիվ, քննարկվող հասկացությունները նույնական չեն. դրանք ունեն որոշ տարբերիչ առանձնահատկություններ: Այսպես՝ Եվրոպական միության իրավական համակարգում «ջանադրության սկզբունքն» առավելապես կիրառվում է վարչական ընթացակարգերում ողջամիտ ժամկետների պահպանման պահանջի առնչությամբ, և «ջանադրության սկզբունքի» խախտման առկայության կամ բացակայության հարցը հաճախ որոշվում է՝ հաշվի առնելով վարչական մարմինների կողմից իրականացված վարչական վարույթի տևողության ողջամտությունը¹⁷: Հետևաբար՝ վարչական մարմնի կողմից որոշում ընդունելու համար անհրաժեշտ ժամանակի ողջամտության գնահատումը կատարվում է «ջանադրության սկզբունքի», իսկ գործի անաչառ և արդարացի քննության գնահատումը՝ «հոգատարության սկզբունքի» (նեղ իմաստով) լույսի ներքո:

Պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ համարվող «ջանադրության սկզբունքը» Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրսևորվում է վարչական մարմիններին ներկայացվող արագ գործելու պահանջի տեսքով. դա նախատեսված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով և ենթադրում է վարչական մարմինների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ գործադրելու, այն է՝ սեղմ ժամկետում ու առանց վարույթի բարդացման գործելու պարտականությունը:

Նշված հարցի շուրջ ՀՀ Սահմանադրական դատարանի 30.10.2012 թվականի թիվ ՍԴՈ-1054 որոշմամբ¹⁸ արտահայտված իրավական դիրքորոշումները վկայում են այն մասին, որ պատշաճ վարչարարության իրավուն-

քի բաղադրատարր հանդիսացող «ջանադրության սկզբունքը», որը դրսևորվում է վարչական մարմինների արագ գործելու պարտականության տեսքով, որոշ դեպքերում հակասության մեջ է մտնում պատշաճ վարչարարության իրավունքի մյուս բաղադրիչների, մասնավորապես՝ գործի փաստական հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկման պահանջի (նեղ իմաստով «հոգատարության սկզբունքի») և վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի հետ: Այսպես, մի կողմից՝ «հոգատարության սկզբունքը» պահանջում է, որ վարչական մարմինն իրականացնի գործի փաստական հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկում, իսկ լաված լինելու իրավունքը պահանջում է, որ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին իրենց դիրքորոշումներն արտահայտելու հնարավորություն ընձեռի, ինչը ենթադրում է ժամանակի լրացուցիչ ծախս: Մյուս կողմից՝ «ջանադրության սկզբունքը» պահանջում է, որ վարչական մարմինը հնարավորինս սեղմ ժամկետում ավարտի գործի քննությունը:

Պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի բովանդակությունից հետևում է, որ նկարագրված իրավիճակում նախապատվությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է տրվի «հոգատարության սկզբունքի» պահանջների, ինչպես նաև վարույթի մասնակիցների լաված լինելու իրավունքի պահանջմանը, քանի որ պատշաճ վարչարարության իրավունքի բուն էությունը կազմող այդ սկզբունքները չեն կարող ստորադասվել վարչական վարույթը սեղմ ժամկետում ավարտելու պահանջին¹⁹: Այդ ընդհանուր կանոնից բացառությունը վերաբերում է այն դեպքերին, երբ գործի փաստական հանգամանքների պարզաբանումն իրավունքի ուժով արդեն իսկ առկա է, այսինքն՝ վարչական ակտի ընդունումը սահմանափակվում է միայն եզրափակիչ փուլով և կանխորոշված է օրենքով: Տվյալ դեպքում, որպես բացա-

¹⁷ Տե՛ս, օրինակ՝ SEMEA v European Commission (C-531/12 P) գործով Եվրոպական միության դատարանի 19.06.2014 թվականի վճիռը՝ ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=C-531/12> կայքէջի:

¹⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 30.10.2012 թվականի թիվ ՍԴՈ-1054 որոշումը, ՀՀՊՏ 2012.11.07/54(928) Հոդ.1150:

¹⁹ ՀՀ վճռաբեկ դատարանը ևս քննարկվող հարցի կապակցությամբ ցուցաբերել է նմանատիպ մոտեցում: Տե՛ս, մասնավորապես՝ Տիգրան Աբաղյանն ընդդեմ Երևան համայնքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը:

ռություն՝ նախապատվությունը տրվում է «ջանադրության սկզբունքի», այն է՝ վարչական մարմիններին ներկայացվող արագ գործելու պահանջի իրացմանը:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական ակտի ընդունումն օրենքով կանխորոշված և միայն եզրափակիչ փուլով սահմանափակված լինելու օրինակ է 26.12.2008 թվականին ընդունված «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքով²⁰ նախատեսված իրավակարգավորումը, ինչն իրավակիրառ պրակտիկայում հաճախ առաջացնում է խնդրահարույց իրավիճակներ՝ ընդհուպ սահմանափակելով ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար պատասխանատվության ենթարկվող անձանց պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքը²¹:

Նմանատիպ իրավիճակների առաջացումը բացառելու համար անհրաժեշտ է օրենքով հստակ ամրագրել այն գաղափարը, որ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթում ձեռք բերված լուսանկարով կամ տեսանյութով ամրագրված արարքի հատկանիշների և տվյալ իրավախախտումը նկարագրող զանցակազմի հատկանիշների համապատասխանության վերաբերյալ ողջամիտ կասկածների առկայության դեպքում վարչական մարմինը պարտավոր է ենթադրյալ իրավախախտման առկայությունը պարզել վարույթի ընթացիկ փուլում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման միջոցով՝ առաջնորդվելով նեղ իմաստով «հոգատարության սկզբունքով»:

«Մտահոգության սկզբունքը» (*“the principle of solicitude”*) համարվում է Եվրոպական միության իրավական համակարգում պատշաճ վարչարարության իրավունքի՝ «հոգատարության սկզբունքի» հետ առնչվող մյուս կարևոր բաղադրատարրը, որը հանգում է վարչական մարմինների կողմից իրենց պաշտոնատար անձանց բարեկեցության, շահերի և իրավահավասարության ապահովման պարտականությանը: Դա կոչված է հաստատելու ողջամիտ հավասարակշռություն վարչական մարմինների և հանրային ծառայողների փոխադարձ իրավունքների ու պարտականությունների միջև և, առաջին հերթին՝ ուղղված է պահպանելու վարչական մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց միջև գոյություն ունեցող վստահության հարաբերությունները՝ հանրային իշխանության առջև դրված նպատակների արդյունավետ կենսագործումը երաշխավորելու նպատակով²²:

«Մտահոգության սկզբունքի» էությունն այն է, որ վարչական մարմնի կողմից իր իսկ պաշտոնատար անձանց վերաբերյալ որոշում կայացնելիս պետք է քննարկման առարկա դարձվեն այն բոլոր գործոնները, որոնք կարող են ազդել այդ որոշման վրա՝ հաշվի առնելով ոչ միայն հանրային ծառայության, այլ նաև միայն տվյալ հանրային ծառայողի շահերը²³: Այս իմաստով «մտահոգության սկզբունքն» աղերսվում է պատշաճ վարչարարության հետ՝ «հոգատարության սկզբունքի» համատեքստում, և պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչներից մեկն է՝ վարչական մարմինների

և հանրային ծառայողների փոխադարձ իրավունքների ու պարտականությունների միջև և, առաջին հերթին՝ ուղղված է պահպանելու վարչական մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց միջև գոյություն ունեցող վստահության հարաբերությունները՝ հանրային իշխանության առջև դրված նպատակների արդյունավետ կենսագործումը երաշխավորելու նպատակով²²:

²⁰ Տե՛ս ՀՀՊՏ 2008.12.30/76(666) Հոդ. 1421:

²¹ Տե՛ս, օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ալիդա Նազարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6199/05/13 վարչական գործով 30.04.2015 թվականի, Վահե Մնացականյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1897/05/15 վարչական գործով 27.12.2017 թվականի, Հարություն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/5620/05/15 վարչական գործով 27.12.2017 թվականի որոշումները:

²² Տե՛ս, Hartmut Schwiering v Court of Auditors of the European Communities (321/85) գործով Եվրոպական միության դատարանի 23.10.1986 թվականի վճիռը՝ ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=321/85> կայքէջի:

²³ Տե՛ս, օրինակ՝ Bo Forvass v Commission of the European Communities (T-203/97) գործով Եվրոպական միության դատարանի 06.07.1999 թվականի վճիռը, ըստ <http://curia.europa.eu/juris/liste.jsf?language=en&jur=C,T,F&num=T-203/97> կայքէջի:

րին պարտավորեցնելով պահպանել նշված հիմնարար իրավունքի երաշխիքները նաև հանրային ծառայողների նկատմամբ որոշումներ ընդունելու գործընթացում: Փաստորեն, «մտահոգության սկզբունքը» որոշակիորեն ընդլայնում է պատշաճ վարչարարության իրավունքի սահմանները՝ անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության չափանիշները տարածելով նաև վարչական մարմինների և այդ մարմիններում ծառայող պաշտոնատար անձանց հարաբերությունների վրա:

Քննարկվող գաղափարը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում իր արտացոլումն է ստացել 26.05.2011 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում²⁴, որի 6-րդ հոդվածով օրենսդիրը հանրային ծառայության հիմնական սկզբունքների շարքում նախատեսել է օրենքի առջև հանրային ծառայողների իրավահավասարությունը, ինչպես նաև հանրային ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ 2015 թվականի փո-

փոխություններով ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքը ներառում է «հոգատարության», «ջանադրության» և «մտահոգության» սկզբունքները, որոնք հանդես են գալիս լայն իմաստով «հոգատարության սկզբունքի» ներքո և կանխորոշում են վարչական մարմինների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի բազմաշերտ բովանդակությունը: Լայն իմաստով «հոգատարության սկզբունքը» վարչարարությանը ներկայացվող բացարձակ պահանջ է, քանի որ վարչական մարմնի կողմից գործի հանգամանքներն արդարացիորեն, անկողմնակալ կերպով և ողջամիտ ժամկետում քննարկելու՝ պատշաճ վարչարարության շահերից բխող պարտականության կատարումից խուսափելն իրավունքի գերակայության տեսանկյունից չի կարող իրավաչափ համարվել որևէ (այդ թվում նաև՝ վարչական մարմնին հայեցողական լիազորություններ վերապահված լինելու) պատճառաբանությամբ:



²⁴ Տե՛ս ՀՀՊՏ 2011.06.17/37(840) Հոդ. 863:

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ,
ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ոստանական կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավաբան,
արտոնագրված հաշտարար

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի, ինչպես նաև հարկային վարչարարության հեռանկարային զարգացումն ապահովելն անհնար է առանց տեխնիկական-տեղեկատվական համակարգերի, վարչարարության ավտոմատացման միջոցների և հարկային մարմինների գործունեության հեռահաղորդակցության արդյունավետ միջոցների ներդրման ու զարգացման:

Հարկային համակարգի տեխնիկական-տեղեկատվական համակարգերը տեխնիկական միջոցներ են, որոնք օգտագործվում են հարկային համակարգում հարկերի և տուրքերի հաշվարկման, պահման, դրանց աղբյուրների որոնման, հարկի արժեքի փոխանցման, հարկի գումարի ընդունման, դրանց վերաբերող տեղեկատվության ներկայացման և հարկահավաքման գործընթացին առնչվող ցանկացած փուլում: Իսկ հարկային վարչարարության մեքենայացումը (ավտոմատացումը) ամբողջական համակարգ է՝ բաղկացած օգտատերերից և մեքենայացման միջավայրից (ներառում է մեքենայացման միջավայրի ծրագրեր և կառուցակարգեր, հեռահաղորդակցության միջավայր), որոնք ուղղված են հարկային վարչարարության առավել արդյունավետ իրականացմանը:

Հարկային համակարգում տեխնիկական-տեղեկատվական համակարգերի մեքենայացման գործընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրատարրերից՝ ծրագրային միջավայր, կառուցակարգային միջավայր, հեռահաղորդակցության միջավայր (կապի միջոցներ) և անհատներ: Հարկային վարչարարության տեխնիկական-տեղեկատվական համակարգերի մեքենայացումը ներառում է տեխնոլոգիական համակարգեր, ենթահամակարգեր, ինչպես նաև դրանց առնչվող այլ բաղադրամասեր:

ՀՀ հարկային համակարգում տեխնիկական տեղեկատվական համակարգերի մեքենայացման առաջին փուլը մեկնարկել է 2002-2004 թթ., երբ ՀՀ-ում ներդրվեց և գործարկվեց «Հարկատու-2» տեղեկատվական համակարգը: Չնայած վերջինս ուներ որոշ կայուն տարրեր, սակայն ամբողջությամբ չէր բավարարում հարկային համակարգի աշխատակիցների գործառնությունների իրականացմանը, իսկ որոշ դեպքերում նույնիսկ հակասում էր գործող օրենսդրության պահանջներին, ինչի պատճառով 2004 թվականից սկսվեց հարկային համակարգում ներդրվել «Հարկատու-3» համակարգը¹: «Հարկատու-3» համակարգն արդեն հնարավորություն էր տալիս իրականացնելու տեղեկությունների կարճ ժամկետներում հավաքագրումը, դրանց ոլորտային դասակարգումը, հարկային հաշվետվություններ, հաշվարկներ կամ այլ փաստաթղթեր չներկայացրած և հարկեր չվճարած հարկ վճարողների էլեկտրոնային ծանուցումների առաքումը և այլն: Հիշյալ համակարգը բաժանված է երկու առանձին մոդուլների՝ արտաքին և ներքին: Ներքին մոդուլն օգտագործվում է հարկային մարմնի ներսում, և դրա օգտագործողներն ու տվյալները պաշտպանված են արտաքին մոդուլի մուտքից: Իսկ արտաքին մոդուլը պարունակում է տեղեկություններ հարկ վճարողների մասին և նպաստում է նրանց հետ հաղորդակցությանը: Արտաքին մոդուլային համակարգը ներառում է էլեկտրոնային եղանակով տվյալների ներկայացման համակարգ և ունի արտաքին օգտագործողների կառավարման ինքնուրույն համակարգ:

Էլեկտրոնային հարկային վարչարարությունում «Հարկատու 3» համակարգի ստեղծմամբ մեկնարկեց միանման տեխնիկական-տեղե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Տե՛ս <http://www.petekamutne.am>:

կատվական միջավայրի ստեղծման գործընթացը: Հիշյալ ծրագրի շրջանակներում հարկահավաքման ոլորտում ներդրվեցին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական հետևյալ համակարգերը՝

- օպերացիոն համակարգ՝ Windows, նախատեսվում է կիրառել նաև Unix,
- տեղեկատվական բազայի կառավարման համակարգը՝ Oracle,
- ծրագրային լեզուներ՝ PL/SQL, SQL, Oracle Developer, նոր ծրագրային ապահովումը, որը նախատեսվում է ստեղծել JAVA ծրագրային լեզվով:

Հարկային վարչարարության արդյունավետ իրականացման գործում մեծ ձեռքբերում է էլեկտրոնային անձնագրերի և նույնացման քարտերի համակարգի ներդրումը, որն սկսվեց 2009 թվականից ՀՀ կառավարության կողմից նախատեսված ծրագրի շրջանակներում, այնուհետ ներդրվեց հարկային համակարգում հարկային մարմիններին օրենքով սահմանված հարկային հաշվետվությունների, հաշվարկների կամ այլ փաստաթղթերի ներկայացման գործընթացում: Ծրագրի ներդրման սկզբնական շրջանում հարկային հաշվետվությունների, հաշվարկների կամ այլ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակով ներկայացումը սկզբում պարտադիր էր միայն որոշ խումբ հարկատուների համար, սակայն հետագայում պարտադիր դարձավ բոլոր հարկ վճարողների համար:

Հարկային համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման առաջնային նպատակը հարկ վճարողների հարկային հաշվետվությունների, հաշվարկների և այլ փաստաթղթերի, հարկային վճարների միասնական կանոնակարգումն է էլեկտրոնային համակարգով և տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հարկային մարմինների աշխատանքում ավտոմատացված համակարգերի ներդրումն արմատական հեղաշրջում ներմուծեց ՀՀ հարկային վարչարարության ոլորտում:

Հարկային մարմինների էլեկտրոնային շրջանառության համակարգը կարելի է դասակարգել հետևյալ ենթահամակարգերի՝

1. հարկային մարմինների ապարատային միջավայրի մեքենայացման համակարգ. սերվերների տեղադրում, ՀՀ պետական եկամուտ-

ների կոմիտեի փոստային սերվերներով ապահովում, ձայնային անցախուցների կառուցում, ԱՅ ՓԻ օֆիսների աշխատանք (ստացումներ, ձեռքբերումներ և վարձակալություն), նրանց կապային տեղեկատվակառուցների մեքենայացված կանոնակարգում),

2. հարկային մարմինների մեքենայացման միջավայրի և նրանց որակի ապահովման համակարգ (սերտիֆիկատներ, լիցենզիաներ, համատեղելիություն, թույլտվություններ և այլն),

3. Այ թի մասնագետների պատրաստման, նրանց պարբերաբար վերապատրաստման համակարգ,

4. տեղեկատվական համակարգերի և ռեսուրսների պահպանման համակարգ (հարկային մարմինների տեղեկատվության համակարգի համակարգվածություն, տեղեկատվության աշխատանքի ֆինանսավորման կայունության ապահովում, ալգորիթմների և նման այլ ծրագրի գործածություն),

5. հարկային համակարգի տեղեկատվական ռեսուրսների օգտագործման և արխիվացման համակարգ. դրանց ստեղծման կանոնակարգվածություն, նորարարության առաջնայնություն, տվյալների պատճենահանման բազայի ստեղծում,

6. հեռահաղորդակցության միջավայրի համակարգ. հեռահաղորդակցության միջավայրի տիպային դասակարգում, դրա ցանցի կառուցվածքի ստեղծում, հարկային մարմինների օպերատորի հետ կապի համակարգի ստեղծում,

7. մեքենայացման և հեռահաղորդակցության միջավայրի առանձնահատուկ կառուցվածքային տարրերի առանձնացում և գործարկում:

Հարկային վարչարարության ավտոմատացման համակարգի ստեղծումը նախ և առաջ ուղղված է հարկային հարաբերություններում հարկ վճարողների և հարկային ծառայողների անմիջական շփումը հնարավորինս սահմանափակելուն:

Հարկային մարմինների հաշվողական աշխատանքն իրականացվում է էլեկտրոնային հաշվառման գործընթացի և հարկային հաշվողականության կառուցվածքում, որը նպատակաուղղված է հարկ վճարողների կարգավիճակի կայունության և հարկային մարմինների աշխատանքի միանման իրավական ամրապնդմանը: Տեղեկատվության պաշտպանության ծած-

կագրային միջավայրը ներառում է օգտագործողի անվան և գաղտնաբառի օգտագործման հնարավորություն՝ մեթոդաբանական և ծրագրային-տեխնիկական սկզբունքների օգտագործմամբ: Տեղեկատվության պաշտպանության ծածկագրային միջավայրն անհրաժեշտ է հարկ վճարողների հաշվառման և նրանց գործունեության մշտադիտարկման համալիր համակարգի ստեղծման համար:

Հարկային մարմինների գործունեության շրջանակում են հարկ վճարողների էլեկտրոնային հաշվառման համակարգի ստեղծումը, նրանց գործունեության ներկա և վիճահարույց հարցերի մշտադիտարկման ապահովումը, հարկային մարմնի կողմից կազմակերպությունների և այլ անձանց՝ առանց նրանց գործունեությանը միջամտելու, գործունեության ծավալի և բնույթի մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար: Հարկ վճարողների ընդհանուր հսկողության և հարկային բազայի կանոնակարգման իրականացումն ուղղված է հարկ վճարողների օպերատիվ-հաշվողական հաշվառման ամրապնդմանը: Մինևույն ժամանակ՝ օպերատիվ հաշվառումը հարկային մարմիններն իրականացնում են օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Չնայած դրան՝ հարկային մարմինների նյութական-տեխնիկական և ծրագրային հարաբերություններն օրենսդրորեն կարգավորված են դեռևս ոչ բավարար: Տվյալ օպերատիվ-հաշվառման հիման վրա կառուցվում է վերլուծական նամակագրություն: Հաշվառման աշխատանքի ամբողջական կանոնակարգումը պահանջում է այնպիսի քայլերի իրականացում, ինչպիսիք են հաշվառման բազայի իրավական ամրագրումը, փորձագետների վարքի դասակարգումը, հաշվառման գործունեության գործընթացի մանրամասն կանոնակարգումը:

Հարկային համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս իրականացնել արդյունավետ հարկային հսկողություն: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող հարկային հսկողության հիմնական տեսակը կամերալ հարկային ուսումնասիրությունն է: Այդ ուսումնասիրության շրջանակներում ստուգվում են բոլոր հաշվետվությունները, հայտարարագրերը և այլ փաստաթղթերը, որոնք ներկայացվել

են հարկ վճարողների կողմից: Ներկայացված տվյալների և այլ օպերատիվ տեղեկությունների հիման վրա հարկային մարմնի կողմից իրականացվում է ուսումնասիրություն, բացահայտվում են առկա անհամապատասխանությունները և այլն:

Հաշվետվությունները, հայտարարագրերը և հարկային հաշվառման փաստաթղթերը հարկ վճարողների կողմից հարկային մարմիններին կարող են ներկայացված լինել թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով (էլ. կրիչների միջոցով՝ նախատեսված թղթային կրիչներով), հեռահաղորդակցության կապի այլ միջոցով:

Մինչև 2010 թվականը հարկային մարմինների ստացած հայտարարագրերի միայն 5-6 % է ներկայացված եղել էլեկտրոնային տարբերակով: Այդ հանգամանքը մեծ մասամբ պայմանավորված է եղել հարկ վճարողների անվստահությամբ հարկային մարմինների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը, ինչու չէ՞ նաև իրականացված բազայի բացթողման և օրենսդրական կոլիզիաների պատճառով: Հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման ցածր տոկոսը պայմանավորված է եղել նաև հարկային ծառայողների թերի պատրաստվածությամբ, որը շտկվեց հետագա 2-3 տարիների ընթացքում, երբ Հայաստանի Հանրապետությունում սկսվեցին էլեկտրոնային համակարգի շահագործման ոլորտում իրականացվել հարկային ծառայողների վերապատրաստման արդյունավետ ծրագրեր, և ներդրվեց օրենքով սահմանված ժամկետներում պարտադիր վերապատրաստման համակարգը: Ներկայումս հարկային հաշվետվություններում, հայտարարագրերում և մյուս հարկային փաստաթղթերում սխալներ կամ անճշտություններ լինելու դեպքում հարկ վճարողները հնարավորություն ունեն ներկայացնելու ճշգրտված հաշվետվություններ էլեկտրոնային տարբերակով՝ դրանց ներկայացման ձևից անկախ: Ըստ որում՝ նման հաշվետվություններ կարող են ներկայացվել ինչպես հարկ վճարողի կողմից հայտնաբերված անճշտությունների, այնպես էլ հարկային մարմնի կողմից հայտնաբերվելու դեպքում: Հաշվետվությունները, հայտարարագրերը և այլ փաստաթղթերը թղթային կրիչների միջոցով ներկայացված լինելու դեպքում դրանք ենթարկ-

վում են առանձին հաշվառման համապատասխան հարկային մարմինների աշխատողների կողմից՝ համապատասխան ծրագրային ամրապնդմամբ:

ՀՀ հարկային տեղեկատվական ռեսուրսների կառուցվածքը ներառում է հետևյալ տարրերը՝

- իրավաբանական և ֆիզիկական անձանց պետական հաշվառման և գրանցման տեղեկատվական ռեսուրսներ,
- հարկային հաշվետվությունների տեղեկատվական ռեսուրսներ,
- ներքին աղբյուրներից ստացված տեղեկատվական, վիճակագրական տվյալների ռեսուրսներ,
- օժանդակ տեղեկատվական ռեսուրսներ:

Կապի միջոցներով ստացված փաստաթղթերի համար օգտագործվում են հարկ վճարողների ալգորիթմային կանոնակարգման և հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի ու այլ փաստաթղթերի էլ. տեսքով ներկայացման փաստաթղթավորման կառուցակարգերը, որոնք իրականացվում են իրավասու աշխատողի կողմից:

Հարկ վճարողների կողմից ներկայացվող հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի էլ. համակարգով ներկայացման համար հարկ վճարողների մոտ առկա է լիազորագրի հիման վրա գործող համապատասխան անձ, կամ ուղարկվում է հենց հարկ վճարողի իրավասու մարմնի կողմից, իսկ հարկային մարմինը դա ստանալուց անմիջապես հետո հարկ վճարողին ուղարկում է հաշվետվությունն ընդունված համարվելուն վերաբերող ստացական: Հարկային հաշվետվությունների տվյալների ընդունման և հարկային մարմնի համակարգ ներմուծման համար օգտագործվում է միասնական պահանջների ներկայացման սկզբունքը, որը դրսևորվում է հարկ վճարողներին հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի միասնական սկզբունքով կազմված նախաբանների, նախատեսված համապատասխան տողերի, իրավական միասնական կարգավորման միջոցով: Նման կարգավորումը դրսևացնում է վերադաս հարկային հսկողության, հարկային ստուգման, աուդիտ հսկողության հիմնական

գործընթացները, ապահովում է հարկային իրավունքի սուբյեկտների կողմից հարկային պարտականությունների իրականացման ընթացքում օրինականության ամրապնդումը (հարկահավաքման չբացահայտված օբյեկտի հայտնաբերումը), նպատակահարմարությունը, համակարգվածությունը, համալիր մոտեցումը, ինչպես նաև, պայմանավորված հսկողության արդյունքներով՝ առավելագույն պահանջների և դրա օգտագործողների որոշումների ընդունման կառուցակարգերի կիրառումը:

Մեր կարծիքով՝ դեռևս հարկային ստուգման իրականացման գործընթացում օգտագործվող տեղեկատվավերլուծական համակարգի խնդրահարույց հարցերից են՝

1. ստուգման բարձր որակական ցուցանիշների ապահովումը, որը բովանդակվում է հարկային հաշվետվություններում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում,

2. առանց հարկ վճարողների անմիջական մասնակցության տեղեկատվական ռեսուրսների առանձին կանոնակարգումը,

3. տարբեր համակարգային միջավայրերի ստեղծումը, որը կատարվում է հարկային ստուգման գործընթացում ներկայացված փաստաթղթերի համալիր վերանայման և տեղեկատվական տվյալների ամբողջական հետազոտման հիման վրա,

4. անհրաժեշտության դեպքում, մինչ էլեկտրոնային տարբերակով հարկային հաշվետվության ներկայացումը դրան առնչվող լրացուցիչ ծառայություններ ստանալը,

5. կամերալ ստուգման և կամերալ վերլուծության գործընթացում համակարգային մեքենայացման ամբողջական ապահովումը, ինչպես նաև հարկ վճարողի ստուգման իրականացումն էլեկտրոնային տարբերակով ստացված տվյալների հիման վրա, ինչը բացառում է հարկային հսկողության ոլորտում սուբյեկտիվ գործոնը,

6. առանց հարկ վճարողների գործունեության միջամտության գործող համակարգերի տարբեր տեսակների ամրապնդման գործընթացի մշակումը և գործարկումը:

Հարկային վարչարարության մեքենայացման կարևորագույն տարրը հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի և հաշվարկային այլ փաստաթղթերի կազմման, կառու-

ցակարգման և ներկայացման էլ. համակարգի ստեղծումն է (հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կազմակերպումը):

Հարկային հաշվետվությունները, հայտարարագրերը և այլ փաստաթղթերը հարկային մարմին էլեկտրոնային (ոչ թղթային) տարբերակով ներկայացնելու հարկ վճարողների իրավունքը նախատեսված է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ հարկային օրենսդրությամբ հստակ սահմանված չէ էլեկտրոնային հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի, ինչպես նաև էլեկտրոնային հաշվառման հասկացությունը, ինչը պատճառ է դառնում այդ հասկացությունների տարբեր ընկալման և մեկնաբանման: Հաճախ հանդիպող վիճահարույց հարցերից մեկն էլ այն է, թե կարո՞ղ է արդյոք հարկ վճարողն էլեկտրոնային հարկային հաշվետվությունը ներկայացնել լազերային սկավառակի կամ այլ տեղեկատվական կրիչի վրա: Հարկային օրենսդրության և գործող պրակտիկայի համալիր վերլուծության հիման վրա հանգում ենք այն եզրակացության, որ էլեկտրոնային հաշվետվությունը կարող է ներկայացված լինել միայն էլեկտրոնային համակարգով համապատասխան կայքում առկա հաշվետվության ձևը լրացնելու, ստորագրելու և բեռնելուց հետո էլ. կապի միջոցով հարկային մարմնին ուղարկելու միջոցով: Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման համակարգն ապահովում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն՝ հարկ վճարողների միջավայրում ներկայացված կապի օպերատորի միջոցով:

Վիճահարույց հարցերից է նաև համացանցի օգտագործումը հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման համակարգում: ՀՀ հարկային օրենսդրությունը չի տալիս այդ հասկացության սահմանումը, ինչը ևս հարկային համակարգում կարող է հանգեցնել հակասությունների: Մասնավորապես՝ հարկային համակարգում համացանցը միայն հարկային փաստաթղթերի ներկայացման միջոց է, իսկ դրա էլեկտրոնային տեսքը հաշվետվության, հայտարարագրի կամ այլ փաստաթղթի յուրա-

հատուկ կառուցվածք է: Կարծում ենք՝ նման մոտեցման շրջանակներում հարկ վճարողը կարող է հարկային հիշյալ փաստաթղթերը ներկայացնել նաև լազերային սկավառակով կամ այլ մագնիսական կրիչով, և այս դեպքում հարկային մարմինը չի կարող դա չընդունել: Նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է այս ոլորտը ևս ենթարկել մանրամասն իրավական կարգավորման:

Վարչարարության մեքենայացման միջոցների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում նաև հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի կազմումը և ստորագրումը ծածկագրային էլեկտրոնային բանալիով, որի ընդունումը հավաստվում է հարկային մարմնի հետստացման ստացականով՝ դարձյալ ծածկագրային ստորագրմամբ:

Հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի, այլ փաստաթղթերի էլեկտրոնային կազմումը և ներկայացումը դյուրացնում է հարկային վարչարարության տեղեկատվական գործընթացները, նվազեցնում է մուտքային տվյալների ներմուծումից հետո հաշվարկման թվաբանական և տեխնիկական սխալները, բացառում է ոչ սահմանված տեսքով հարկային հաշվետվությունների ներկայացման հնարավորությունը, հարկ վճարողին հնարավորություն է տալիս ձեռնպահ մնալու միևնույն հաշվետու ժամանակաշրջանում մեկից ավելի հաշվետվություններ, հայտարարագրեր և այլ փաստաթղթեր ներկայացնելու անհարմարությունից, հարկ վճարողին հնարավորություն է տալիս համապատասխան փաստաթուղթը հարկային մարմին ներկայացնելու նրա աշխատանքային գրաֆիկից անկախ, և այլն²:

Հարկային համակարգում կիրառվում են հարկային վարչարարության մեքենայացված համակարգի արդյունավետ պահպանման հետևյալ հիմանական երաշխիքները, այն է՝ հարկային ծառայության մարմինների համակարգում համացանցը սպասարկողների և հատուկ օպերատորների առկայությունը, հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի թղթային (արտատպման) տարբերակի պահպանումը, հարկային մարմնի կողմից հաշվետվությունների, հայտարարա-

² Տե՛ս <http://file-online.taxservice.am>:

գրերի և այլ փաստաթղթերի ստացումից հետո հետստացականի ուղարկումը հարկային մարմին և այլն:

Հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացման խնդրահարույց հարցերից մեկը պայմանավորված է այն հանգամանքով, որ հարկային մարմինն պարզ չի դառնում, թե դա հարկ վճարողի ճիշտ աշխատակցի կողմից է ստորագրվել: Ըստ որում՝ դա կարող է ստորագրվել հարկ վճարողի հետ անգամ որևէ պայմանագրային հարաբերության մեջ չգտնվող անձի կողմից: Հարկային մարմնի համար բավարար է միայն հարկ վճարողի իրավասու անձի կողմից դա ստորագրողին տրված լիազորագիրը, որն էլ կարող է ժամկետային սահմանափակում չունենալ, իսկ սա օրենսդրական մեծ բաց է: Կարծում ենք՝ այս ոլորտը ևս պետք է ենթարկել մանրամասն իրավական կարգավորման, մասնավորապես՝ պետք է ներկայացնել լիազորագրի ժամկետի գործողության սահմանափակում առավելագույնը մեկ տարով:

Հարկային մարմին ներկայացվող հաշվետվություններ, հայտարարագրեր կամ այլ փաստաթղթեր կրող սերվերի խափանման պայմաններում հարկ վճարողը որևէ պատասխանատվություն չի կրում, եթե նա հնարավորություն չի ունեցել նման անսարքության պատճառով կազմելու և ներկայացնելու հաշվետվություն, հայտարարագիր կամ այլ փաստաթուղթ: Նման պայմաններում սովորաբար հարկային մարմինը կիրառում է փաստաթղթերի լրացուցիչ ժամկետի տրամադրման սկզբունքը:

Հարկային մարմինների գործունեության հեռահաղորդակցության արդյունավետ միջոցների ներդրման և զարգացման ոլորտում վերջին տարիների մեծ ձեռքբերում կարելի է համարել փաստաթղթերի էլեկտրոնային շարժի (ՓԷՇ) համակարգի ներդրումը: Համակարգն ստեղծվել է հարկային համակարգում փաստաթղթերի հետ առօրյա աշխատանքը, դրանց շարժի վերահսկումն ու կատարումը պարզեցնելու համար: Այդ համակարգը ՀՀ պետական իշխանության մարմինների համակարգ ներդրվեց 2006 թվականից, իսկ հարկային մարմնում դրանով սկսել են աշխատել 2007-2008

թվականներից: Հիշյալ համակարգը մեծ ձեռքբերում էր հարկային մարմինների՝ միմյանց միջև հեռահաղորդակցությունը դյուրացնելու և տեղեկատվության փոխանցման ոլորտում: ՓԷՇ համակարգն ունի մի շարք դաշտեր, որոնք ապահովում են աստիճանակարգվածության հիման վրա աշխատանքի հնարավորինս արդյունավետ իրականացումը³:

Հարկ է նշել, որ հարկային վարչարարության իրականացման հեռանկարային զարգացումը դժվար կլինի ապահովել առանց ներքին արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման: Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը հնարավոր է միայն ներքին տեղեկատվական տեխնոլոգիաների համալիր գործածությամբ:

Մեր կարծիքով՝ Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի բարելավման, ինչպես նաև հարկային վարչարարության հեռանկարային զարգացումն ապահովելու համար, ի թիվս վերոշարադրյալ համակարգերի, ժամանակակից փուլում անհրաժեշտ է նաև վերացնել հարկային վարչարարության հարաբերությունները կարգավորող իրավանորմերի միջև առկա հակասությունները, օրենսդրական մակարդակում կարգավորել հարկային մարմինների և հարկ վճարողների միջև փոխազդեցությունների ընթացակարգերը, հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ փաստաթղթերի էլեկտրոնային համակարգին առնչվող հասկացությունները, հարկային օրենսդրությամբ հստակ սահմանել հարկային ծառայության իրավական դրությունը, նրա մարմինների իրավասությունները և փոխազդեցության ոլորտները, հնարավորինս բարելավել հարկային վարչարարական կանոնակարգերը: Գերատեսչական մակարդակում անհրաժեշտ է կարգավորել հարկային հաշվետվությունների, հաշվառման և հարկային այլ փաստաթղթերի պարզեցման համակարգի, հարկային ծառայողի աշխատանքի որակի գնահատման մեթոդիկան, հարկային հաշվետվությունների, հայտարարագրերի և այլ հարկային փաստաթղթերի միանման էլեկտրոնային արխիվների և էլեկտրոնային գրանցամատյանների օգտագործման կանոնները:

³ Տե՛ս <http://mul.taxsevice.gov.am>:

ԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՊՐԵՏՈՐԱԿԱՆ ԷՂԻԿՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ,
ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ՈԼՈՐՏՈՄ**

Հին Հռոմի իրավունքի համակարգում բարձրագույն մարմինների՝ պրետորների գործունեության հետևանքով առաջացած պրետորական իրավունքը կատարել է կարևորագույն դեր դատավարության զարգացման և դատական գործունեության իրականացման մեջ:

Վերլուծելով պրետորների կողմից ընդունված էդիկտների կառուցվածքը և բովանդակությունը՝ կարելի է հստակ եզրակացնել, որ պրետորական իրավունքին բնորոշ է եղել նյութական և դատավարական իրավունքի հատուկ հարաբերակցությունը: Պրետորը բանաձևերի տեսքով արձանագրել է միայն այն դատավարական միջոցները, որոնցով պատրաստվել է լուծում տալ համապատասխան հայցերին, ինչպես նաև առանձնացրել է ընդունման ենթակա նյութական իրավական պահանջները: Հայցերն ընդունելով՝ պրետորը փաստացիորեն ստեղծել է նոր նյութական իրավունք¹: Էդիկտները, որոնք հանդիսացել են պրետորական իրավունքի ձև, պարունակել են դատավարական նորմերի կարևոր կառուցվածքային և գործառնության առանձնահատկություններ, վերջիններս գերակշռել են նյութական իրավունքի նորմերին:

Ողջ պատմական ժամանակաշրջանի գոյության և գործունեության ընթացքում պրետորի ինստիտուտի առաջացումը, գոյությունը և էդիկտների արձակումը պայմանավորված են եղել ինչպես սուբյեկտիվ, այդպես էլ օբյեկտիվ պատճառներով: Հին Հռոմի հանրապետության դարաշրջանում հռոմեական հասարակության սոցիալական և իրավական կայունությունն զգալի մասով ստեղծվել է հսկայական իշխանա-

կան լիազորություններով տիրապետող պրետորի ինստիտուտի կողմից, ուստի և այդ կայունությունն ապահովված չի եղել պրետորի իշխանության կարճ ժամկետի պատճառով: Ավելին՝ իշխանության տարեկան փոփոխությունը, ինչի հետևանքով յուրաքանչյուր տարի պրետորի պաշտոնն ստանձնելու հետևանքով բանավոր կամ գրավոր ձևով արձակվել են նոր էդիկտներ, հենց հաջորդականության շնորհիվ է հասարակության մեջ ապահովվել կայունության պահպանումը: Այդ ուժով պրետորի էդիկտների հաջորդականությունը, ինչպես նաև պրետորական իշխանության հաջորդականությունը, կենսականորեն անհրաժեշտ են եղել և առաջացել են հասարակության կարիքներից: Յուրաքանչյուր նոր պրետոր հատուկ ուշադրություն է դարձրել նախորդ պրետորների էդիկտներին: Դրա հետևանքով՝ այդ էդիկտներում արտահայտված իրավաբանական նորմերը ձեռք են բերել հայտնի հաջորդականություն, քանի որ նախորդ էդիկտներից փոխանցվել են հաջորդներին (edictum tralaticium)²: Յուրաքանչյուր պրետոր էդիկտների մեջ ձևակերպել է իր գործունեության ծրագիրը ողջ պաշտոնավարման ժամկետի համար, դրանց հիմքում դրել է նախորդ էդիկտից ընդօրինակած նորմերը և լրացրել նոր՝ փոփոխված կյանքին համապատասխանող դրույթներով³: Յուրաքանչյուր հաջորդ էդիկտում նոր դրույթների (edictum novum) ներմուծման շնորհիվ ձևավորվել է ճկուն, դինամիկ, կյանքի փոփոխվող պայմաններին հեշտ հարմարվող պրետորական իրավունքի համակարգ⁴:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Տե՛ս, Барташек М., Римское право, Понятия, Термины, Определения, М., 1989, էջ 116:
² Տե՛ս, Галанза П. Н., Государство и право Древнего Рима, М., 1963, էջ 69:
³ Տե՛ս, Барташек М., նշվ. աշխ., էջ 116:
⁴ Տե՛ս, История государства и права зарубежных стран, Ч. 1., О. А. Жидков и Н. А. Крашенинникова, М., 1996, էջ 155:

Պրետորներն էդիկտների օգնությամբ կիրառել են, ուղղել և լրացրել իրավական դրույթները, ստեղծել նոր իրավունք, որը հայտնի է եղել *jus honorarium* կամ պրետորական իրավունք անվանմամբ⁵: Պրետորական էդիկտները հանդիսացել են բավականին կարևոր և միաժամանակ շատ ինքնաձև հռոմեական իրավունքի աղբյուր: Դրանք հատուկ տեղ են զբաղեցրել հռոմեական իրավունքի մյուս աղբյուրների համակարգում: Էդիկտի իրավաբանական ուժը հավասարեցվել է օրենքի իրավաբանական ուժին:

Գայուսի Ինստիտուցիաների համաձայն՝ օրենքն այն է, ինչը հռոմեական ազգը հավանել է և որոշել, պլեբեյական որոշումն այն է, ինչը պլեբեյները հավանել են և որոշել, սենատական որոշումն այն է, ինչը սենատը որոշել է և հրամայել, կայսեր հրամանագիրն այն է, ինչը կայսրը որոշել է դեկրետով կամ էդիկտով կամ ռեսկրիպտով, այսինքն՝ պատասխան նամակով: Կասկածի չի ենթարկվում այն փաստը, որ կայսեր հրամանագիրն ունի օրինական ուժ, քանի որ վերջինս իր իշխանությունը ձեռք է բերել հատուկ օրենքի ուժով, ինչն էլ առաջացնում է կայսերական հրամանագրի օրինական ուժը⁶:

Պրետորական էդիկտները հանդիսացել են հռոմեական իրավունքի աղբյուր: Դրանց առանձնահատկությունը և ինքնաձևությունն այն են, որ սեփական բովանդակության մեջ պարունակվող նորմերն ունեցել են ընտրովի բնույթ: Նշված ընտրովի բնույթն արտահայտվել է այն իմաստով, որ քաղաքի պրետորի էդիկտներում պարունակվող նորմերն ի սկզբանե տարածվել են միայն հռոմեական քաղաքացիների վրա, իսկ պերեգրինների հետ վեճերի առաջացման դեպքում պերեգրինների պրետորի էդիկտներում պարունակվող նորմերը տարածվել են օտարերկրացիների և հռոմեական քաղաքացիների վրա: Հարկ է մատնանշել, որ պրետորի էդիկտների նորմերի ընտրովի բնույթն արտահայտվել է նաև այն հանգամանքով, որ դրանք չեն տարածվել պրետորի անձի վրա՝ որպես

Հռոմի քաղաքացու: Պրետորն իր իշխանության շնորհիվ լիովին ազատ է կատարելու իր պարտականությունները, քանի որ միայն բարոյապես է կապված եղել էդիկտներով:

Հռոմի պետության և իրավունքի զարգացման ավելի ուշ փուլում՝ հռոմեական պրինցիպիատի դարաշրջանում (մ.թ.ա. 67 թվականին), Կորնելիոս կայսրը հաստատել է, որ պրետորները, ինչպես և նրանց իրավասության ներքո գտնվող բոլոր մյուս Հռոմի քաղաքացիները, պետք է հետևեն սեփական էդիկտներին (*edictum perpetuum*)⁷:

Պրետորի էդիկտների առանձնահատկությունը և ինքնաձևությունը նաև այն էին, որ դրանք փաստացիորեն ունեցել են օրենքի իրավաբանական ուժ, սակայն առաջացել են այն մարմնից, որը չի տիրապետել իրավաստեղծ արտոնություններով: Պրետորը՝ հռոմեական սահմանադրության համաձայն, չի ունեցել օրենքներն ուղղելու կամ չեղարկելու իրավունք (*praetor jus tollere non potest*), քանի որ դա եղել է Ազգային ժողովի իրավասությունը: Այնուամենայնիվ, Հին Հռոմում արդեն իսկ ստեղծվել է բավականին առանձնահատուկ մի իրավիճակ, որտեղ օրենքը չի չեղարկվել, այլ՝ պարզապես դադարել է իր գործողությունը: Դա անվանվել է «մերկ իրավունք» (*nudum jus quiritium*)⁸: Այդ հանգամանքը տեղի է ունեցել էդիկտներում նախատեսված ծրագրին համապատասխան ընթացող պրետորական գործունեության և պրետորի իշխանական լիազորություններն ապահովվելու շնորհիվ:

Բավականին հայտնի, բազմափորձառու և իմաստուն իրավաբանների և փիլիսոփաների կողմից զարգացող հռոմեական իրավունքի տեսության մեջ օրենքը պահպանելու պարտադիրությունը հիմնավորվել է այն փաստարկով, որ օրենքը համընդհանուր հրամանագիր է, փորձառու անձանց որոշում, դիտավորությամբ կամ ոչ միտումնավոր կատարված հանցագործությունների սանձահարում, բոլոր քաղաքացիների համար ընդհանուր պետական խոստում

⁵ Sեն, Пухан И., Поленак-Акимовская М. Римское право, В. А. Томсинов, М., 1999, էջ 23:

⁶ Sեն, Памятники Римского права, Законы XII таблиц, Институции Гая, Дигесты Юстиниана, М., 1997, էջ 17:

⁷ Sեն, Барташек М., նշվ. աշխ., էջ 186:

⁸ Sեն, Галанза П. Н., Государство и право Древнего Рима, М., 1963, էջ 69:

(Պապինիանոս), օրենքը միտք է, գյուտ, իմաստուն մարդկանց որոշում և հանցագործությունների սանձահարում (Մարցիանոս), օրենքը համայնքի ընդհանուր համաձայնությունն է, որին համապատասխան պետք է ապրեն համայնքում գտնվողները (Դեմոսթենես), օրենքը բոլոր Աստվածային և մարդկային գործերի թագավորն է, ինչի ուժով պետք է լինի պետության մեջ բնակվող բարի և չար մարդկանց պետք, կենդանի էակների առաջնորդն ու ղեկավարը, արդարության և անարդարության չափորոշիչը, որը հրամայում է անել այն, ինչը պետք է արվի (Խրիսիպոս)⁹:

Բացի նշված պատճառներից և հիմքերից, օրենքին հետևելու պարտադիրությունը հիմնավորվել է նաև այլ հանգամանքներով: Տեսականորեն դա վերաբերել է ոչ միայն օրենքներին, այլ նաև հռոմեական իրավունքի բոլոր մյուս աղբյուրներին՝ ներառյալ պրետորական էդիկտները: Իսկ գործնականում վերջիններիս պահպանումը հիմնականում ապահովվել է պրետորի իշխանական լիազորությունների հետ հարաբերակցվող իմպերատիվ մեթոդներով¹⁰:

Քաղաքի պրետորի, ինչպես նաև այլ քաղաքի՝ պրեզբիտների պրետորի իշխանությունն օգտագործվել է իրենց կողմից ստեղծված ինստիտուտների և նորմերի պաշտպանության նպատակով: Դա, բնականաբար, անհամեմատելի է եղել ոչ այդքան դատական, որքան ռազմական և քաղաքացիական արտոնություններով օժտված պրովինցիայի պրետորի իշխանության հետ¹¹: Նույնիսկ ավելին՝ առաջին և երկրորդ պրետորների իշխանությունները, հետևաբար նաև՝ իրենց կողմից ստեղծված ինստիտուտների և նորմերի ապահովության և պաշտպանության հնարավորությունները, որոշակի չափով սահմանափակվել են նույնիսկ վերջիններիս ձևական իրավասության շրջանակներում: Այդ պրետորների էդիկտների վերաբերյալ գործել են խիստ տարածքային սահմանափակումներ, դրանք ճանաչվել են յուրա-

քանյուր պրետորի համեմատաբար փոքր տարածքում:

Այս կապակցությամբ հռոմայեցի իրավաբան Պողոսը գրել է. «Իր տարածքից դուրս իրավունք հայտարարողին (որոշում կայացնողին) կարելի է անպատժելիորեն չենթարկվել, նույնիսկ այն դեպքում, երբ նա ցանկանա որոշում կայացնել իր իրավասության սահմաններից դուրս»¹²: Բացի այդ՝ պրետորական իշխանության սահմանափակումները տարածվել են որոշակի կատեգորիայի անձանց, մասնավորապես՝ հարազատների և մտերիմների, վրա: Ուլպիանոսի խոսքերի համաձայն՝ իրավասություն ունեցողը չպետք է հայտարարի որևէ իրավունք (կայացնի որոշում) իր, իր կնոջ կամ իրենց երեխաների և ոչ էլ իր կողմից ազատ արձակված ստրուկների կամ իր մոտ գտնվող ուրիշ անձանց գործերով¹³:

Սահմանափակումները վերաբերել են նաև որոշ տեսակի հայցերին, օրինակ՝ այսպես կոչված օժանդակ հայցերին, որոնք, Հուստինիանոսի Ինստիտուցիաների համաձայն՝ չեն տարածվել քաղաքի պրեֆեկտի, պրետորի, պրովինցիայի փոխանորդի, ինչպես նաև խնամակալ նշանակելու իրավունք ունեցող անձանցից ոչ մեկի վրա¹⁴:

Թվարկածների հետ մեկտեղ՝ գոյություն են ունեցել նաև պրետորի իշխանության և իրավասության այլ սահմանափակումներ: Սակայն դրանք չեն համարվել էական պրետորի կողմից հրապարակվող էդիկտների ապահովման, պաշտպանության և վերջիններիս հիման վրա ձևավորվող դատական նախադեպերի համար:

Պրետորական նախադեպային իրավունքի կարևոր առանձնահատկությունն այն է, որ ձևավորվել է պրետորական ակտերի և դատական որոշումների հիման վրա և դրանցում պարունակվող դրույթների կրկնության շնորհիվ: Դրանք ստեղծել են նախադեպեր ոչ միայն դատավարական, այլ նաև՝ նյութական իրավունքի ոլորտում: Դատավարական իրավունքի ո-

⁹ Տե՛ս, Памятники римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 166:

¹⁰ Տե՛ս, Новицкий И. Б., Перетерский И. С., Римское частное право, М., 1999, էջ 8-9:

¹¹ Տե՛ս, Сергеев В. С., Очерки по истории Древнего Рима, М., 1938, էջ 123-125:

¹² Տե՛ս, Памятники римского права, Законы XII таблиц, նշվ. աշխ., էջ 189:

¹³ Տե՛ս, նույն տեղը, էջ 188:

¹⁴ Տե՛ս, Памятники римского права, Институции Юстиниана, Л. Л. Кофанов, В. А. Томсинов, М., 1998, էջ 67:

լրտի նախադեպերից առաջնահերթ աչքի են ընկել արդարությամբ և ողջամտությամբ լուծվող հետևյալ վիճելի հարցերը՝ տարբեր սեռի որդեգրվողներին խնամակալ նշանակելու, պայմանագրային բնույթի հարաբերություններ սահմանելու և, դրանից կախված՝ համապատասխան հայցն ընդունելու կամ մերժելու, քսանհինգ տարին չլրացած հայցվորի նախկին դիրքը վերականգնելու, առաջին հերթի ժառանգներին հաստատելու հարցերը: Ժառանգման կարգի դեպքում կտակների ձևը եղել է պարզեցված, իսկ մահացածի գույքն ստանալու և գույքի տիրապետության թույլտվությունը ստանալու ժամկետները՝ սահմանված: Հաստատված են եղել նաև ժառանգման կարգն և ժառանգների հերթականությունը, ինչպես նաև նմանատիպ այլ հարցեր¹⁵:

Քաղաքացիական իրավունքի ոլորտում պրետորական էդիկտների և դատական որոշումների կողմից ստեղծված նախադեպերի ցանկից առանձնացել են հասկացությանը, բովանդակությանը, ձևին, առաջացման պայմաններին և բնիտարական (պրետորական) սեփականության դրսևորմանը վերաբերող նախադեպերը: Նախադեպային ճանապարհով տվյալ տեսակի սեփականության ստեղծումն ազատել է մի շարք հնացած պայմանականություններից ինչպես ձեռքբերման ճանապարհը, այդպես էլ մի սեփականատիրոջից մյուսին փոխանցելու կարգը: Երբեմն գույքի փոխանցման համար բավական է եղել տիրոջ կամահայտնությունը՝ առանց գույքի փաստացի փոխանցման: Որոշ դեպքերում հենց տիրոջ կամքի շնորհիվ է անհայտ անձին փոխանցվել գույքի նկատմամբ սեփականության իրավունքը: Վերջին դրույթը բացատրվել է նման օրինակով. «Երբ պրետորներն ու կոնսուլները դրամ են նետում ամբոխի մեջ, նրանք չգիտեն, թե ամբոխից ո՞վ որքան կստանա, սակայն նրանք ցանկանում են, որ յուրաքանչյուրին պատկանի այն, ինչը որ ստանա, ուստի դրանով անմիջապես դարձնում են նրան սեփականատեր»¹⁶:

Նախադեպերի տվյալ տեսակի հետ մեկտեղ՝ նյութական իրավունքի ոլորտում ստեղծ-

վել է նաև, մասնավորապես, գույքի տիրապետմանն ու վերականգմանը վերաբերող նախադեպերի զգալի քանակ:

Այս նախադեպերն ստեղծելիս, հատկապես՝ երբ որևէ մեկը վեճ է ձեռնարկել տիրապետման կամ մասնակի տիրապետման կապակցությամբ, պրետորն արձակել է ինտերդիկտներ, այսինքն՝ բանավոր բանաձևեր, որոնց միջոցով հրամայել կամ արգելել է կատարել որևէ գործողություն: Պրետորական իրավունքի նախադեպային բնույթը համակցվել է և լրացվել հռոմեական իրավունքի այլ համակարգերի նմանատիպ բնույթով¹⁷:

Դարերի ընթացքում հայտնի իրավաբանների կողմից կատարված աշխատանքն ունեցել է զգալի նշանակություն: Գործող օրենքների մեկնաբանման միջոցով և իրավունքի կիրառման տարբեր վիճելի հարցերի վերաբերյալ կարծիքի շարադրմամբ նրանք տվել են սեփական պատասխանները, ինչի օգնությամբ փաստացի ստեղծել են նոր իրավական նորմեր և նույնիսկ ինստիտուտներ:

Անդրադառնալով հռոմեական իրավունքի զարգացման և նոր պայմաններին դրա հին դրույթների հարմարեցման ընթացքում իրավաբանների կատարած աշխատանքին՝ դասական հռոմեական իրավունքը, ըստ էության, եղել է իրավաբանների իրավունք: Այդ ժամանակահատվածում, որպես կանոն, մասնավոր իրավունքի բոլոր վեճերը լուծվել են անհրաժեշտ իրավական գիտելիքներով չտիրապետող դատավորների կողմից: Սակայն դատավորները խորհուրդներ են ստացել համապատասխան գիտելիքներ ունեցող իրավաբաններից, ովքեր դատավորների նման պատկանել են հռոմեական ազնվականների խավին: Հանրապետության ժամանակաշրջանում իրավաբանների բարձր սոցիալական և մասնագիտական կարգավիճակը խորհուրդներին փաստացիորեն հաղորդել է իրավաստեղծ ուժ:

Իրավաբանների խորհուրդների հեղինակությունը և իրավաբանական նշանակությունը եղել են անփոխարինելի ողջ հռոմեական կայսրության ընթացքում, երբ կայսրերի անունից

¹⁵ Sên, Машкин Н. А., История Древнего Рима, М., 1948, էջ 354:

¹⁶ Sên, Кофанов Л. Л., Томсинов В. А., նշվ. աշխ., էջ 95, 97:

¹⁷ Sên, Хаусманигер Г., О современном значении римского права, Советское государство и право, 1991, №5, էջ 101-102:

առավել ականավոր իրավաբաններին շնորհվել է իրավաբանական եզրակացություններ անելու իրավունք: Դասական իրավաբան Գայոսը նման եզրակացությունները դիտարկել է որպես հռոմեական իրավունքի բավականին կարևոր աղբյուրներ: Դրանց վերագրվել է օրենքի ուժ¹⁸:

Որպես իրավունքի փաստացի աղբյուրներ՝ դիտարկվել են նաև հեղինակավոր իրավաբանների գործունեության այլ տեսակները՝ իրավաբանական գործողությունների համար բանաձևի մշակմանը, կոնկրետ իրավաբանական հարցերին և դատարաններում գործերի վարմանը վերաբերող նրանց խորհրդատվություններն ու եզրակացությունները: Կոնկրետ խնդիրների լուծումների հիման վրա, որոնցով իրենց դիմել են քաղաքացիներն ու տարբեր պետական մարմինների ներկայացուցիչները, հռոմեական իրավաբանները մշակել են բոլորի

համար ընդհանուր վարքագծի նոր նորմեր, ինչպես նաև վիճելի, իրավաբանորեն և սոցիալապես նշանակալից գործերի քննման համար սկզբունքներ և մոտեցումներ:

Վերը նշված իրավաբանական աշխատանքներն ու եզրակացությունները պահպանվել և շարունակաբար փոխանցվել են իրենց հաջորդողներին՝ նմանատիպ դեպքերում կիրառվելու նպատակով¹⁹:

Փաստացի կատարելով Հին Հռոմի սովորույթների և պատմական հանգամանքների ուժով իրենց վրա դրված մեկնաբանության գործառույթներն ու մասամբ կիրառելով պոզիտիվ իրավունքը՝ հռոմայեցի իրավաբանները, քաղաքի և այլ քաղաքի պրետորի հետ մեկտեղ, գործնականում ստեղծել են հռոմեական հասարակության և պետության համար նոր նախադեպային իրավունք:



¹⁸ Տէս, Кофанов Л. Л., Томсинов В. А., նշվ. աշխ., էջ 361:

¹⁹ Տէս, Хаусманингер Г., նշվ. աշխ., էջ 101:

ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ,
 ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի
 բնական գիտությունների ամբիոնի վարիչ,
 մանկավարժական գիտությունների թեկնածու

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Ֆինանսական իրավունքի ազդեցության ներքո, թեկուզ տարբեր աստիճաններով, իրականանում են գործնականում բոլոր պետական գործառույթները: Անտարակույս, պետք է համաձայնել, որ ֆինանսական իրավունքն ազդեցություն է գործում հասարակության և ամբողջությամբ վերցրած պետության կյանքի կարևորագույն կողմերի վրա: Ֆինանսական իրավունքի նորմերի, պետության և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության իրավական կարգավորման միջոցով ստեղծվում են պետության ու տեղական ինքնակառավարման մարմինների դրամական բյուջետային հիմնադրամները, որոնք ուղղված են հանրային նշանակության խնդիրների ֆինանսավորմանը: Առանց հանրային ֆինանսական (դրամական) հարաբերությունների իրավական կարգավորման՝ հնարավոր չէ երկրի զարգացումը, բացառվում է տնտեսության զարգացման համար անվտանգ պայմանների ստեղծումը, անհնար է դառնում ամբողջ պետության կենսագործունեությունը¹: Այդ պատճառով զարգացման արդի փուլում ֆինանսական իրավունքի առջև ծագում են նոր խնդիրներ:

1. Ֆինանսական իրավունքը պետք է վերախմաստավորի մի շարք ֆինանսա-իրավական ինստիտուտներ և հասկացություններ, դրանք լրացնի փոփոխված պայմաններին համարժեք նոր բովանդակությամբ:

2. Ֆինանսական իրավունքի խնդիրն է համարվում նոր ֆինանսա-իրավական ինստիտուտների ուսումնասիրությունը, ֆինանսա-իրավական նոր հայեցակարգերի ձևավորումը՝ ելնելով ֆինանսական արդի օրենսդրու-

թյունից, ինչպես նաև ֆինանսական օրենքների զարգացման նոր պահանջներից: Այս երկու խնդիրները պետք է լուծվեն ֆինանսական իրավունքի կողմից, ամենից առաջ՝ ընդհանուր տեսական հիմնախնդիրների մշակման ընթացքում²:

Այսօր ֆինանսա-իրավական մտածողության հարացույցը փոխվում է: Խորհրդային ժամանակներում ֆինանսական իրավունքի առարկան կազմող հարաբերությունները ըմբռնվել են հիմնականում որպես կառավարման հարաբերություններ՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Համապատասխանաբար, գիտական հետազոտությունները նույնպես գլխավորապես կենտրոնացած էին ֆինանսական իրավունքի հիմնախնդիրների վրա՝ պետական կառավարման դիրքերից, բյուջետային ոլորտում պետության և նրա մարմինների իրավասությունների, բյուջետային իրավունքի այլ հիմնախնդիրների վրա, որոնք դիտարկվում էին կառավարման հարաբերությունների պրիզմայով: Ներկայումս ֆինանսական իրավահարաբերությունները անհրաժեշտ է գնահատել ոչ միայն կառավարման, այլև հավասար չափով նաև որպես գույքային հարաբերություններ, ինչով պայմանավորված՝ գիտական հետազոտությունների մեծ մասն այսօր նվիրված է ֆինանսա-իրավական կարգավորման գույքային բաղկացուցիչին: Արդյունքում՝ մի քանի գիտնականներ եկել են այն եզրակացության, որ ֆինանսական իրավունքի առարկան անհրաժեշտ է որոշել գույքային և դրա հետ կապված ոչ գույքային հարաբերությունների միջոցով, որոնք առաջանում են պետության և տեղական ինք-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 104 2018

¹ Саттарова Н. А. О некоторых проблемах финансового права на современном этапе / Н. А. Саттарова // Ленинградский юридический журнал.– 2013.– №3 (33). С. 191.
² Финансовое право: учебник / коллектив авторов; под ред. М. В. Карасевой.– 4-е изд., перераб. и доп.– М.: КНОРУС, 2012. с. 82.

նակառավարման մարմինների ֆինանսական գործունեության ընթացքում³:

Կարելի է մատնանշել ֆինանսական իրավունքի ներքոբերյալ հրատապ հիմնախնդիրները, որոնք ենթակա են նոր իմաստավորումների և լուծման նոր մոտեցումների:

1. *Ֆինանսական իրավունքի ընդհանուր տեսական հիմնախնդիրներ*: Հիմնախնդիրների այս շարքին վերաբերում են այնպիսի հարցերի ուսումնասիրություններ, ինչպիսիք են ֆինանսական իրավունքի առարկան, ֆինանսաիրավական նորմերի և հարաբերությունների էությունը և առանձնահատկությունները, պետական ֆինանսական վերահսկողության յուրահատկությունները, ֆինանսա-իրավական պատասխանատվությունը: Գիտնականներն ընդունում են, որ ֆինանսական իրավունքի առարկան կազմում են այն հարաբերությունները, որոնք ծագում են պետության և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեության ընթացքում: Այնուամենայնիվ, այդ հարաբերությունների ստուգանքային մեջ գոյություն ունի որոշակի անհստակություն:

2. *Բյուջեային իրավունքի և պետական ու տեղական բյուջեային իրավունքի, արտաբյուջեային միջոցների հիմնախնդիրներ*: Իրավունքի այս բաժինն ուսումնասիրում է բյուջետային կարգի, բյուջետային գործընթացների, դրամական միջոցների, բյուջետային ամբողջական հիմնադրամների իրավական հիմնախնդիրները:

3. *Պետական եկամուտների և ծախսերի իրավական հիմնախնդիրներ*: Այս բաժինը ներառում է գիտական այն թեմաների համալիրը, որոնք վերաբերում են հարկային իրավունքի տեսության մշակմանը, հարկերի հետազոտությանը և պետության ոչ հարկային եկամուտներին, պետական վարկերի իրավական հիմքերին, ինչպես նաև բյուջե ժամանակին մուտքերի ապահովմանը և բյուջետային հիմնարկների բյուջետային ֆինանսավորմանը, արտաբյուջեային միջոցների իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

4. *Վարկային համակարգի, դրամաշրջանառության, արտարժույթային կարգավորման և վերահսկողության իրավական հիմնախնդիրներ*: Իրավունքի այս բաժինը նպատակ ունի բացահայտել ոլորտում ֆինանսա-իրավական հարաբերությունների առանձնահատկությունները: Օրինակ՝ բանկային իրավունքի անկախությունը: Դեռևս բավարար չափով հետազոտված չէ վարկավորման ոլորտը, հատկապես ֆինանսա-իրավական և քաղաքացիաիրավական հարաբերությունների սահմանազատման խնդիրը⁴:

Այս հիմնախնդիրներից յուրաքանչյուրը թեև ինքնակա է, սակայն սերտորեն կապված է մյուսների հետ:

Նոր ժամանակները ֆինանսական իրավունքի գիտության առջև նոր խնդիրներ են դրել: Այդ միտումը թույլ է տալիս այլ կերպ դիտարկել ֆինանսական իրավունքի առանձին ինստիտուտներ:

Հայաստանի Հանրապետության՝ որպես շուկայական տնտեսություն ունեցող երկրի ժամանակակից զարգացումը օբյեկտիվորեն կապված է ֆինանսական-հարկային հարաբերությունների և դրանց իրավական կարգավորման մեխանիզմների հետ: Պետության և տեղական կառույցների ֆինանսական գործունեության մեխանիզմի մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հարկադրման իրավական կարգավորումը, պետական և բանկային վարկավորումը, դրամաշրջանառությունը, արտարժույթային կարգավորումը և այլն: Ֆինանսական իրավունքի տեսության մեջ պետության ֆինանսական գործունեությունն ընդունված է համարել դրամական միջոցների հավաքագրման պլանային գործընթաց, ֆինանսական հիմնադրամների ստեղծում, դրամական միջոցների ծախսում, ինչը պետությանը թույլ է տալիս արդյունավետորեն իրականացնել իր գործառույթները և լուծել խնդիրները: Առանց ֆինանսական գործունեության անհնարին է պետության ու հասարակության բնականոն կենսագործունեությունը՝ ընդհանրապես, և յուրաքանչյուր

³ Карасева М. В. Современные проблемы построения системы финансового права / М. В. Карасева // Правоведение. – 2006. – №3. С. 95-96.

⁴ Финансовое право: учебник / коллектив авторов; под ред. М. В. Карасевой. – 4-е изд., перераб. и доп. – М.: КНОРУС, 2012. с. 83.

առանձին քաղաքացունը՝ մասնավորապես: Կարևոր է ընդգծել, որ պետության ֆինանսական գործունեությունը կայանում է ֆինանսական իրավունքի սուբյեկտների իրավաչափ վարքի արդյունքում, որն ուղղված է ֆինանսական հարաբերությունների կարգավորման իրավաբանական մեխանիզմների պահպանմանը և կատարելագործմանը: Ֆինանսա-իրավական կարգավորման մեխանիզմների վրա որպես ներգործության հիմնական ուղղություններ հանդես են գալիս իրավաստեղծ, իրավակիրառ գործունեությունը և պետական հարկադրանքը:

Այնուամենայնիվ, չի կարելի պնդել, թե ժամանակակից Հայաստանում ֆինանսական օրենսդրության կիրառման գործընթացում իրավակիրառողները չեն բախվում օրենսդրության կատարելագործման բնագավառում, ինչպես նաև պետական ֆինանսական վերահսկողության ոլորտում առկա այնպիսի հիմնախնդիրների, որոնցով խոչընդոտվում է բյուջետային, հարկային գործունեության հիմնական օղակների մեխանիզմի գործառնությունը:

«Ֆինանսներ», «ֆինանսական ռեսուրսներ», «դրամական հիմնադրամներ» հասկացությունների փոխադարձ սերտ կապը պայմանավորում է երկրի ֆինանսական իրավիճակի և դրամական համակարգի վրա իրավական ազդեցության մեխանիզմի վերլուծությունը, որոնք, իրենց հերթին, նույնպես կրում են ժամանակակից շուկայական տնտեսության բոլոր դրսևորումները, քանի որ տնտեսությունը բնութագրվում է շարունակական գնաճով, որը հանրային վերարտադրության, ինչպես նաև տնտեսական ոչ արդյունավետ քաղաքականության գործընթացում ծնում է բազմաթիվ անհամաչափություններ:

Հարկավոր է ընդունել, որ տնտեսական օրենքները տնտեսվարող սուբյեկտներին պարտադրում են համապատասխան վարքագիծ: Սակայն հատկապես իրավաբանական օրենքները պետք է ապահովեն շուկայի մասնակիցների տնտեսական գործունեության համապատասխանությունը տնտեսական օրենքներին: Հետևաբար, ընդգծելով ներկա ժամանակներում ֆինանսական իրավունքի աճող դերը հասարակության կենսագործունեության և պետության տնտեսական գործունեության մեջ՝ ան-

հրաժեշտ է խոսել իրավական միջոցների նշանակության մասին, որոնցով հանրային ֆինանսների, դրամաշրջանառության, ֆինանսական քաղաքականության բնագավառում կարելի է հասնել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման:

Բացի այդ՝ պետությունն իր ֆինանսական քաղաքականությունն իրականացնում է նաև պետական ֆինանսական վերահսկողության մարմինների համակարգի միջոցով, քանի որ հատկապես այդ համակարգի միջոցով է ապահովվում պետության և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական հիմնադրամների կազմավորման, բաշխման և օգտագործման մեխանիզմների կառավարումը:

Ժամանակակից տնտեսա-իրավական իրողությունների մեջ ֆինանսական վերահսկողության ողջ համակարգի դերի և նշանակության բարձրացումը հանդիսանում է կառավարման և պետական վերահսկողության համակարգերի հիմնական տարրը:

Քննարկվող բոլոր հիմնախնդիրներն իրենց հերթին հրատապ են դարձնում իրավաստեղծ և իրավակիրառ խնդիրների լուծումը ֆինանսական ոլորտում, քանի որ ֆինանսական իրավունքի նորմերով է կարգավորվում պետության ողջ գործունեությունը դրամական միջոցների հիմնադրամների կազմավորման, բաշխման և օգտագործման ուղղությամբ:

Հետևապես, քննարկելով ֆինանսական քաղաքականության արդիականացման հարցերը՝ կարևոր է չմոռանալ ֆինանսա-իրավական քաղաքականության մասին: Կարելի է անվերջ խոսել ճգնաժամից դուրս գալու ուղիների, հետճգնաժամային բացասական դրսևորումների հաղթահարման, տնտեսության արդիականացման և այլնի մասին, բայց եթե ֆինանսական քաղաքականության իրականացման ուղղությունները և մեխանիզմները չեն ամրագրված ֆինանսա-իրավական նորմերում, կամ՝ ամրագրված են, սակայն ի զորու չեն կարգավորելու ծագող իրավահարաբերությունները, ուրեմն ֆինանսական արդյունավետ քաղաքականության մասին խոսք լինել չի կարող:

Հատուկ պետք է ընդգծել, որ իրավունքի նորմերում ամրագրելով ֆինանսական ոլորտում պետության և համայնքային կառույցների խնդիրների իրականացման միջոցները և մե-

խանիզմները՝ օրենսդիրն օժանդակում է իրավական պատասխանատվության կարևորագույն ինստիտուտի գործառնմանը:

Ֆինանսական օրենսդրության մեջ առայսօր բացակայում է ֆինանսական գործընթացի, ֆինանսական իրավախախտումների, ֆինանսական-իրավական պատասխանատվության, ֆինանսական պատժամիջոցների օրենսդրական ամրագրումը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հատկապես ֆինանսա-իրավական քաղաքականությունն է ապահովում ֆինանսական քաղաքականության իրականացումը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի ընդունման ու կիրառման միջոցով, որոնց նորմերը սահմանում են իրավահարաբերության կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվությունը դրանց խախտման դեպքում⁵:

Այս բոլորը մատնանշում են ֆինանսա-իրավական քաղաքականության կարևորագույն դերը պետության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության ապահովման, ինչպես նաև երկրի հեռանկարային զարգացման իրականացման համար:

Անհրաժեշտ է նաև նշել նորմատիվային ակտերում կոնկրետ հակազնաճային գործողությունների, հակազնաճային քաղաքականության մասնակիցների վարքականոնների մասին: Ընդ որում՝ տնտեսագետների կարծիքով՝ գնաճը պահանջում է պետության կողմից իր նկատմամբ մշտական ուշադրություն և կարգավորում: Ահա թե ինչու, եթե նկատի առնենք ուսումնասիրվող գործընթացի բազմագործոնային լինելու հանգամանքը, պետությունը պարտավոր է օգտագործել հակազնաճային իրավական միջոցների մի ամբողջ զինանոց: Դրամական, բյուջետային, հարկային և այլ հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, հակազնաճային գործընթացների իրավական միջոցների օգտագործումը օրենսդիրից պահանջում է հատուկ ճկունու-

թյուն և հարմարվողականություն ընթացող տնտեսական գործընթացների նկատմամբ: Իսկ դա, իր հերթին, պատճառ է դառնում, որ իրավական նորմերում ներառվեն ինֆլացիան զսպող մեխանիզմների ամրագրումներ: Այդպիսի քաղաքականությունը կօժանդակի տնտեսական հաստատուն աճի ապահովմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Այսպիսով՝ իրավական միջոցների օգնությամբ ֆինանսների կառավարման հարաբերությունների կարգավորումն ունի իր առանձնահատկությունները, որոնք ներհատուկ են պետության զարգացման տնտեսական, քաղաքական, մշակութային, ազգային պայմաններին: Սակայն որոշակի հասարակական հարաբերությունների վրա իրավունքի ազդեցության վերլուծության ընթացքում կարևորագույն նշանակություն ունի իրավական ակտի բովանդակության հստակությունը, նրա կառուցվածքի տրամաբանականությունը, իրավական նորմի արդյունավետությունը:

Հետևաբար, արդյունավետ իրավական միջոցներով կարելի է հակադրվել մենաշնորհ ունեցող ձեռնարկատերերի թելադրանքին, հասարակական վերարտադրության անհամամասնություններին, անարդյունավետ տնտեսական քաղաքականությանը՝ ժամանակակից պայմաններում գնաճի այդ գլխավոր պատճառներին, ինչը, իր հերթին, կապահովի արդյունավետ ֆինանսա-իրավական քաղաքականություն:

Այս ամենով հանդերձ՝ հարկ է առանձնացնել ֆինանսական իրավունքի որոշ խնդրահարույց հարցեր, որոնք շոշափում են ֆինանսական իրավունքի գիտական հիմնավորման սկզբունքների ճյուղային առանձնահատկությունները: Ժամանակակից ֆինանսական իրավունքը՝ որպես հայոց իրավունքի ճյուղ, և նրա բազմաթիվ ու բազմազան աղբյուրները գտնվում են զանազան փոփոխությունների և լրացումների շարունակական գործընթացում:

Ֆինանսական իրավունքի՝ որպես իրավունքի ճյուղի, համակարգում ընդունված է առանձնացնել այնպիսի ենթաճյուղեր, ինչպիսին է բյուջետային և հարկային իրավունքը, ինչ-

⁵ См: Химичева Н. И. Финансово-правовая политика как фактор эффективности социально-экономической деятельности государства // Совр. юрид. наука и правоприменение (III. Саратовские правовые чт.): материалы науч. прак. конф., Саратов. 3-4 июня 2010. 283 с.

պես նաև զանազան ինստիտուտներ, օրինակ՝ բանկային գործունեության ֆինանսա-իրավական, դրամաշրջանառության, արտարժույթային կարգավորման և այլ ինստիտուտներ, որոնք սերտորեն փոխկապակցված են քաղաքացիական իրավունքի նորմերի հետ:

Իրենց հերթին՝ ֆինանսական իրավունքի միջնորդային կապերն էությամբ օբյեկտիվ երևույթ են: Ամենից առաջ պետք է ելնել այն բանից, որ միջնորդային կապերն ընդհանրապես կապեր են իրավական, մասնավորապես՝ ֆինանսական իրավունքի և իրավունքի մյուս ճյուղերի նորմերի միջև:

Նշված կապերը որոշում են ֆինանսական իրավունքի տեղը հայրենական իրավունքի համակարգում: Բացի այդ՝ գործող ֆինանսական օրենսդրության մեջ միջնորդային կապերի առկայությունը նպաստում է իրավական կարգավորման բարելավմանը:

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, ֆինանսական իրավունքի միջնորդային կապերի համակարգում փոփոխությունները տեղի են ունենում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման փոփոխությունների արդյունքում, որոնք հասարակության մեջ կազմավորվել են տնտեսության բարեփոխումների, շուկայական հարաբերությունների, ձեռնարկատիրական գործունեության զարգացման պայմաններում:

Այսպես, ֆինանսական, բյուջետային իրավունքի միջնորդային կապերի դրսևորման ակնառու օրինակ է հանդիսանում պետական և համայնքային գնումների ինստիտուտը:

Կարևոր նշանակություն ունեն պետական կարիքների համար ապրանքների մատակարարման ֆինանսավորման ուղղությամբ բյուջետային հարաբերությունները: Խնդրո առարկա հարաբերությունները կարգավորվում են հայկական օրենսդրության մի քանի ճյուղերի միջոցով՝ վարչական, ֆինանսական, քաղաքացիական օրենսդրությամբ՝ ձեռնարկատիրական գործունեության մասին:

Ֆինանսական իրավունքի բազմաթիվ հիմնախնդիրների թվում նշվում է ֆինանսական իրավունքի սկզբունքների բացահայտման և գիտական հիմնավորման խնդիրը:

Այդ սկզբունքների խոր գիտական մշակումն ունի կարևորագույն նշանակություն, քանի որ իրավունքի ճյուղի՝ օրենսդրության մեջ հստակ ձևակերպված և ամրագրված սկզբունքները թույլ են տալիս որոշակիացնել առավել հրատապ ուղղությունները. ա) ֆինանսական իրավունքի տեսության զարգացումը, բ) ֆինանսական իրավունքի կատարելագործումը որպես իրավունքի ճյուղ՝ հաշվի առնելով նրա համակարգվածությունը և փոխգործակցությունը իրավունքի մյուս ճյուղերի հետ. գ) ֆինանսա-իրավական նորմերի կիրառման արդյունավետության բարձրացումը՝ անձի և, ամբողջությամբ վերցրած, հասարակության պահանջմունքներին համապատասխան: Ֆինանսական իրավունքի ընդհանուր, գիտականորեն հիմնավորված սկզբունքները պետք է որպես հիմք ծառայեն ֆինանսական իրավունքի ենթաճյուղերում և ինստիտուտներում նրանց որոշակիացման և զարգացման համար:

Ֆինանսական իրավունքի սկզբունքները կարևոր նշանակություն ունեն տնտեսական, ֆինանսական գործընթացների կարգավորման համակարգում, քանի որ սահմանում են տնտեսական և ֆինանսական գործունեության բոլոր մասնակիցների ընդունելի և ցանկալի մոդելներ:

Ընդ որում՝ ֆինանսական իրավունքի սկզբունքների իրացումը առաջադրում է ինքնուրույն գիտական վերլուծության և դրանց նորմատիվ ամրագրման գործնական կատարելագործման անհրաժեշտությունը, քանի որ այդ սկզբունքների ամրագրմամբ է միայն հնարավոր ապահովել ֆինանսա-իրավական քաղաքականության ամբողջ գործընթացի արդյունավետությունը:

Ֆինանսական իրավունքի սկզբունքները հանդիսանում են ուղղորդիչների յուրօրինակ համակարգ իրավաստեղծ մարմինների համար, այդ պատճառով հատկապես նրանց գիտական հիմնավորումը, իրավունքի նորմերում ամրագրումը և իրականացումը տնտեսական ու ֆինանսական գործունեության պետական կարգավորման որոշակի ուղղությունների համատեքստում թույլ է տալիս վերացնել ժամանակակից իրողություններին ուղեկցող հիմնախնդիրները:

ՀՌԻՓՍԻՄԵ ԽԱՉՍՏՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր, Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԽՄԲԵՐԻ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՍՏ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱՆԻՇԻ

Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման համար կարևոր է անչափահասների հանցավոր խմբերի տիպերի մանրամասն ուսումնասիրությունը:

Հոդվածում ներկայացվում է անչափահասների հանցավոր խմբերի տիպաբանությունն ըստ կայունության հատկանիշի: Հետազոտության շրջանակում քննարկվում է կայունություն հասկացությունը, որի հիման վրա էլ կառուցվում է վերլուծությունը՝ դասակարգելով անչափահասների հանցավոր խմբերը երեք տիպի՝ անկայուն, կայուն և կազմակերպված:

Բանալի բառեր. անչափահասների հանցավոր խմբեր, տիպաբանություն, հանցավոր գործունեություն, կայունության հատկանիշ, հանրային վտանգավորություն:

РИПСИМЕ ХАЧАТРЯН

Старший преподаватель кафедры уголовного права и криминологии факультета правоведения Академии Образовательного комплекса Полиции РА, майор полиции. соискатель кафедры уголовного права ЕГУ

ТИПОЛОГИЯ ПРЕСТУПНЫХ ГРУПП НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ ПО ПРИЗНАКУ УСТОЙЧИВОСТИ

Детальное исследование преступных групп несовершеннолетних имеет важное значение для предотвращения преступности среди несовершеннолетних.

В статье представлена типология групп несовершеннолетних по признаку устойчивости.

В рамках исследования обсуждается понятие устойчивости, на основе которого строится анализ, позволяющий классифицировать преступные группы несовершеннолетних по трём типам: неустойчивые, стабильные и организованные.

Ключевые слова: преступные группы несовершеннолетних, типология, преступное деяние, признак устойчивости, общественная опасность

HRIPSIME KHACHATRYAN

Senior lecturer at Police Academy of Police Educational Complex of RA, Department of Law, Chair of Criminal Law and Criminology, Police Major

THE TYPOLOGY OF JUVENILE CRIMINAL GROUPS BY THE FEATURE OF STABILITY

The detailed study of juvenile criminal groups' types is important for group juvenile criminality prevention. The typology of juvenile criminal groups by the feature of stability has been presented in the article. The notion of stability has been discussed in the article. Based on it an analysis has been performed by proposing to classify juvenile criminal groups into three types - unstable, stable and organized.

Keywords: juvenile criminal groups, typology, criminal activity, feature of stability, public danger.

* * *

ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության փորձաքրեագիտական վարչության քրեագիտական հետազոտությունների բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, իրավագիտության թեկնածու

ԿՈՂՈՊՈՒՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղինակի կողմից քննարկման առարկա են դարձել կողոպուտի՝ որպես սեփականության դեմ ուղղված երկօբյեկտ հանցագործության, քրեաիրավական էությանն ու որակման առանձնահատկություններին վերաբերող հարցերը: Հոդվածում որոշակի քննարկման են արժանացել ինչպես իրավաբանական գրականության մեջ նշված հանցա-

կազմի որակման խնդիրներին վերաբերող տեսակետները, տարբեր հեղինակների արտահայտած կարծիքներն ու վերլուծությունները, այնպես էլ քննարկվող խնդրի վերաբերյալ ՀՀ վճարելի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքով՝ ներկայացվել են առաջարկություններ, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ՀՀ քրեական օրենսգրքի բարեփոխումների և կողոպուտի գործերով հանցագործությունների որակման համար:

Բանալի բառեր. կողոպուտ, կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն, ավազակություն, գողություն, հանցակազմ, գույքի բացահայտ հափշտակություն:

АРАИК АСЛАНЯН

Заместитель начальника отдела криминалистических исследований
Экспертно-криминалистического управления Полиции РА,
подполковник полиции, кандидат юридических наук

**НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ УГОЛОВНО-ПРАВОВОЙ КВАЛИФИКАЦИИ ХИЩЕНИЯ
ЧУЖОГО ИМУЩЕСТВА ПУТЕМ ГРАБЕЖА**

Автором были рассмотрены вопросы, касающиеся особенностей уголовно-правовой квалификации и сущности грабежа как двухобъектного преступления, направленного на собственность. В статье обсуждаются как точки зрения, касающиеся проблем определения состава преступления, указанного в правовой литературе, мнения и анализы разных авторов, так и правовые позиции Кассационного Суда РА, относительно рассматриваемого вопроса.

В результате проведенных исследований со стороны автора были сделаны предложения, которые могут иметь важное значение для реформ Уголовного кодекса РА и квалификации преступлений по делам грабежа.

Ключевые слова: грабеж, насилие, не опасное для жизни и здоровья, разбой, воровство, состав преступления, открытое хищение чужого имущества.

ARAYIK ASLANYAN

Candidate of Jurisprudence, Police Colonel
and Deputy Head of the Subdivision of Criminal Scientific Researches
of the Expert- Criminal Department of the RA Police

**CERTAIN PECULIARITIES OF CRIMINAL AND LEGAL QUALIFICATION OF THE PROPERTY THEFT
THROUGH ROBBERY**

Questions concerning to the criminal and legal essence and qualification of the peculiarities of robbery as an two objects crime against the property have become subject for discussion by the author. In the Article were discussed views concerning to the elements of crime's issues of the qualification mentioned in the legal literature expressed opinions and analysis by different authors as well as expressed legal positions by the RA Court of Cassation on the issue under discussion.

In the result of study made by the author were represented suggestions which may be important for qualification of the crimes in the cases of reforms and robbery of the RA Criminal Code.

Keywords: robbery, violence dangerous for life or health, banditry, theft, elements of crime, overt theft of property.

* * *

ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՋՅԱՆ

Իրավագիտության թեկնածու, փաստաբան

**ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՐԵՆԱՅԻՆ ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ
ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սույն հոդվածը նվիրված է երեխային պոռնկության ներգրավելու հանցագործության որակման և տվյալ արարքի համար պատասխանատվություն սահմանող նորմի կատարելագործմանն առնչվող հարցերին: Այս հոդվածում առաջարկվում է քրեական օրենսգրքի հոդված 166-ի դիսպոզիցիայում օգտագործված երեխա բառը փոխարինել անչափահաս եզրույթով: Հեղինակի կարծիքով՝ քննարկվող արարքը պետք է համարել ավարտված այն պահից, երբ տուժողն սկսում է զբաղվել մարմնավաճառությամբ, այսինքն՝ այն պահից, երբ սպասարկում է առաջին հաճախորդին: Բացի այդ՝ առաջարկվում է վերանայել հոդված 166-ի սանկցիան:

Բանալի բառեր. երեխային ներգրավել, մարմնավաճառություն, հանցակազմ, քրեական իրավունք, որակել, դիսպոզիցիա, հոդված:

ГУРГЕН КОТАНДЖЯН

Кандидат юридических наук, адвокат

НЕКОТОРЫЕ СООБРАЖЕНИЯ ОТНОСИТЕЛЬНО СОСТАВА ВОВЛЕЧЕНИЯ РЕБЕНКА В ПРОСТИТУЦИЮ

Рассматриваемая статья посвящена вопросам квалификации состава вовлечения ребенка в проституцию и совершенствованию правовой нормы, которая предусматривает ответственность за данное деяние. В рамках этой статьи предлагается заменить употребляемый в диспозиции обсуждаемой статьи слово ребенок термином несовершеннолетний. По мнению автора, рассматриваемое преступление нужно считать оконченным, когда потерпевший начинает заниматься проституцией, то есть тот момент, когда потерпевший обслуживает первого клиента. Автор также предлагает изменить санкции статьи 166 УК РА.

Ключевые слова. вовлечение ребенка, проституция, состав преступления, уголовное право, квалификация, диспозиция, статья.

GURGEN KOTANJYAN

PhD in law, advocate

SOME CONSIDERATIONS CONCERNING THE COMPOSITION OF CRIME OF CHILD INVOLVEMENT IN PROSTITUTION

The article is devoted to the qualification of the composition of the involvement of a minor in prostitution and the improvement of the legal norm, which provides responsibility for this act. Within the framework of this article, it is proposed to replace the word child used in the disposition of the relevant article with the term minor. According to the author the crime in question must be regarded as completed when the victim begins activities in prostitution, that is the moment when the victim serves the first client. The author also offers to consider the sanctions of Article 166 of the Criminal Code of Armenia.

Keywords: involvement of minor, prostitution, composition of crime, criminal law, qualification, disposition, article.

* * *

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի ասպիրանտ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿ

Սահմանադրական բարեփոխումների ժամանակակից իրողություններում սահմանադրական մշտադիտարկման ինստիտուտի կայացումը կարևոր նշանակություն ունի սահմանադրականության բացերը բացահայտելու, սահմանադրական նորմերի անմիջական գործողությունն ապահովելու համար: Սույն հոդվածում հատուկ շեշտադրվում է սահմանադրության արդյունավետության գնահատման միջոցով սահմանադրական մշտադիտարկման իրականացումը:

Բանալի բառեր. սահմանադրություն, սահմանադրական մշտադիտարկում, սահմանադրության արդյունավետություն, գնահատում, ինդիկատոր:

АРМАН СТЕПАНИЯ

Аспирант Российско-Армянского университета

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ КОНСТИТУЦИИ КАК ВИД КОНСТИТУЦИОННОГО МОНИТОРИНГА

“Конституционное право; конституционный судебный процесс; муниципальное право”.

Создание института конституционного мониторинга в современных реалиях конституционных реформ имеет большое значение для выявления конституционных пробелов и обеспечения прямого функционирования конституционных норм. Особое внимание уделяется конституционному мониторингу посредством оценки эффективности конституции.

Ключевые слова: конституция, конституционный мониторинг, эффективность конституции, оценка, индикатор

ARMAN STEPANYAN

PhD student, Russian-Armenian university

EFFICIENCY ASSESSMENT OF THE CONSTITUTION AS TYPE OF CONSTITUTIONAL MONITORING

The establishment of the Institute of constitutional monitoring in the modern reality of the constitutional reforms is of great importance to identify the constitutional gaps and assure the direct functioning of constitutional norms. Particular emphasis is placed on constitutional monitoring through effectiveness assessment of the constitution.

Keywords: constitution, constitutional monitoring, constitution efficiency, assessment, indicator.

* * *

ԿԱՐԵՆ ՂՈՆՋԱԿՈՒԼՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՌԴ Նախագահին կից պետական ծառայության և ժողովրդական տնտեսության Ռուսաստանի ակադեմիայի պետական-իրավական առարկաների ամբիոնի դոցենտ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողական ծառայության առաջատար մասնագետ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի իրավագիտություն և քաղաքագիտություն ամբիոնի ասիստենտ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Հոդվածում վերլուծվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության օրենսդրական գործունեության ինստիտուտը: Հետազոտության շրջանակներում առաջարկվում են տեսական եւ գործնական առաջարկություններ՝ օրենսդրության համակարգում Կառավարության մասնակցության կարգը բարելավելու նպատակով:

Բանալի բառեր. Կառավարություն, Պետական Դումա, օրենսդրական գործունեություն, համեմատական իրավական վերլուծություն, Ռուսաստանի Դաշնություն, Հայաստանի Հանրապետություն, բարելավման ուղիներ, խնդիրներ.

КАРЕН КОНДЖАКУЛЯН

Кандидат юридических наук, доцент кафедры государственно-правовых дисциплин ИГСУ РАНХиГС

АРШАК АРУТЮНЯН

Кандидат юридических наук, ассистент кафедры правоведения и политологии права Армянского государственного экономического университета

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПРАВИТЕЛЬСТВА В ЗАКОНОТВОРЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ)

В статье проведен анализ института законодательной деятельности Правительства Российской Федерации. В рамках исследования предложены теоретические и практические предложения в целях усовершенствования процедур участия Правительства в системе законотворческой деятельности.

Ключевые слова: Правительство, Государственная Дума, законотворческая деятельность, сравнительно-правовой анализ, Российская Федерация, Республика Армения, пути совершенствования, проблемы.

KAREN KONDZHAKULYAN

PhD, Assistant Professor of the Department for of state and legal disciplines of Institute of public administration and civil service (IPAM)

ARSHAK HARUTYUNYAN

candidate of legal Sciences, teaching assistant of the Chair of Political Science and Law, Armenian state University of economics (ASUE)

THE GOVERNMENT IN THE SYSTEM OF LEGISLATURE (A COMPARATIVE LEGAL STUDY)

In the article the analysis of legislative activities of the Government of the Russian Federation. The study offered theoretical and practical proposals to improve procedures of Government involvement in the system of legislative activity.

Keywords: the government, State Duma, legislative activities, comparative legal analysis, Russian Federation, Republic of Armenia, ways to improve, issues.

ՋԱՐԻՆԵ ԱԶԻԶՅԱՆ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ

Բիզնես գործընթացների իրավական սպասարկման բաժնի պետ,
սպառողների շահերի պաշտպանության պատասխանատու,
Հանրային խորհրդի պետսիրավական հանձնաժողովի անդամ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՓՈԹԵՔԻ ԱՐԳԵԼՔԸ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

Հոդվածը վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսացող հողամասի հիփոթեքի սահմանափակմանը, որը խոչընդոտում է քաղաքացիներին իրացնել իրենց իրավունքները՝ սահմանափակելով վերջիններիս, որպես հիփոթեքի առարկա, գրավադրել իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասը:

Հոդվածում վեր է հանվել կարգավորման սահմանման նպատակը և այն իրավական ու գործնական խնդիրները, որոնք առաջանում են այդ կարգավորման առկայության պարագայում: Հոդվածում ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը և այն փոփոխությունները, որոնց կատարման դեպքում քաղաքացիները կկարողանան ազատորեն տնօրինել իրենց սեփականությունը՝ ֆինանսական կազմակերպություններում գրավադրելու միջոցով, ինչն էլ, իր հերթին, կնպաստի ինչպես ֆինանսավորման ստացման ընթացքում քաղաքացիների կողմից կատարվող ծախսերի նվազեցմանը, այնպես էլ ֆինանսական կազմակերպությունների կողմից ֆինանսավորման տրամադրման գործընթացի բարելավմանը:

Բանալի բառեր. ընդհանուր համատեղ սեփականություն, ընդհանուր բաժնային սեփականություն, հողամաս, գրավադրել, հիփոթեք, ֆինանսական կազմակերպություն, գրավոր համաձայնություն:

ЗАРИНЕ АЗИЗЯН

«АКБА-КРЕДИТ АГРИКОЛЬ БАНК» ЗАО

Начальник юридического отдела бизнес-процессов,
ответственный по защите потребителей,
член государственно-правового комитета общественного Совета

**ЗАПРЕТ ИПОТЕКИ ЗЕМЕЛЬНОГО УЧАСТКА, ЯВЛЯЮЩЕГОСЯ СОВМЕСТНОЙ СОБСТВЕННОСТЬЮ
(НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ АНАЛИЗ)**

Статья посвящена запрету ипотеки земельного участка, являющегося совместной собственностью, которая предусмотрена в Гражданском кодексе РА, что препятствует гражданам реализовать их права, ограничивая их, в качестве предмета ипотеки, заложить принадлежащий им земельный участок.

В статье излагается цель установления регулирования и те правовые и практические вопросы, которые возникают в случае такого урегулирования.

В статье излагается необходимость внесения поправок и таких изменений в законодательство, в случае которых граждане смогут свободно распоряжаться своим имуществом, закладывая в финансовых учреждениях, что, в свою очередь, будет способствовать сокращению расходов граждан при получении финансирования, а также улучшению процесса финансирования финансовых учреждений.

Ключевые слова: совместная собственность, долевая собственность, земельный участок, заложить, ипотека, финансовое учреждение, письменное согласие.

ZARINE AZIZYAN

“ACBA-CREDIT AGRICOLE BANK” CJSC

Head of Business Processes Legal Service Division,
Responsible for consumers’ rights protection,
Member of the Public Council State and Legal Committee

**PROHIBITION OF LAND MORTGAGE FOR GENERAL JOINT OWNERSHIP
(SCIENTIFIC-PRACTICAL ANALYSIS)**

The article refers to the current legal regulation under the Civil Code of RA that restricts the right of land mortgage placed under the general joint ownership, which prevents the citizens from exercising their rights, restricting their right to place their land as a subject of mortgage.

The article outlines the purpose of the regulation and the legal and practical issues that arise in the scope of such regulation. The article outlines the need for legislative amendments and those amendments by implementing which citizens can freely dispose their property by pledging them in financial institutions, which, in its turn, will contribute to reducing the expenses of citizens during financing, as well as it will boost financing process of financial institutions.

Keywords: General joint ownership, general share ownership, land, to pledge, land mortgage, financial institution, written consent.

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի
Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի
հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության
մշակման վարչության պետի տեղակալ

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԱՉԱՏՎԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ,
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ
ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

Հոդվածում վերլուծվել է անհաղթահարելի ուժի առկայության և սպառողի կողմից ապրանքի օգտագործման, պահման, փոխադրման կանոնների խախտման դեպքում վնաս պատճառած անձի՝ պատասխանատվությունից ազատվելու հարցը: Վերլուծության է ենթարկվել ապրանքի օգտագործման, պահման, փոխադրման կանոնների խախտման դեպքում տուժողի մեղքի դրսևորման առանձնահատկությունների հարցը: Քննարկվել է վնաս պատճառած անձի և տուժողի միջև ապացուցման բեռի համաչափ բաշխման խնդիրը:

Բանալի բառեր. ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, պատասխանատվությունից ազատվելու հիմքեր, անհաղթահարելի ուժ, տուժողի մեղք, ապացուցման բեռ:

ШУШАНИК ГУКАСЯН

Аспирант кафедры гражданского права
юридического факультета Ереванского государственного университета,
заместитель начальника отдела развития антикоррупционной
и пенитенциарной политики аппарата Министерства Юстиции РА

**ОСНОВАНИЯ ОСВОБОЖДЕНИЯ ОТ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ВРЕД, ПРИЧИНЕННЫЙ
ВСЛЕДСТВИЕ НЕДОСТАТКОВ ТОВАРОВ, РАБОТ И УСЛУГ**

В статье анализируется вопрос об освобождении от ответственности лица, причинившего вред в случае непреодолимой силы и в случае нарушения правил использования, хранения и транспортировки продуктов потребителем. Проанализированы особенности вины потерпевшего в случае нарушения правил использования, хранения и транспортировки продуктов. Обсуждается проблема балансирования бремени доказывания между жертвой и ответственной стороной.

Ключевые слова: продукты, работы, услуги, основания освобождения от ответственности, непреодолимая сила, вина жертвы, бремя доказывания.

SHUSHANIK GHUKASYAN

PhD student of the Chair of Civil Law of the Faculty of Law of the Yerevan State University
Deputy Head of Anti-Corruption and Penitentiary Policy Development Department
Republic of Armenia, Ministry of Justice

**GROUND OF EXEMPTION FROM LIABILITY FOR DAMAGE CAUSED BY DEFECTS IN PRODUCTS,
WORKS AND SERVICES**

The article analyzed the issue of exemption from liability of person who caused the damage in case of insurmountable force and in case of violation of the rules on product use, storage and transportation by consumer. The peculiarities of victim's fault in case of violation of the rules of product use, storage and transportation were analysed. The problem of balancing the burden of proof between the victim and the liable party was discussed.

Keywords: products, works, services, grounds of exemption from liability, insurmountable force, victim's fault, burden of proof.

ԿԱՐԵՆ ՀԱՎՈՐՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական,
ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**«ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՂԲՈՒՆՔԸ»՝ ՈՐՊԵՍ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐ**

Սույն հոդվածը նվիրված է «հոգատարության սկզբունքի»՝ որպես մարդու պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի օրգանական բաղադրիչի, էության և առանձնահատկությունների բացահայտմանը: Հեղինակը բացահայտում է նեղ իմաստով «հոգատարության սկզբունքի» բովանդակությունը, որը հանգում է գործի փաստական հանգամանքները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կերպով պարզելու՝ վարչական մարմնի պարտականությանը: Բացի այդ՝ հոդվածում անդրադարձ է կատարվում լայն իմաստով «հոգատարության սկզբունքի» մեջ ընդգրկվող «ջանադրության» և «մտահոգության» սկզբունքների բնորոշ գծերին, և քննարկվում են դրանց կիրառության խնդրահարույց կողմերը:

Բանալի բառեր. մարդու հիմնարար իրավունքներ, պատշաճ վարչարարություն, «հոգատարության սկզբունք», «ջանադրության սկզբունք», «մտահոգության սկզբունք», վարչական վարույթ, վարչական ակտ, վարչական մարմիններ:

KAREN AKOPYAN

Советник председателя Кассационного суда РА,
аспирант кафедры конституционного права ЕГУ

«ПРИНЦИП ЗАБОТЫ», КАК ЭЛЕМЕНТ ПРАВА НА ХОРОШУЮ АДМИНИСТРАЦИЮ

Данная научная статья посвящена исследованию сущности и особенностей «принципа заботы», как органического компонента конституционного права человека на хорошую администрацию. Автор раскрывает содержание «принципа заботы» в узком смысле, что сводится к всестороннему, полному и объективному исследованию обстоятельств дела со стороны административного органа. Кроме того, в статье рассматриваются характеристики «принципа усердия» и «принципа озабоченности», включенные в содержание «принципа заботы» в широком смысле, и обсуждаются проблематичные аспекты их применения в практике.

Ключевые слова: фундаментальные права человека, хорошая администрация, «принцип заботы», «принцип усердия», «принцип озабоченности», административные процедуры, административный акт, административные органы.

KAREN HAKOBYAN

Counsellor of the Chairman of the Court of Cassation of RA,
Post-graduate student of the Chair of Constitutional law, YSU

“THE PRINCIPLE OF CARE”, AS A COMPONENT OF THE RIGHT TO GOOD ADMINISTRATION

This article is devoted to the research of the essence and peculiarities of “the principle of care”, as an organic component of the constitutional right to good administration. The author reveals the content of “the principle of care” in a narrow sense, which leads to a comprehensive, complete and objective investigation of the circumstances of the case by the administrative body. In addition, the author focuses on the characteristics of “the principle of diligence” and “the principle of solicitude”, which are included in the content of “the principle of care” in a broad sense, and discusses the problematic aspects of their application in practice.

Keywords: fundamental rights, good administration, “the principle of care”, “the principle of diligence”, “the principle of solicitude”, administrative proceedings, administrative act, administrative authorities.

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ
 ՀՀ ԿԱ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի իրավաբան,
 արտոնագրված հաշտարար

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածը նվիրված է հարկային վարչարարության կատարելագործման հիմնական ուղղություններին, այն է՝ հարկային համակարգում տեխնիկական-տեղեկատվական մեքենայացման (ավտոմատացման) գործընթացին, Հայաստանի Հանրապետությունում արձանագրված դրա փուլերին, «Հարկատու-1», «Հարկատու-2» և «Հարկատու-3» տեղեկատվական համակարգերին, վերջինիս բաղադրատարրերին (ենթահամակարգերին), ՀՀ հարկային տեղեկատվական ռեսուրսների կառուցվածքի տարրերին, տեղեկատվական-վերլուծական համակարգի խնդրահարույց հարցերին, էլեկտրոնային հաշվառում հասկացությանը, ներկայացման կարգին և այլն:

Բանալի բառեր. հարկային համակարգ, հարկային վարչարարություն, տեղեկատվական համակարգ, էլեկտրոնային ծանուցում, հարկային հաշվետվություն, հաշվարկային փաստաթուղթ, հայտարարագիր, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն:

TAMARA GRIGORYAN

Соискатель Академии Государственного Управления РА Юрист государственной некоммерческой организации «Учебный центр» Комитета Государственных Доходов при Правительстве РА, сертифицированный медиатор

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ УЛУЧШЕНИЯ НАЛОГОВОЙ АДМИНИСТРАЦИИ

Данная статья посвящена основным тенденциям совершенствования налогового администрирования, то есть процессу технической-информационной механизации (автоматизации) в налоговой системе, его этапам, зарегистрированным в Республике Армения, информационным системам «Налогоплательщик-1», «Налогоплательщик -2» и «Налогоплательщик -3», его компонентам (подсистемам), элементам структуры налоговых информационных ресурсов Армении, проблемным вопросам информационно-аналитической системы, концепции электронного учета, порядка представления и т. д.

Ключевые слова: налоговая система, налоговое администрирование, информационная система, электронное уведомление, налоговая отчетность, расчетный документ, декларация, электронный документооборот.

TAMARA GRIGORYAN

Applicant of Public Administration Academy of RA Lawyer of “Educational Center” state non-profit organization of State Revenue Committee under the Government of RA Certified Mediator

MAIN DIRECTIONS OF TAX ADMINISTRATION IMPROVEMENT

This article is devoted to the main trends of tax administration improvement, i.e. to the technical-information mechanization (automation) process, its stages reported in Republic of Armenia, “Taxpayer-1”, “Taxpayer-2” and “Taxpayer-3” information systems, its components (subsystems), the elements of the structure of tax information resources of RA, problematic issues of information-analytical system, the concept of electronic accounting, order of submission, etc.

Keywords: tax system, tax administration, information system, electronic notification, tax reporting, billing document, declaration, electronic document circulation.

ԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՊՐԵՏՈՐԱԿԱՆ ԷԴԻԿՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Սույն գիտական հոդվածում ներկայացված են պրետորական էդիկտների նշանակությունը, կայունությունը, հաջորդականությունն ու հետևանքները: Նկարագրված են էդիկտների որոշ սահմանափակումներ:

Միաժամանակ բնութագրված են պրետորական էդիկտների ինքնաձևությունն ու առանձնահատկությունները:

Մանրամասն ուսումնասիրված են պրետորական էդիկտների բովանդակությունը, այդտեղ պարունակվող նյութական և դատավարական նորմերի կարևոր կառուցվածքային և գործառության առանձնահատկությունները: Հատուկ նկարագրված են որոշ մասնավոր գործեր:

Բանալի բառեր. պրետորի ինստիտուտ, պրետորական էդիկտ, Գայուսի Ինստիտուցիաներ, հռոմեական իրավունքի աղբյուր, հայցային սահմանափակումներ:

АННА АКОБЯН

Соискатель НАН РА, института философии, социологии и права

ЗНАЧЕНИЕ ПРЕТОРСКОГО ЭДИКТА, ОСОБЕННОСТИ В ОБЛАСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

В данной научной статье представлены значение, устойчивость, последовательность и последствия преторских эдиктов. Описываются некоторые ограничения эдиктов.

Одновременно охарактеризованы своеобразность и особенности преторских эдиктов.

Детально рассматриваются содержание преторских эдиктов, важные структурные и функциональные особенности содержащихся в них материальных и процессуальных норм. Специально описаны некоторые частные случаи.

Ключевые слова: институт претора, преторский эдикт, Институции Гая, источник римского права, исковые ограничения.

ANNA HAKOBYAN

An applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

THE SIGNIFICANCE OF THE PRAETORIAN EDICT, THE FEATURES IN THE FIELD OF LEGAL REGULATION

The following scientific article presents the significance, the stability, the sequence and the consequences of praetorian edicts. Some edicts' restrictions are described.

In the mean time, the identity and features of praetorian edicts are characterized.

The content of praetorian edicts, the important structural and functional features of material and procedural norms contained there are examined in detail. Some specific cases are described specifically.

Keywords: the Institute of praetor, praetorian edict, the Institutes of Gaius, the source of Roman law, claim restrictions.

ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ,
 ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի
 բնական գիտությունների ամբիոնի վարիչ,
 մանկավարժական գիտությունների թեկնածու

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆՂԻՐՆԵՐԸ

Հոդվածում արծարծվում են ֆինանսական իրավունքի մի քանի արդիական հիմնախնդիրներ՝ դիտարկված մասնավորապես հայոց ֆինանսական օրենսդրության ֆոնին և ՀՀ տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում: Բազմաթիվ հիմնախնդիրների թվում նշվում է ֆինանսական իրավունքի սկզբունքների բացահայտման և գիտական հիմնավորման խնդիրը:

Բանալի բառեր. ֆինանսներ, ֆինանսական իրավունք, ֆինանսական գործունեություն, բյուջետային իրավունք, իրավական կարգավորում, գնաճ, ֆինանսա-իրավական քաղաքականություն, ֆինանսական իրավունքի ինստիտուտներ:

ГРИГОР НЕРСИСЯН

Главный специалист 2-го управления Аудиторской палаты РА,
 заведующий кафедрой естественных наук Государственной академии
 кризисного управления МЧС РА, кандидат педагогических наук

АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ФИНАНСОВОГО ПРАВА

В статье рассматриваются несколько актуальных вопросов финансового права на фоне финансового законодательства Армении и в современных условиях развития экономики Армении. Среди многих вопросов отмечается вопрос раскрытия и научного обоснования принципов финансового права.

Ключевые слова: финансы, финансовое право, финансовая деятельность, бюджетное право, правовое регулирование, инфляция, финансово-правовая политика, институты финансового права.

GRIGOR NERSISYAN

The chief specialist of the 2-nd board of the Audit chamber of R.A.
 The chairman of natural sciences of the Crises management State academy.
 Candidate of pedagogical sciences

MODERN ISSUES OF FINANCIAL LAW

The article focuses on several issues of financial law in particular, in the light of the Armenian financial legislation and the modern economic conditions of Armenia. Among many of the issues is mentioned the issues of disclosure of financial law principles and scientific justification.

Keywords: finance, financial law, financial performance, budgetary law, legal regulation, inflation, financial and legal policy, financial institutions law.

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆՂԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: